

ՎԱՅԱՆ ԹՈԹՈՎԵՆՑ

ՀՐԿԻՋՎԱԾ ԹՂԹԵՐ

ՊԵՏՀՐԱՏ

891.99

28050.

P-71

Рисунки, ч.

Экспериментальный:

10.704.

17/1

857

2/7

356



891.99

Թ

ՎԱՅԱՆ ԹՈԹՈՎԵՆՑ

ԱՅԹԻՎԱԿԱՆ Կ 1961

ՀՐԿԻԶՎԱԾ ԹՂԹԵՐ

23050

7 5448



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՑԵՐԵՎԱՆ 1934

Պատ. խմբագիր՝ Հար. Մկրտչյան
Տեխ. խմբագիր՝ Տ. Խաչվանճյան
Շապիկը՝ Հովհ. Շավարշի
Սրբագրիչ՝ Պ. Աթայան

Հանձնված է արտադրության 25 մայիսի 1934 թ.

Ստորագրված է տպագրության 30 սեպտեմբերի 1934 թ.

Գլավիտ 8618, հրատ. 3051, պատվեր 1082, տիրաժ 5000

Պետերատի տպարան, Յերեվան



Նա բարձրացավ քաղաքների փողոցներից
և գյուղական դաշտերից՝ ինչպես վարարուն
հեղեղը դարավոր յերաշտից հետո:

Նա բարձրացավ, յերբ ժողովրդական
մասսաները տկլոր եյին, քաղցած և մռայլ:

Յերկրի ամենատիպական Ֆիզուրան վոր-
րըն՝ եր՝ բազմազույն և բազմահազար:

Առունները չեյին յերգում և խաղողի վող-
կույթները կախվում եյին միայն հին մա-
տուռների քարերի վրա՝ անշող և անարյուն:

Սրածուխյուն եր հին այս յերկրի սահ-
մանների վրա և սահմաններից ներս:

Թռչունների յերամները, ահաբեկված
յերկրի մթին յերկնակամարից, փախել եյին
դեպի ամելի լուսավոր յերկրներ:

Մուրացկանությունը դարձել եր որինա-
կան և ձեռքերը կառկավռում եյին անդողդոջ
և համառ:

Թնդաց «ինտերնացիոնալը»: Ժամանակը
հանկարծ. չրջվեց, ցեխի մեջ խրված անիվ-
ներն սկսեցին դառնալ կատաղի թափով,
գյուղացու ճակատի վրա փայլեց քրտինքի
կաթիլը, ինչպես աստղը մռայլ յերկնքում,

փոկերը շարժվեցին և չչակաները ձայնեցին լուսաբացը:

Մինխտորի գլխարկը, կղերականի վեղարը և մաուզերիստի փափախը թռան յերկաթյա հողմից և վողջ յերկիրը վրնջեց զիւ և արեային թարմությամբ:

Ա

Պրոֆեսոր Մելիք-Անդրեասյանը Հայաստանի Նոյեմբերյան հեղաշրջումից առանձնապէս չտուժեց: Նոր իշխանությունը վստփհեց նրան Բարձրագույն Ուսումնական Հիմնարկության մեջ Արեւմտյան Յեմբրոպայի պատմության ամբիոնը. նա նշանակվեց հեղաշրջումից մի քանի ուր հետո կազմակերպված գիտական խորհրդի անդամ, մի պատիվ, վոր նուխկին իշխանությունը զլացել եր պրոֆեսոր Մելիք-Անդրեասյանին: Հակառակ մայրաքաղաքի բնակարանային սուր ճգնաժամին, նրան թողնվեց չորս սենյակով և մի խոհանոցով բնակարանը, վորի մեջ բնակում եյին միայն ինքը՝ պրոֆ. Մելիք-Անդրեասյանը և կինը՝ Յելենա Բեգլարովնան: Վոչ մի անգամ հարցաքննության չենթարկվեց հակահեղափոխական, սպիտակ եմիգրանտ դարձած իր յեղբոր համար, վորի կինը և զավակը մնացել եյին նրա խնամքի տակ:

Բայց հեղափոխությունը պրոֆ. Մելիք-Անդրեասյանի քիմքին դուր չեկավ, ինչ վոր

անախորժ, ոտարոտի զգացում համակեց նը-
րան առաջին իսկ որից:

Պրոֆ. Մելիք-Անդրեասյանը հազիվ քա-
ռասունն անց եր, յերբ հեղաշրջումը կատար-
վեց: Բարձրահասակ եր նա, քունքերի մազե-
րի մեջ արդեն սպիտակն սկսել եր մուտք գոր-
ծել, ծնոտի ծայրում սրածայր մի միջուկ՝
բոլորովին սև, խոշոր, սև աչքերով և բամբ
ձայնով: Նրա դեմքի վրա, սակայն, չեյին
պակասում տանջանքի դժեր, վորոնք պարզո-
րեն արտահայտում եյին իր ուսանողական
տարիների դժվարությունները: Այդ դժվա-
րությունները ջնջել եյին նրա ազգանվան հետ
կապված հպարտության բոլոր հետքերը, վա-
ղուց նա մոռացել եր իր յերակներում վոս-
տոստող ազնվական արյան առկայությունը,
նա չատ եր խոնարհվել, մեջքը կռնցրել սյս
կամ այն հարուստի առաջ, մանավանդ ուս-
ման ավարտական տարում:

Տակավին Հոկտեմբերյան հեղափոխու-
թյունից հետո՝ նա մի քանի անգամ լրջորեն
մտադրվեց դեն գցել իր ազգանվան հապաված
«Մելիք» անունը և պարզապես կոչվել «Անդ-
րեասյան», բայց Յելենա Բեզլարովնան մար-
տական, խիզախ դիմադրություն ցույց տվեց
այդ մտադրության դեմ:

— Неужели жёна тебе недовольна твоими

Թյունը՝ պրոֆեսոր Անդրեասյանի և պրոֆեսոր Մելիք-Անդրեասյանի միջև, — հարց տվեց Յելենա Բեգլարովնան, հատկապես շեշտելով մեկիք բառը:

Չտեսնելով վոչ մի տարբերություն՝ սակայն պրոֆեսորը համաձայնեց կնոջ հետ, վոր այո՛, կար տարբերություն, մինչև անգամ խոշոր տարբերություն:

Պրոֆ. Մելիք-Անդրեասյանը հին իշխանության ժամանակ չեր զբաղվում քաղաքականությամբ, նրան չեր հետաքրքրում յերկրի տերիտորիայի խնդիրը, չեր հետաքրքրում մինչև անգամ կառավարության ձևը — հանրապետություն, թե ուրիշ բան, բավական եր վոր ժողովրդին ուտելիք լիներ, տկլոր չմընար: Առանց խառնվելու որևէ քաղաքական անցքերին՝ նա միայն մի կարծիք ուներ — քաղաքակիրթ պետությունների հետ պետք և սերտ կապ պահպանել: Նա այս կարծիքը հայտնում եր վոչ թե հրապարակով, այլ մասնավոր խոսակցությունների մեջ, տանը, հենց Յելենա Բեգլարովնայի ներկայությամբ և նրա համաձայնությամբ:

Մի որ, իր յեղբոր տանը, վորը գլխից մինչև վոտը խրված եր քաղաքականության մեջ, բուռն վեճ եր տեղի ունենում Հայաստանի վարչաձևի մասին, խորհրդարանի և նախարարական խորհրդի, խորհրդարանի նախագահի և վարչապետի փոխհարաբերու-

թյունների մասին և այլն, պրոֆ. Մելիք-Անդրեասյանն անակնկալ կերպով, վեճի խառնվեց և ասաց.

— Յես, կարծում եմ, վոր պետք է վորդեգրել Սրեմոյան Յեվրոպայի քաղաքակիրթ պետություններից մեկի վարչաձևը կամ հարցնել նրանց խորհուրդն այդ մասին:

Վիճարանության մասնակցողները չուզեցին հակաճառել պրոֆեսորին և լռեցին, միայն Յելենա Բեգլարովնան հավանություն հայտնեց այդ կարծիքին և ասաց.

— Միքայելը ճիշտ է ասում, այս խնդիրները պետք է շատ խելոք կերպով վճռել:

Պրոֆեսորը, չբավականանալով միայն իր կնոջ արձագանքով, շարունակեց.

— Պատմության մեջ դասեր շատ կան, պետք է ոգտվել այդ դասերից:

— Յելենա, — ասում եր պրոֆեսորը, — ինձ դուր չի գալիս, վոր Հարությունն այսօրան շատ և խորը թաղված է քաղաքական դործերի մեջ, վերջապես նա ֆիզիոլոգ է և յետ է մնում գիտական ասպարիզում:

— Ճիշտ էս ասում, բայց կտեսնես, վոր նա մի օր կդառնա մինիստր, իսկ դու...

— Պատմության ամբիոնը յես չեմ փոխի մինիստրական պորտֆելի. հետ, — ընդմիջում եր պրոֆ. Մելիք-Անդրեասյանը:

Յելենա Բեգլարովնան լռում եր:

Խորհրդային իշխանություն ստեղծվե-

լուց հետո, սակայն, պրոֆ. Մելիք-Անդրե-
ասյանը նախկին պասիվ մարդը չմնաց, սկը-
սեց արձագանքել քաղաքական բոլոր յերև-
ույթներին: Նախկին իշխանության որով,
յերբ նրան մինչև անգամ չեր շահագորդում
հանրապետության վարչապետի ով լինելը,
սկսեց հետաքրքրվել ամեն մի պաշտոնյայի
նշանակմամբ:

Հեղաշրջումից դեռևս մի քանի օր հետո՝
յերբ յերեկոյան տուն յեկավ և լրագիր կար-
դաց՝ անտարբերությամբ անցավ մի լուրի
վրայից, բայց Յելենա Բեգլարովնան նրան
զարթեցրեց:

— Կարդում ես և անցնում, Միքայել':

— Ի՞նչ կա:

— Քիչ առաջ կարդացիր, վոր քաղաք-
ին խորհրդի նախագահ Ե նշանակվել Ռուբեն
Մատթեոսյանը:

— Այո՛, կարդացի:

— Գիտե՞ս տ'վ ե Ռուբեն Մատթեոսյանը:

— Վո՛չ, չեմ՝ ճանաչում, յերևի, նոր
մարդ ե:

Յելենա Բեգլարովնան քմծիծաղ տվեց:

— Նո՛ր մարդ... յերևի, կարծում ես, Կի-
եվի համալսարանից ե:

Պրոֆեսորը զարմացած նայեց կնոջը:

— Մեզ Դիլիջան տանող բերող շոֆերն ե:

— Не может быть!

— Այո՛, նա յե:

—Քաղաքային խորհրդի նախագահ... —
յերկարացրեց պրոֆ. Մելիք-Անդրեասյանը:

— Այն ել մայրաքաղաքի', — ընդդժեց Յե-
լենա Բելըլարովնան:

— Այս բոլորից փչում ե կծված յուզի
հոտ, Յելենա':

Պրոֆ. Մելիք-Անդրեասյանին նախ և
առաջ դուր չեկավ, վոր սկսեցին իրեն ընկեր
Մելիք-Անդրեասյան կանչել:

Նա մի անգամ մինչև անգամ զայրացավ
և ասաց շատ քաղաքավարի և զգուշավորու-
թյամբ:

— Յես ինչո՞ւ ձեր ընկերն եմ...

Բնից սրան շուտ վարժվեց, այնքան ա-
րագությամբ ընդհանրացավ այդ և դարձավ
հասարակ մի դարձվածք:

Պրոֆ. Մելիք-Անդրեասյանը յեռանդուն
կերպով սկսեց կարդալ լրագրերի միջազգա-
յին բաժինները, նոր վորդեգրված մի սովո-
րություն, վոր տեղեց մի ամբողջ տարի և
հետո թողեց, ասելով, վոր «վոչինչ չի հաս-
կացվում, սրանց ասելով վորջ աշխարհը գոր-
ծադուլ ե և հեղափոխություն»:

— Կարող ե պատահել, վոր այդպես ե,
քանի վոր գրում են, — ասաց Յելենա Բեգլա-
րովնան:

— Ի՞նչ ես կարծում, աշխարհը միանգա-
մից հո չգծվե՞ց, գոյություն ունի պատմու-
թյուն, և պատմությունն ել ունի իր տրամա-

բանական, յերկաթյա տրամաբանական ըն-
թացքը, — հայտարարեց պրոֆեսորը:

— Ռուսաստանում ինչպե՞ս փոխվեց ա-
մեն ինչ...

— Ռուսաստանը յեղել ե և միշտ ել պիտի
լինի պատմական տրամաբանությունից
դուրս, — վճռական պատասխանեց պրոֆեսորը:

Յելենա Բեգլարովնան, վոր իր ամուս-
նու կարծիքներն ու մտքերն ընդունում եր ա-
ռանց քննադատության՝ այս վերջի՜նը, թեև
վոչ բացահայտ, բայց մտքում, ընդունեց
միայն ի գիտություն:

— Ինչո՞ւ Ռուսաստանը յեղել ե և միշտ
ել լինելու յե պատմական տրամաբանությու-
նից դուրս, — հարց տվեց Յելենա Բեգլարով-
նան մտքում և չկարողացավ վորևե յեղրա-
կացության հասնել:

Հենց հաջորդ առավոտյան Յելենա Բեգ-
լարովնան խորհրդային մամուլում կարդաց
մի հոդված, վոր վերաբերում եր այդ հար-
ցին, — «Հոկտեմբերյան հեղափոխության
պատմական անհրաժեշտությունը»: Յերեկո-
յան Յելենա Բեգլարովնան ուզում եր այդ
հոդվածի մասին խոսել, բայց չհամարձակվեց,
թերթը դրեց պրոֆեսորի սեղանի վրա, դիտ-
մամբ բաց անելով այդ եջը, վորպեսզի նա
կարդա: Յեվ կարդաց պրոֆեսորը, վորին լար-
ված ուշադրությամբ և անձկությամբ, բայց

աչքի սուշով միայն, հետևեց Յելենա Բեդլա-
րովնան։ Պրոֆեսորը կարդալուց և վերջացնե-
լուց հետո, թթված, սրտնեղած նետեց թեր-
թը մի կողմ ու մրթմրթաց։

— Պատմական անհրաժեշտությո՛ւն...

Բ

Պրոֆ. Մելիք-Անդրեասյանը, սակայն,
հեղափոխության մասին իր անձնական կար-
ծիքները չհայտնեց հրապարակով, նա սովո-
րել եր համակերպվել և համակերպվեց բոլոր
նոր յերևույթներին։ Յերիտասարդության
որերին, յերբ նա ստիպված եր ձեռք կարկա-
ռել հարուստներին՝ ուսման ծախսերն ստա-
նալու համար՝ քիչ տանջանքներ չեր կրել,
բայց ժամանակի ընթացքում այդ տանջանք-
ները դարձան մի տեսակ հպարտության փաս-
տեր, վորովհետև, ըստ նրա տրամաբանու-
թյան, կրել եր սոցիալական նադիրից վեր
բարձրանալու համար։

Սոնարհվել եր նա վեր բարձրանալու հա-
մար և ահա նորից սկսեց խոնարհվել վար
չընկնելու համար։

Պահանջվում եր պատմության նոր ըմբռ-
նում, և պրոֆ. Մելիք-Անդրեասյանն սկսեց
պարապել Արևմտյան Յեվրոպայի պատմու-
թյան մարքսիստական ուսումնասիրությամբ։

Ընթերցանության սիրահար և համառ
նստող՝ նա կարճ ժամանակի ընթացքում կար-

դաց, վերլուծեց մարքսիզմի կլասիկան և, ըստ իր հայտարարության, «զարմանալիորեն» հեշտ յուրացրեց դժվարին հայտարարված այդ գիտությունը:

Յեվ Պրոֆ. Մելիք-Անդրեասյանն սկսեց բացատրել Արևմտյան Յեվրոպայի հասարակական-քաղաքական յերևույթներն արտադրական ուժերի զարգացմամբ, բոլոր նախկին դասախոսությունների մեջ գործածած «ազգ» և «ժողովուրդ» բառերը փոխարինեց «դասակարգ» բառով, ճգնեց գտնել բոլոր յերևույթների տնտեսական բազան, ջանաց գիտել պատմական յերևույթներն իրենց շարժման, զարգացման պրոցեսում և, այսպես անելով, գնահատվեց նա Բարձրագույն Ուսումնական Հիմնարկության ղեկավարների կողմից:

Բայց, յեթե պրոֆ. Մելիք-Անդրեասյանը լիներ մի քիչ համարձակ մարդ, պետք ե դուրս գար և հայտարարեր հրապարակով, վոր կեղծիքը խեղդում ե իրեն և այլևս չի կարող շարունակել:

Բայց նա լռեց:

Վաղուց եր նա սովորել, և այդ սովորությունը դարձել եր նրա մեջ որինական միս ու արյուն, վոր լռությունը գանձ ե:

Մեկ-մեկ նա չեր կարող համբերել և տանը, Յելենա Բեգլարովնային, զսպլած, կոկորդը սեղմելով, ինչպես զայրույթի դագաթնա-

կետին հասած մարդ, վոր ճգնում է չգողալ, ասում եր.

— Յեւենա՛, գեթ դու իրազեկ յեղիր իմ դրության, վերջապես մեկին պետք է ասեմ: Այսոր յերկու ժամ դասախոսեցի, այսինքն յերկու ժամ ստեցի, վո՛չ ավել, վո՛չ պակաս— յերկու ժամ:

— Մի՞թե դու վստահ եյիր, վոր առաջ վա քո դասախոսությունների մեջ սուտ չկար, չե՞՞ վոր ինչ վոր կատարվել է Արևմտյան Յեվրոպայում՝ դու ներկա չես յեղել և աչքերով չես տեսել:

— Յեւենա՛, յես հիմնվել եմ միշտ պատմական անհերքելի դոկումենտների վրա, վոր չինչ ավելի ճիշտ չե, քան դոկումենտը:

Յեւենա Բեգլարովնան, իհարկե, հեղափոխության և մարքսիզմի կողմնակից չեր: Նախ և առաջ նա վոչինչ չեր հասկանում այդ բոլորից, յերկար ժամանակ Մարքս-Ենգելսը միասին կարդալով, կարծում եր, վոր Մարքսը անուշն է, իսկ Ենգելսը՝ ազգանունը, բայց չեր ցանկանում, վոր պրոֆեսորը չարունակեր վատ տրամադրվել դեպի նոր կարգերը և կորցնել իր հասարակական դիրքը:

— Ճիշտ է, տասնևհինգ տարի յե, վոր այսպես եյիր բացատրում պատմական անցքերը, հիմա յել սրանց ուզածի պես բացատրիր, ի՞նչ տարբերություն, վերջապես ի՞նչ կը կորցնես:

— Կորցնում եմ հավատքը դեպի պատմութ-
յունը, — պատասխանեց պրոֆ. Մելիք-Ան-
դրեասյանը:

Յեւենա Բեգլարովնան քմծիծաղ տվեց:

— Պատմությունը, — հեզնեց նա, — կար-
ծես, քո հոր կենսագրությունն ե, վոր քեզ
ըղայնացնում ե, յերբ աղավաղում են:

— Լսիր, Յեւենա, ավելի կոնկրետ, —
սկսեց պրոֆ. Մելիք-Անդրեասյանը չափա-
զանց լուրջ և հոնքերը կիտած, խորը տհաճու-
թյուն զգալով կնոջ հեզնությունից, բայց
ճշնելով թագցնել, — դու գիտես, վաղո՛ւց
գիտես, դեռ մեր ծանոթության առաջին որե-
րից, վոր յես իմ հոգու խորքում կրում եյի
մի սրբազան սեր:

— Նապոլեոնը, — ընդմիջեց Յեւենա Բեգ-
լարովնան:

— Գոհ եմ, չափազանց գոհ եմ, վոր հի-
շեցիր, այո՛, սեր դեպի Նապոլեոնը: Դու հի-
շում ես նաև, վոր ամեն տարի, յերբ դասա-
խոսությունները հասնում եյին նապոլեոնա-
կան շրջանին, նրա կյանքին, ռազմական և
քաղաքական նրա գործունեյությանը՝ յես
գտնվում եյի արտակարգ ուրախության մեջ,
իմ տրամադրության բարձրության չեք հաս-
նի վոչ վոքի տրամադրությունը: Յես գիտեմ
Նապոլեոնի կյանքը, ինչպես իմ սեփական
կյանքը, յետե մեկն ու մեկն ինձ հարց տա
այս րոպեյիս, թե Նապոլեոնը 1796 թվի նո-

յեմբերի 17-ին, կեսորից հետո, ժամը 4,15
բողոք անց, վո՞րտեղ եր, ի՞նչ եր անում և
ի՞նչ եր ասում՝ յես կարող եմ ասել ատանց
յերկար բարակ մտածելու:

— Դա նշանակում է, վոր նրա կյանքը
դիտես ավելի լավ, քան քո սեփական կյանքը,
վորովհետև, յեթե այդպիսի հարց տամ քո
մտին, դժվար թե կարողանաս պատասխա-
նել:

— Ճի՛շտ է, ճի՛շտ է:

— Իսկ հետո ի՞նչ, — հարց տվեց Յելենա
Բեղլարովնան, աշխատելով թաղցնել իր հեղ-
նակած տրամադրությունը:

— Յես չվերջացրի: Նապոլեոնն ինձ հա-
մար ուժի, հանդգնության, իմաստության
վեհադույն սիմվոլն է, նա ինձ համար ավելի
մեծ է, քան Մակեդոնացին և Կեսարը, որի-
նակի համար, յեթե մենք վերցնենք Մակե-
դոնացու...

Յելենա Բեղլարովնան, ահաբեկվելով,
վոր՝ պրոֆեսորը կսկսի արտասանել մի յեր-
կար դասախոսություն՝ ապացուցելու, վոր
Նապոլեոնը Մակեդոնացուց և Կեսարից մեծ
է, վորովհետև այդպիսի դասախոսություն-
ներ չատ եր լսել տանը՝ նրա միակ առաջնոր-
դիան հանդիսանալով, կարեց նրա խոսքը և
ասաց:

— Կա՛րճ ասա.

— Յես այժմ ստիպված եմ ասել, վորչ

ավել, վոչ պակաս՝ ասել պարզապես, վոր
Նապոլեոն Բոնապարտը մի ավանտյուրիստ
եր, փառամոլ և ունայնամիտ...

Պրոֆ. Մելիք-Անդրեասյանը տօգունեց,
այլևս չկարողացավ շարունակել, ինչ վոր ծա-
նրը մի ճնշում զգաց կոկորդում:

Յելենա Բեզլարովնան մի բաժակ ջուր
հասցրեց նրան, հանգստացրեց՝ գլուխը շոյե-
լով և համբուրելով նրան, բայց չկարողացավ
իրեն զսպել և ասաց.

— Զի՞ լինի, վոր Նապոլեոնի մասին չը-
խոսես:

Այս անգամ պրոֆ. Մելիք-Անդրեասյանը
ծիծաղեց.

— Անցնել Արևմտյան Յեվրոպայի նորա-
գույն պատմությունը և լուսթյուն պահել Նա-
պոլեոնի մասին... հա՛, հա՛, հա՛...

Յելենա Բեզլարովնան պրոֆեսորի ծիծա-
ղի վրա զայրացավ և նյարդային տոնով աս-
աց.

— Յերբ յեղբորդ համար գրում են ավան-
տյուրիստ, հակահեղափոխական, գող և
այլն, հասկանում եմ, վոր զայրանում ես,
կարծես, Նապոլեոնը հարազատ յեղբայրդ ե:

— Նապոլեոնն ամէլի հարազատ ե, քան
Հարություն Արրահամի Մելիք-Անդրեասյա-
նը, Յելենա՛ Բեզլարովնա, — հանդիսավոր և
ծանր տոնով հայտարարեց պրոֆեսորը և վո-
տի կանգնեց:

— Ի՞նչ է, Նապոլեոնի համար հասարակական դիրք՞դ պիտի կորցնես:

— Դրան համաձայն եմ, հասարակական դիրքը չպետք է կորցնել: Բայց ինչպե՞ս անեմ, մոր հասարակական դիրքը պահեմ և յես ել չկորչեմ:

— Դու ինչո՞ւ պիտի կորչես:

— Ձեմ կարող, Լենոչկա, չեմ կարող Նապոլեոնին, առանց ամաչեցու և առանց հոգեկան տաղնապի, հայտարարել ավանտյուրիստ:

Այդ յերեկո նա ապրեց հիվանդագին մի միճակ, գիշերը դրեթե չքնեց՝ չկարողանալով ադառվել այդ մասին մտածելուց: Յեկնա Բեգլարովնան հավասարապես տառապեց մի՛չ թե Նապոլեոնի, այլ իր սամուհու համար, նրա փաղաքշանքները, նրա տաք և անկեղծ դուրդուրանքները չկարողացան փարատել ամուսնու վիշտը, մինչև առավոտը բացվեց և սկսվեց կյանքի աուրյան:

Այդ խոսակցությունից ճիշտ յերկու շաբաթ հետո՝ պրոֆ. Մելիք-Անդրեասյանը, հոգեկան բարձր կոնսրոլով, սկսեց դասախոսությունները Նապոլեոն Բոնապարտի մասին՝ շատ հեշտությամբ ապացուցելով նրա խոշոր պատմական ավանտյուրիստ լինելը:

Նրանք մորոնք տեղյակ եյին նրա Նապոլեոնի մասին ունեղած պաշտամունքին, լսելով նրա դասախոսությունները, յեկան այն համոզ-

մունքին, վոր պրոֆ. Մելիք-Անդրեասյանի մեջ
կատարվել է հիմնական բեկում, վոր նա ան-
դառնալիորեն և հաստատ վրտներով կանգնած
է մարքսիստական պատմական մատերիալիզ-
մի հողի վրա!!!

Պրոֆ. Մելիք-Անդրեասյանի անունը
սկսեց հոլովվել ամեն տեղ, խորհրդային մա-
մուլը տպագրեց նրա կարծիքը հեղափոխու-
թյան և խորհրդային պետականության մա-
սին:

«Պատմական անցքերի և անձնավորու-
թյունների, դեպքերի և դեմքերի, մարդկանց
և իրերի (այսպիսի կրկնողական վոճ ունեթ
պրոֆ. Մելիք-Անդրեասյանը) ճշգրիտ վեր-
լուծությունը և լուսաբանությունը հնարա-
վոր է միայն մարքսիստական դիալեկտիկա-
յի մեթոդով», — հայտարարեց նա:

Յերբ Յելենա Բեգլարովնան խորհրդային
մամուլում կարդաց ամուսնու այս հայտա-
րարությունը՝ քթի տակ քնքշորեն սևին տվող
բեխի վրա՝ մի քմծիծաղ ծաղկեցրեց: Իսկ
յերեկոյան յերբեք ել չանդրադարձավ այդ
հարցին, նրբամտություն ունենալով չամա-
չեցնելու նրան, բայց պրոֆեսորն ինքն ան-
դրադարձավ այդ հայտարարության և հարց-
րեց.

— Յելենա՛, կարդացի՞ր հերթական իմ
կեղծիքը:

— Կեղծի՞ք:

— Այո՛ :

— Յերեակայի՛ր, յես կարծեցի, վոր ան-
պեղծ ես ասել:

— Ինչո՞ւ այդպես յերեակայեցիր:

— Տո՛նը շատ անկեղծ եր:

— Ա՛խ, Լենա՛...

— Յես կարծում եմ, վոր դու ինքդ օր-
խալ ես գնահատում քեզ, ավելի ճիշտը՝ օր-
խալ ես վերլուծում քեզ: Համառություն մի
անի, այս նոր գիտության մեջ կան ճշմար-
տություններ, ըստ յերևույթին:

— Վորտեղի՞ց գիտես, — հարցրեց պրո-
ֆեսորն իր կնոջ՝ ապշած նրա համարձակու-
թյան վրա:

— Չգիտեմ, ինձ թվում է, վերջապես
չի կարող պատահել, վոր մի գիտություն
վորեւե ճշմարիտ կողմ չունենա, դու ինքդ ե-
լիր ասում մի ժամանակ, հիշում եմ:

Յեւե՛նա Բեզլարովնային վոչինչ ել չեք
թվում, միայն նա աշխատում էր ամուսնուն-
լով տրամադրել դեպի նոր կարգերը, նա խո-
րապես համոզված էր, վոր վոչինչ, բացար-
ձակապես վոչինչ չեք փոխվի, յեթե վորեւե
ամբողջական պատմություն կամ պատմա-
կան դեպք կամ դեմք այսպես բացատրվեք
կամ այնպես, միայն տարբերությունն այն
կլիններ, վոր՝ կարչելով հին տեսակետներին՝
պրոֆեսորը կընկներ իր հասարակական դիր-
քից:

Այդ օրերից մեկում Բարձրագույն Ուսում-

նական Հիմնարկության մեջ, վորտեղ դասախոսում եր պրոֆ. Մելիք-Անդրեասյանը, քննության յենթարկվեցին պատմության և գրականության պատմության դասախոսների ծրագրերը: Յերկար վիճարանություններից հետո՝ հանձնաժողովի յեզրակացությունն այն յեղավ, վոր պրոֆ. Մելիք-Անդրեասյանի՝ Արեմտյան Յեվրոպայի պատմության ծրագիրը միանգամայն համապատասխանում և ժամանակակից, մարքսիստական, դիալեկտիկական պահանջներին:

Այդ ուր պրոֆ. Մելիք-Անդրեասյանը տուն յեկավ զարմանալի տարտամ տրամադրություններով — մերթ ուրախ եր, մերթ մինչև անգամ մռայլ: Յելենա Բեգլարովնան, վոր շատ մոտից հետևում եր իր ամուսնու տրամադրություններին, ասաց.

— Այսոր — մի տեսակ — տարորինակ ես:

— Ծրագրերի քննություն կար, — պատասխանեց պրոֆեսորը, — յերևակայի՛ր իդեալիստական վոչինչ չգտան իմ ծրագրի մեջ:

— Ինչո՞ւ յես զարմանում, — հարցրեց Յելենա Բեգլարովնան, վորի համար հավասարապես նշանակություն չունեյին իդեալիզմ և մատերիալիզմ:

Պրոֆեսորը տուր կերպով նայեց կնոջը. — Թեթև ծիծաղեց և չպատասխանեց:

Պրոֆ. Մեյիք-Անդրեասյանը, ինչքան
 ժամանակն անցավ, այնքան սկսեց կարծան
 զգալ հին կյանքի: Նա տեսնում եր, վոք հին
 կյանքը թռչում եր արագաթռիչ և սրաթե
 հեռանում և ինչքան հեռանում եր, այնքան
 խորը թաղվում եր քաղցր և թովիչ մշուշում:
 Յերբ նա դուրս եր, դալիս պատշգամ, դիտում
 նոր կանաչած դաշտը և ներհնչում արեւից կա-
 կրդցած հողի բույրը, նրան թվում եր, վոք կա-
 տաճն ու հողը դեռ հնից շատ բան են պահում
 իրենց մեջ, մանավանդ հեռուն բարձրացած,
 երկնահույզ գույգ լեռների գագաթները, վո-
 բոնք, մխրձվում եյին յերկնքի պայծառ կա-
 պույտում:

Յերկար ժամերով նա դիտում եր Արա-
 րատյան դաշտում որորվող տխուր կաղամա-
 խիները, նրա հագին ճոճվում եր նրանց գան-
 դաղ և վեհորեն հանգիստ սիթմով, տեսնում եր
 արագիւյները, վոբոնք ահա վերադառնում եյին
 հորավի յերկրներից, սալառնելով ծովերի
 չքնաղ կապույտի վրայով, և իջնում իրենց
 հին կաղամախիների բույների վրա, արա-
 գիւյներ, վոբոնց վրա յերբեք չազդեց քաղա-
 քական և հասարակական այն փոփոխություն-
 ները, վոբոնք տեղի ունեցան մարդկանց աշ-
 խաբհում:

Պատշգամում, գարնան անուշաբույր քա-
 միների առաջ, ամբողջ դեմքը ներկված վեր-

Չալույսներն արյունով, կուրծքը լցված թարմագույն շնչով, Պրոֆ. Մելիք-Անդրեասյանին պատում եր մուսկուլային թախիծը, աչքերը լցվում եյին տաք արցունքի կաթիլներով: Այդ թախիծը նրան պատում եր այն փոփոխություններով, վոր սողոսկում եյին նրա բնականության մեջ, ախամա, գրեթե բռնի կերպով:

«Մատերիա... ամեն ինչ նյութ ե, բոլոր յերևույթները, բոլոր շարժումները նյութի ալազան հատկություններն են, առարկան ե, վոր կա և անդրադառնում ե հոգու և մտքի եկրանի վրա, առանց այդ առարկայի չկա անդրադարձում, հոգին ինքը մատերիայի շարժումն ե, շարժման հատկություններից մեկը, առանց նյութի գոյություն չունի միտքը և մտքի թռիչքը», — մտածում եր նա:

Պրոֆ. Մելիք-Անդրեասյանն, անդրադառնալով այդ խնդիրներին, ցնցում եր գլուխը՝ ցանկանալով խուսափել մտքերի մուսկուլային հոսանքից, բայց մի ուրիշը, ավելի ուժեղ թափով, խուժում եր նրա մտածողության դաշտը:

«Պատմությունը (ամենազգացուն և ջգագրգիռ կեսը պրոֆ. Մելիք-Անդրեասյանի համար) դասակարգային կռիւ պատմությունն ե: Ուրեմն ազգերը չեն կռվել իրար հետ, դեռևս նոր վերջացած համաշխարհային պատերազմը ազգային կռիւ չե՞ր»... Ախամա

պրոֆեսորը հարց եր տալիս ինքն իրեն. «Ապա ինչո՞ւ պայքար ե տեղի ունեցել և ազգի մեջ» : Այստեղ նա մի պահ մտածում եր և քիչ հետո, բացատրելով այդ իշխանների անհատական նախանձի, փառասիրության և արչավանքի տենչերի գոյությամբ, վեր եր կենում և ներս գնում պատշգամից, յերբ Արարատյան յերկրնքի վրա աստղեր եյին թափվում, և ջինջ ուղում անտեսանելի բյուրավոր զանգակներ եյին կախվում :

—Յելե'նա, — շշնջում եր նա կնոջը, — բնությունը գեղեցիկ ե, բայց վախենում եմ, վոր մարդիկ փչացնեն նրա գեղեցկությունը :

Յելենա Բեգլարովնան, չանդրադառնալով պրոֆեսորի լիրիկական տրամադրության, առաջը դնում եր հիմնարկից ստացված մի գրություն : Պրոֆեսորն սկսում եր կարդալ առաջին յերկու բառերը — ի նկատի ունենալով . . . — թուղթը շարտում եր մի կողմ, վեր եր կենում, մոտենում իր պահարանին, վերցնում մի գիրք, լավ կազմված, հաստ, վոսկեզոծ տառերով գրված շապկով և, բերելով իր սեղանը, վառում եր լույսը և խորատուգված կարդում :

Այդ գիրքը ձեռագիր եր, բայց արտաքին տեսքից կարծվում եր, վոր մի դասական յերկասիրություն ե :

Պրոֆ. Մելիք-Անդրեասյանը, պրոֆեսորական կոչում ստանալու առաջին իսկ տ-

րից, ինչպե՛ս պատահեց, վորոշեց որագիշտ
պահել: Այդ որագիշտը, մի քանի ընդմիջում-
ներով, շարունակեց մինչև Նոյեմբերյան հե-
ղափոխությունը, հեղափոխությունից հետո
եւ մի քանի որ թեւ շարունակեց, բայց հետո
թողեց վերսկսելու պայմանով, բայց այլեւս
չկարողացավ և, ինչ վոր գրել եր, դարձավ նրա
համար մի սրբազան հիշատակ:

Յերբ Յելենա Բեդլարովնան մեկ մեկ հի-
շեցնում եր որագիշտը, պրոֆեսորը պատաս-
խանում եր.

— Դեպքերն այնքան արագ են զարգա-
նում, վոր հնար չե գրի առնել, պիտի սպա-
սել, թո՛ղ ամեն ինչ հանդարտվի, հետո:

Յեւ վորովհետեւ վոչինչ չհանդարտվեց,
Պրոֆ. Մելիք-Անդրեասյանը չվերսկսեց իր
որագիշտը:

Դ

Արդեն յերեք տարի անցել եր Նոյեմբեր-
յան հեղափոխությունից, յերբ պրոֆեսորը
հիշեց իր որագիշտը և, հին կյանքի կարտա-
բոցավառության հետ զուգընթաց, վերցրեց
և սկսեց կարդալ:

Անսահման քաղցր կարոտով նա կարդաց
պրոֆեսորական կոչման առթիվ իր ընդու-
նած այցելությունների մանրամասնություն-
ները, բայց յերբ ավելին կարդաց, անակըն-
կալութեն նկատեց, վոր գրի յեր առել բաներ,

վորոնք իսկապէս տեղի ունեցել եյին, յաջ
շատ չնչին արժեք եյին ներկայացնում, ան-
սահման հետաքրքրությամբ կարդաց պատ-
մական անցքերի շուրջը տեղի ունեցած վեճե-
րը, վորոնք հոգածությամբ արձանագրել եր,
և գտով, վոր իր այն ժամանակվա տեսակետ-
ների մեջ շատ ծիծաղելի կետեր կային: Մի
տեղ կարդաց իր ճեռքով և սևով սալիտակի
վրա գրված— «Այս կետը մութ ե մնում ինձ
համար»: Պրոֆեսորը ծիծաղեց, նրա ծիծաղը
նկատեց մինչև անգամ Յելենա Բեգլարով-
նան: Այդ կետը բոլորովին մութ չեր այժմ,
այլ ամբողջապէս պարզ և պայծառ: Յերբ
պրոֆեսորը յեղբակացրեց, վոր այդ կետի
մթությունը պայծառացել, լուսավորվել եր
իր համար, իրերը և պատմական յերևույթնե-
րը նոր գիտության լույսով դիտելով, պար-
զապէս վատ զգաց, նրա կոկորդն սկսեց ճընչ-
վել, շունչը ծանրացավ: Ուրեմն, նոր գիտու-
թյունը՝ մաքսիզմը, հակառակ իր բուն դի-
մադրություններին, մուտք եր գործել իր
գատողության մեջ, հակառակ իր կամքին՝
այդ գիտությունը կանթեղներ եր վառել իր
իմացականության մեջ:

Այդ յերեկո Պրոֆ. Մելիք-Անդրեասյանը
թողեց որագրի ընթերցումը, քնքշությամբ
փաթաթեց այն լրագրի մեջ, դրեց պահա-
րանը և ուղեց մի գիրք վերցնել կարդալու
համար՝ պարզապէս խուսափելու Յելենա Բեգ-

լարովնայի հետ խոսակցության բռնվելուց,
վորովհետև զգաց, վոր կինն անհամբեր սպա-
սում եր ողբազրի ընթերցման ավարտմանը մի-
քանի հարցեր ուղղելու համար: Յերբ պահա-
րանում գտնված գրքերը արագ նայվածքով
աչքի անցկացրեց, տեսավ, վոր շատ նոր գր-
քեր էյին ավելացել իր հին գորքերի վրա—
Մարքս, Ենգելս, Լենին և այլն: Ինքն ել չի-
մացավ, թե ինչո՞ւ վերցրեց Ենգելսի Անտի-
Դյուրինգը, բերեց իր գրասեղանը և սկսեց
կարդալ: Նա սկսեց կարդալ միայն այն կետե-
րը, վորոնց դեմ վորոշ նշաններ եր արել:
« »

. »

— Յեկենա՛, ճիշտ ե, — բղավեց հանկարծ
պրոֆեսոր Մելիք-Անդրեասյանը և վրաի
կանգնեց:

— Ո՞վ ե ճիշտ, ինչո՞ն ե ճիշտ, — հարցրեց
Յեկենա Բեգլարովնան:

— Ենգելսը:

— Մա՞րքս-Ենգելսը:

— Ա՛յ, Լենա՛, յես քեզ մի անգամ ասել
եմ, վոր Մարքսը տարբեր մարդ ե, իսկ Են-
գելսը՝ տարբեր:

— Ապա ինչո՞ւ միշտ միասին են գրում,
չեմ հասկանում, — սրտնեղեց Յեկենա Բեգլա-
րովնան:

Տիրեց լուռթյուն:

Պրոֆեսորն սկսեց ջղային յերթելել կա-
տարել սենյակում, իսկ Յելենա Բեգլարովնան
ուշի ուշով հետևում եր ամուսնու շարժում-
ներին, մորոնք վոչ մի որվա նման չեյին:
Նա նկատել եր, մոր վերջերս ամուսինն առ-
հասարակ շեղվում ե իր սովորական կենցա-
ղից: Չեր պատահել, որինակի համար, մոր
պրոֆեսորը մի անգամ անկողին զնալուց հե-
տո՝ դէրթներ, վառեր լույսը, մոտենար պա-
հարանին, մի վորեւե գիրք վերցներ և կանգ-
նած տեղում մի քանի եջ կարդար և նորից վե-
րադառնար անկողինը և նորից քներ: Յեմ
պատահում եր, մոր այլևս չեր ել քնում,
մնում եր արթուն մինչև սենյակի լուսամուտի
ապակիները ներկվեյին կապույտ լույսով:
Պատահեց նաև, այն ել յերկու անգամ, մոր
նա զարթնեց, իր համար թեյ պատրաստեց,
խմեց, տալ հագնվեց և դուրս յեկավ տնից և
վերադառնալ միայն առաջոտյան:

— Կարծես, ճիշտ ե, — շշնջում եր նա ինքն
իրեն:

Յելենա Բեգլարովնան համարձակվեց:

— Լավ ե, մոր ճիշտ ե, ի՞նչ կա, ճիշտ
լինելուց ի՞նչ մնաս:

— Ինչ մնա՞ս, — հեզնեց պրոֆ. Մելիք-
Անդրեասյանը, — յեթե ճիշտ ե, յես ամբող-
ջովին կորած եմ:

Յելենա Բեգլարովնան զարմացալ:

— Մի՛ զարմանար, — ասած պրոֆեսորը,

ժողովն ալով իր կնոջ և նայելով նրա աչքերի մեջ, — դու աստծու հավատով ես:

Յեկենա Բեգլարովնան խաչակնքեց:

— Յեթե քեզ մի որ հաստատեն, այնպես ապացուցեն, վոր դու ել, առանց տարակուսանքի, հավատաս, վոր աստված չկա, ի՞նչ կանես:

— Այդպիսի բան վո՛չ վոք չի կարող հաստատել:

— Յեթե հաստատեն:

— Չեմ հավատա:

— Յեթե հավատաս:

— Կաշխատեմ չհավատալ:

— Նո՛ւ, շատ աշխատեցիր և չկարողացար դիմադրել և, հանկարծ, հավատացիր, անկեղծորեն հավատացիր, ի՞նչ կանես:

— Այդպես բան չի կարող լինել, Միքայել:

— Յեթե, նո՛ւ, յեղավ, — զայրացած բղավեց պրոֆ. Մելիք-Անդրեասյանը...

— Այն ժամանակ... չգիտեմ...

Յեկենա Բեգլարովնան սկսեց լաց լինել:

Պրոֆ. Մելիք-Անդրեասյանը յերկար լսեց կնոջ լացը: Նրա հեկեկանքն առաջանում էր իր հավատքի հավանական փլուզումից: Այդ հեկեկանքը խորը թախիծով և ջերմագին գորովանքով լցրեց պրոֆեսորի սիրտը: Այդ լացը վոչ վոք այնպես խորը չէր կարող բմբռնել, ինչպես պրոֆեսորը: Նա տեսնում էր իր

կնոջ ջինջ արցունքի մեջ հոգու աղջամղջային մոայլությունը: Նա տեսնում եր այդ հոգին կուչ յեկած, կծկված, մենակ և անոգնական, ինչ վոր մարմարյա, հին, փառահեղ շէնքի ավերակների մեջ նստած: Ահա և ինքը, իր կնոջ նման, ավելի սրտաճմլիկ և ավելի վողբալի ավերակների մեջ, միայն այն տարբերությամբ, վոր կինը լաց եր լինում, դովացնում եր հոգու յերաչտը, իսկ ինքը՝ միայն վողբում եր և ալրովում ամառնային միջոցի տապում, կրակի պես կիզիչ քարերի արանքում, չոր, խանձած, դարաւոր ծարաւով տոչորված վայրի բույսերի մթնոլորտում:

— Իհարկե, ասածու դոյության դադափարը հավիտենական է, և վոչ վոք չի կարող հակառակն ասացուցել, դրա մասին լաց լինելու կարիք չկա,—ասաց վերջապես պրոֆ. Մելիք-Անդրեասյանը, իր թեերի մեջ սեղմելով Յերինալ Բեգլարովնային:— Դու ապահով ես,—չարունակեց պրոֆեսորը,—քո հավատքն աստվածն է, և վոչ վոք չի կարող իր դենքը հասցնել նրան, բայց իմ պատմական տեսություններն այլ են, Լենոչկա՛, իմ տեսություններին խփում են չորս կողմից. խփում են անողոքարար, և նրանք փշրվում են մեկը մյուսի յետեից: Նապոլեոնի պես հսկան ընկալ, խորտակվեց իմ հոգու տաճարում:

— Ձե՞ վոր դու ասում եյիր...

— Այո՛, յես ասում եյի վոր հարմարվե-

լու համար եմ ասում այն, ինչ ասում եմ Նապոլեոնի մասին և առհասարակ, բայց չե՞ վոր ասում եմ, և մարդիկ հավատում են ինձ, նոր սերունդն այնպես ել սովորում ե, վոր Նապոլեոնը ուրիշ բան չե, յեթե վոչ... տանն ել չկրկնեմ միևնույն հայհոյանքը, Յելե'նա, ների'ր ինձ:

Այս դեպքից քիչ անց, պրոֆ. Մելիք-Անդրեասյանի մոտ յեկան յերեք ուսանողներ, վորոնց հետ պրոֆեսորը պիտի կազմեր պատմության խմբակների ծրագրերը:

Ուսանողները ծրագրի մի նախագիծ կազմել էյին, վորի համաձայն գոյություն պետք ե ունենային պատմության յերեք խմբակ— Ա. Արևմտյան պատմության տնտեսական մասն ուսումնասիրող խմբակ, Բ. Հասարակական կյանքն ուսումնասիրող խմբակ, Գ. քաղաքական կյանքն ուսումնասիրող խմբակ:

Նախագծի այս մեթոդն չափազանց դուր յեկաւ պրոֆ. Մելիք-Անդրեասյանին: Դա հին մեթոդ եր—պատմության զանազան յերևույթներն ընդունել իրրե իրարից անջատ, անկապ յերևույթներ: Ուսանողներն հետեւել էյին հին, չարլոն մեթոդին և ըստ այնմ նախագիծը կազմել:

Պրոֆ. Մելիք-Անդրեասյանը յերկար Ժամանակ տատանւեց պատասխան տալու, նրա մեջ տեղի յեր ունենում տեժեղ պայքար—վոր ինչ այդ նախագիծը, թե վոչ: Վերջապես

չկարողացաւ դիմադրել, հակառակ իր ներքին ցանկութեան, այն ճշմարտութեանը, վորը սողոսկել եր նրա մեջ և ասաց.

— Ձե՞ս վոր պատմութեան տնտեսական, հասարակական և քաղաքական յերևույթները սերտորեն, անքակտելորեն կապված են իրար, հասարակականը և քաղաքականը նույնն են, ինչ վոր տնտեսականը և ընդհակառակը: Ճիշտ ե, վոր պետք ե կազմել յերեք խմբակ, յուրաքանչյուր կուրսի համար մի մի խմբակ: Ի՞նչ պետք ե լինի սրանց տարբերութիւնը: Պարզապէս մեկը մյուսից մի քիչ ավելի լայնորեն և խորապէս պիտի ուսումնասիրի, ուրիշ վոչինչ:

Յեւ վ ուսանողների հետ միասին՝ պրոֆ. Մելիք-Անդրեասյանը կազմեց մանրամասն ծրագիր յուրաքանչյուր խմբակի ուսումնասիրութեան սրջեկաների:

Ուսանողները, կարծելով, վոր վերջացաւ իրենց խոսակցութիւնը, վեր կացան հրաժեշտ ատենելու, յերբ պրոֆ. Մելիք-Անդրեասյանը խնդրեց նրանց մի քանի բոպե ևս մնալ: Նրա մեջ տեղի յեր ունենում ավելի ուժեղ պայքար, քան յերբ և իցե: Նորամուծ գաղափարների մի հոսանք, վոր բացառապէս բըղխում եր պատմութեան նոր մեթոդոլոգիայից, խուժում եր նրա իմացականութեան վրա, տեղի յեր ունենում մի ճակատամարտ պրոֆեսորի ուղեղում—հին հասկացողութեան և նորի

միջև: Նա ուզում էր առաջարկել՝ կազմել, ի հավելումն արդեն քիչ առաջ կազմված խմբակների, մի նոր խմբակ, վոր պետք է լիներ բացառապես նորություն, բայց դա նշանակում էր ամենաուժեղ զենքը տալ ուսանողների ձեռքն իր իսկ սիստեմի դեմ:

Վերջապես ասաց պրոֆեսորը:

— Յես առաջարկում եմ կազմել մի խմբակ վերջին կուրսում, վորն ուսումնասիրի պատմության ըմբռնման հին մեթոդները:

Ուսանողները, առաջին հերթին, կարծեցին, թե դա նպատակ է հետապնդում պատմության հին մեթոդների թարմացման, բայց պրոֆ. Մելիք-Անդրեասյանը, զգալով տարակուսանքն ուսանողների դեմքերի վրա, ավելացրեց.

— Պատմության հին մեթոդների ուսումնասիրությունը պետք է նպատակ ունենա յերեվան բերելու այդ մեթոդների խոցելի կողմերը, որինակ՝ պետք է վերցնել պատմական մի կոնկրետ դեպք, պատմական մի յերեվույթ, վորոչապես իմանալ, թե այդ յերևույթը, յերկար տարիների ընթացքում բուրժուազիայի խոչոր պատմագիրներն ինչպես են մեկնաբանել, և այդ մեկնաբանության անմիջապես հակադրել նորը և ցույց տալ այն բացարձակ առավելությունները, վորոնք բովանդակվում են նորի մեջ, մի խոսքով, պատմու-

թյան մատերիալիստական ըմբռնման մեթոդի մեջ:

Ուսանողներին դեմքերի վրա անհետացավ տարակուսանքը, և պրոֆ. Մելիք-Անդրեասյանը ժպտաց դոհունակությամբ, մի յերևույթ, վոր չէր համապատասխանում նրա ներքին ցավագին զգացումներին: Ուսանողները համաձայնեցին, և պրոֆ. Մելիք-Անդրեասյանը նշեց Արեմտյան Յեվրոպայի այն կոնկրետ դեպքերը, վորոնք պիտի հանդիսանային ուսումնասիրության որոշակունք:

Ուսանողներին մեկնելուց հետո՝ պրոֆ. Մելիք-Անդրեասյանն սկսեց ապրել բարձրորեն ջղային մի վիճակ:

— Ահա կործանում եմ ինքս ինձ, — շշնջաց նա և լսեց իր շշնջոցը:

Սենյակում վո՛չ վոք չկար, Յելենա Բեգլարովնան արդեն յերկրորդ յերազն եր տեսնում: Պրոֆ. Մելիք-Անդրեասյանը պատկերացրեց իրեն այն միամիտ փայտահատը, վոր նստած ծառի ճյուղի ծայրին՝ կացնով կըտրում և ճյուղն արմատից, առանց մտածելու, վոր, յեթե կտրի և վերջացնի, ինքը պիտի բնկնի դեռին: Պրոֆեսորը բարձր ծիծաղեց իր վրա թունավոր հեղնությամբ:

— Վերջ պիտի տալ այս բոլորին, — ասաց նա մտքում և նստեց գրասեղանին, գլուխն առնալ յերկու ձեռքերի մեջ և սկսեց մտածել:

Նա մտածում եր յերկու բանի մասին—

վերջ տալ այդ բոլորին՝ նշանակում եր կորցնել պատմության ամբիոնը, պրոլետարիատի դիկտատուրան չեր ների վո՛չ վոքի, վոր խեղաթյուրեր պատմական անցքերը, ծուեր և ծամածուեր այն հստակ, պայծառ տեսությունը, վոր կոչվում եր պատմության մատերիալիստական ըմբռնում: Այս դեռ վոչինչ: Այն յերկրորդ կետը, վոր նրան հասցնում եր ջղայնության գաղաթնակետին, և ինքն իրեն չեր ուզում ներել, դա պատմության մատերիալիստական ըմբռնման վորոշ ճշմարտությունն եր, վորին իր մեջ մտնելուն չկարողացավ դիմադրել այն որից, յերբ նա սկսեց ուսումնասիրել այն իր ամբիոնը պահելու պարզ մտադրությամբ:

Ե

Առավոտյան, Յելենա Բեգլարովնան գրտավ, վոր ամուսինն գգալի չափով նիհարել ե, դեմքի վրա յերևում եյին տանջանքի հետքեր:

— Այս գիշեր լավ չե՞ս քնել, — հորցրեց նա:

— Ինչո՞ւ յես հարցնում:

— Այնպես...

Պրոֆեսորը չպատասխանեց և սկսեց յերթևեկել սենյակում:

— Վերջապես ի՞նչ կա, ասա՛:

— Յես հիմնական սխալ կատարեցի, վոր

իմ կյանքի պրոֆեսիան ընտրեցի պատմութ-
յունը:

— Ապա ի՞նչ անեցիր:

— Ունեցի լսողություն, ավելի լավ եր
դասնայի յերաժխտ, յերաժշտության ամեն
մի նստայում հո կարելի չեր իղեղողիւս վո-
րանել:

— Իսկապես, ի՞նչ լավ կլինեիր յերաժխտ
լինեցիր, յես ել այսքան չեցի ձանձրանա,—
ասաց Յեկենա Բեղլարոյիսան անկեղծորեն:

Պրոֆեսոր Մելիք-Անդրեասյանին դուր չե-
կալ կնոջ այդ հայտարարությունը, մտե-
ցալ նրան և ասաց.

— Ձանձրանում ես, հա՞, աղավնյակս,
յես չեցի իմանում:

— Վերջապես ամեն ոք նապոլեոն, Մե-
տերնիկ, Ռոբեսպիեռ, Մուրաբո:

— Մի՛րաբո,— ջղայնորեն ուղղեց պրո-
ֆեսորը:

— Թող լինի Միրաբո, հետո ի՞նչ:

— Յերանի՛ յես քեզ պես մտածեցի,
Մուրաբո, Միրաբո, Թերէս և Մեհրաբով,
ի՞նչ տարբերություն, բոլորը մեկ է:

— Իհարկէ:

Պրոֆ. Մելիք-Անդրեասյանը յետև դար-
ձավ հանկարծակի, նայեց կնոջ և հոնքերը
հիտաժ, բայց զսպլած զայրույթով, ասաց:

— Միրարոն Ֆրանսական մեծ հեղափոխության գեղեցկությունն եր:

Պրոֆ. Մելիք-Անդրեասյանը չափազանց գոհ մնաց, վոր Յելենա Բեգլարովնան չըծիծաղեց, վորովհետև նրա համբերությունը հասել էր այլևս պայթելու վտանգավոր կետին:

Այլևս վո՛չ վոք չխոսեց: Պրոֆեսորը մի առ ժամանակ սենյակում յերթևեկելուց հետո՝ մոտեցավ հայելուն, ուղղեց հոնքերը, բեխը և միրուքը և դուրս յեկավ փողոց: Նրան զարմացրեց փողբիկ մայրաքաղաքի արտակարգ յեռուզեռը:

— Ի՞նչ պատահեց, վոր այս դանդաղ, ծուլ և հորանջող ժողովուրդը հանկարծ սկըսեց աշխուժանալ, ի՞նչ պատահեց, վոր արևմելյան այս քաղաքը, յետ ընկած, խուլ և անաղմուկ այս քաղաքը հանկարծ բռնվեց արտակարգ շարժման տենդով: Ի՞նչ պատահեց:

Դիտեց պրոֆեսորը չորս կողմը և հիշեց հին արևը, վոր հակինթյա անդորրությամբ իջնում էր տափակ կտուրների վրա և ծփում: Ինչքա՞ն նոր մարդիկ կան այս քաղաքում, մարդիկ, վորոնք յերբեք չեյին յերազել Յերեվանը, ահա այստեղ են, աշխատում են գիշեր և ցերեկ, կարծես, տազնապում, փողոցներում քարեր, քարտաշների մուրճերի ներդաշնակ ուիթմը և գիլ հնչյունը, ահա բարձրանում են շենքերը, տափակ, միջարկանի կը-

տուրները մնում են սովերի տակ, արևը վեր
և բարձրացել և նստել բարձր շենքերի վրա,
մանուկների ճիչը բարձր և և ջինջ, առվի ըն-
թացքն անգամ արագացել և, արևի վոսկյա
փրփուրը թափվում և Արարատյան դաշտի
վրա, չկա հին ծարավը, խորություններից
բարձրանում են ջրերը վեր, նորից հոսում
նեղքե և դարավոր առջորդող հողը ժպտում և
ջրի գովության մեջ:

Ի՞նչ պատահեց:

Պրոֆ. Մելիք - Անդրեասյանը, վորին
պատմությունն ըմբռնելու համար, հարկա-
վոր եյին միայն դոկումենտներ, չէր կարող
տեսնել կյանքի կոնկրետ փաստը: Ժամանա-
կակից պատմությունը պետք և հնանար, թաղ-
վեր ժամանակի սև փոշու տակ, դառնար
թուղթ և քար, վորպեսզի նորից դուրս հան-
վեր և դառնար բուռն հետաքրքրության ա-
ռարկա:

Նա անցավ նոր ավարտած մի շենքի առա-
ջից, հետաքրքրությամբ դիտեց շենքը—մեծ
լուսավոր պատահաններ, կապույտ թերթիկ-
ներով սքողված կտուր, շենքի ճակատը ներ-
կած վարդագույն, լուսամուտներից դիտելով
ներքնակողմը, տեսավ, վոր յուրաքանչյուր
պատը և առաստաղը ներկված են դանազան
դույններով և արտակարգ պայծառ գույներով,
տեսավ և այդ նոր շենքի կողքին հին տունը,
տափակ կտուրով, կուչ յեկած, իսկ ճակատին

մի քանի սյուներով հենարաններ, վորպեսզի փուլ չգա հոգնած փոքրիկ տունը:

— Այս նոր շենքը դեղեցիկ է, — ասաց նա ինքն իրեն և անցավ, չկարողանալով մոռանալ հենարաններով տունը, վոչ թե նրա համար, վոր այդ փոքրիկ տունը բաղդատության դըրեց նոր կառուցված շենքի հետ, այլ նմանեցրեց իրեն: Ինքն էլ, պրոֆ. Մելիք-Անդրեասյանը, պարզապես հենարաններ եր կառուցել իր հոգու և իմացականության առաջ, վոր չփլչեն:

— Մինչև յե՞րբ. — հարցրեց նա իր մըտքում և ստացավ կոնկրետ պատասխան:

— Թերևս ավելի շուտ, քան այդ փոքրիկ հենարաններով շենքը:

Պրոֆ. Մելիք-Անդրեասյանն այդ կոնկրետ պատասխանից հետո վատ չզգաց, ընդհակառակը, նրան պատեց զարմանալի քաղցրագին մի թախիժ և իրեն պատկերացրեց նրստած, մենակ, տխուր, բայց հավիտենականորեն անդորր, իր սեփական հոգու ավերակների մեջ:

Յերբ հասավ նա հին մի յեկեղեցու առաջ, վոր արդեն փակված եր հաճախորդ չըլինելու պատճառով, կանգ առավ մի պահ: Յեկեղեցու ներսը տիրում եր կատարյալ լըռություն, հին մեղեդիները քարացել էյին տխուր, մռայլ և դեռևս խնկավետ պատերի վրա:

Պրոֆ. Մելիք-Անդրեասյանն իսկապես
դրաց խնկի հոտը, նրա ռնգունքներն անաս-
նական սեռային հուզումով բացվեցին և դո-
ղացին հոտի հաճույքից: Այնինչ, իրականու-
թյան մեջ, յեկեղեցու ներքնակողմում պատերը
թացացել էյին կոուրի կաթելուց, և ջրից կազ-
մրված հետքերը սև ոճերի նման գալարվում
էյին պատերն ի վար: Յեկեղեցու բովանդակ
միջնուրտը հաղեցված էր պատերի, հատակի
և սուստաղի մզլածությամբ:

Յեթե բաց լիներ յեկեղեցին, պրոֆ. Մե-
լիք-Անդրեասյանը կմտներ ներս անալյաման,
թեկուզ ժամերգություն չլիներ, թեկուզ վո՛չ
վոք չլիներ, կնստեր մի անկյուն, թախիծով
և խաղաղությամբ կխոկար լուռ, սրբերից և
սաստիածներից լքված տաճարում, վորտեղ մի
ժամանակ, ըստ պրոֆ. Մելիք-Անդրեասյա-
նի, յերգվել էյին ամենահոգեցունց մեղեդի-
ները, վորտեղ հրեշտակներ էյին յերգել, սպի-
տակ թևերով, կլոր, գիրուկ և քնքուշ
փորերով, վորոնց մեջտեղում փայլում էյին
պորտերը, վորպես մարելու մոտ աստղեր յեր-
կրնքում ճիշտ լուսաբացից քիչ առաջ, վորտեղ
ինքը՝ աստված, ահեղ և ահավոր, իջել է
չառ անգամներ՝ ունկնդրելու իր յերկրպագու-
ների ստրկամիտ աղերսը, իջել է մարդկան-
ցից անտեսաճնելի:

Պրոֆ. Մելիք-Անդրեասյանը չհամարձակ-
վեց խաչակնքել յերեսը, բայց նրա հոգին խո-
նարհվեց մինչև յեկեղեցու շեմքը:

Մի քիչ քայլելուց հետո, մեքենայորեն ժամացույցը նայեց և տեսավ, վոր արդեն ժամը 6-ին քառորդ պակաս է, իսկ նրա դասախոսությունը սկսվում էր ճիշտ ժամը 6-ին։ Շտապեց դեպի ուսումնական հիմնարկը, բարձրացավ ամբիոնը և սկսեց իր դասախոսությունը։

— Անցյալ դասախոսությամբ, — սկսեց Պրոֆ. Մելիք-Անդրեասյանը, — մենք հաստատեցինք, թե ինչպես մարդկության վողջ գործունեությունը, մի խոսքով՝ ամբողջ պատմություն հիմքում դեր են խաղում միայն նյութական կարիքները։ Այսորվա դասախոսությունը նպատակ պիտի ունենա այս տեսությունյամբ, այսինքն՝ պատմություն մատերիալիստական ըմբռնման տեսությունյամբ, քննել Արևմտյան Յեվրոպայի խոշորագույն մի յերկրի՝ Անգլիայի պատմությունը...

2

Պրոֆ. Մելիք-Անդրեասյանը և Յելենա Բեգլարովնան հետեվյալ խոսակցությունն ունեցան մեռոնեփեքի առթիվ։ Պրոֆեսորն ուզում էր զնալ Նջմիաժին և ներկա լինել արարողություն, բայց Յելենա Բեգլարովնան կատեգորիկ կերպով դեմ զնաց նրա այդ ցունկություն։

— Այնինչ յես ուրիշ կերպ եյի մտածում, — ասաց Յելենա Բեգլարովնան։

— Ի՞նչ կերպ, — հարցրեց Պրոֆեսորը։

— Յե՛ս գնամ, իսկ դու մնա:

— Ի՞նչ ե տարբերությունը:

— Տարբերությունն այն ե, վոր յես չեմ պատմության ամբիոնի պրոֆեսորը:

— Իսկ դու անկեղծորեն ցանկանում ես ներկա լինել:

— Այո՛, — պատասխանեց Յելենա Բեզարովնան տխրությամբ, խորը, խորը տրիսթյամբ:

Նրա արտասանած յերկու վանկում զգալի եյին տխրության բոլոր պատճառները — ինչո՞ւ լիներ այնպես, վոր հավատքի համար անգամ մարդ չկարողանար ազատորեն արտահայտվել: Մի քիչ հետո՝ Յելենա Բեզարովնան այսպես ել արտահայտվեց, վորին պրոֆեսորը պատասխանեց.

— Ո՞վ ե քեզ կաշկանդում, ո՞վ ե քո վտար կապում:

— Վո՛չ վոք:

— Ել ինչո՞ւ յես կարծում, վոր չի կարելի ազատորեն դիմել դեպի հավատքը:

— Ի հարկե, վո՛չ վոք ինձ չի կաշկանդում, միայն неудобо, և ապա քո ամիրիոնը, ի՞նչ լավ կլիներ, լինեյիր յերաժիշտ:

Յելենա Բեզարովնայի և պրոֆ. Մելիք-Անդրեասյանի Եջմիածին գնալու ցանկությունների մեջ կար խորը տարբերություն: Յելենա Բեզարովնան հավատում եր աստծուն, յեկեղեցուն, հավատում եր անկեղծորեն, բայց վախենում եր իր ամուսնու դիր-

քից, բայց պրոֆ. Մելիք-Անդրեասյանը չէր հաւատում, նրա համար աստօժու գոյութեան գաղափարը չափազանց ծիծաղելի յեր, բայց ցանկանում եր գնալ, վորովհետև դա հոգեպես մխիթարում եր իրեն, յեկեղեցին, տաճարը, մոմերը, խոնկը, մթնշաղում ուրվագծով խաղաղ գմբեթները, մինչև անդամ տիրացույի ռնգային և ռիթմից դուրկ յերգր, այդ բոլորը իրեն վերադարձնում եյին հին կյանքը, պատմութեան հին հասկացողութեանը, այդ բոլորը սերտորեն, անքակտելիորեն կապված եյին պատմութեան այն իդեաների հետ, վորոնք միս ու վոսկոր եյին դարձել իր մեջ, և կարողութեան չուներ դուրս վռնդելու և յերբեմն զգում եր, վոր նորամույժ իդեաները հներից մի քանիսին արդեն դուրս են վռնդել և սկսել են խորը արմատներ գցել իր ներքին աշխարհում:

Յերբ Նժմիածին գնալու վճռական կիրառին հասավ, թե պրոֆ. Մելիք-Անդրեասյանը և թե Յելենա Բեգլարովնան վորոչեցին չգնալ:

Մնալով քաղաքում և յերկար մտածելով, պրոֆ. Մելիք-Անդրեասյանը յեկավ այն յեղրակացութեան, վոր սխալ արավ ինքր հարելով հեղափոխութեան, կարելի յեր մնալ չեղոք, պասսիվ, կատարել իր առաջ դրված ապագեմիական պարտավորութեանները և ապրել հոգեկան կատարյալ խաղաղութեան մեջ: Կային մարդիկ, վորոնք, չհատկելով քաղա-

քական հեղաշրջման հետ, ճիշտ ե, կորցրին
իրենց գիրքերը, բայց ահա պրոլետարիատը
յեղիւ ե այնքան բարի, վոր նրանցից ամեն
մեկին եւ ապրեցնում ե եւ վատ չի ապրեցնում.
վոմանք թարգմանությամբ են զբաղված, վո-
մանք կոնսուլտանտներ են, վոմանք մինչեւ ան-
գամ հիմնարկների գիրեկտորներ են, բայց
ինքր, մնալով իդեոլոգիական ֆրոնտի ամենու-
հրատապ կետում, պատմության ամբիոնում,
ստիպված ե ապրել տաղնապի ե մղձավանջի
մեջ:

Եջմիածին գնացողները վերադարձան:
Վո՛չ վոք նկատի չառավ նրանց ներկայու-
թյունն Եջմիածնում, նրանք պատմեցին, վոր
Եջմիածինը վերադարձնել եր ամբողջու-
թյամբ, հին շունչը թարմացած, բայց հնի
ցարմանալիորեն հոգեցունց բույրով, սավառնել
եր հին յերկնքից, հին հողի ե դարավոր քարերի
վրա:

Իսկ ինքը, պրոֆ. Մելիք-Անդրեասյանը,
ինչո՞վ եր զբաղված հենց այդ որը—ջանում եր
գտնել Փրանսական մեծ հեղափոխության
անտեսական պատճառները, ճշնելով բոլորո-
վին անտեսել Փրանսական վոգու առանձնա-
հատկությունը հեղափոխության պատճառնե-
րի մեջ:

Մեռոնեփեքից մի քանի որ հետո, հենց հաջորդող յերկուշաբթին, պրոֆ. Մելիք-Անդրեասյանը, պատճառարանելով, վոր Եջմիածնի գրադարանում գտնված մի պատմական յերկասիրություն իր համար անհրաժեշտ է, մեկնեց Եջմիածին:

Նա անցավ ծաղկավետ այգիներով, ծառերի բույրը, կարծես, խտացած, ծփում էր ալիքի նման, ծառերը, վողջ կանաչությունը լողանում էին իրենց իսկ բույրի ծովում: Անցավ նա փոքրիկ, կարծես, անբնական բլրակների կողքով և զգաց, վոր այդ բլրակների տակ թաղված էին քաղաքներ, սրբազան կուլտուրայի մնացորդների մի վողջ պատմություն: Յերբ հանդիպեց նա տուաթին խաչքարերին և նորից տեսավ ընկած և կոտորված քարերի վրա քանդակված խաղողի չըփնաղ վողկույզները՝ դառնորեն ծիծաղեց՝ «ինչպե՞ս կարելի յե, — մտածեց պրոֆեսորը, — արվեստի այս բեկորների տակ գտնել տեսական ինչ վոր բազա, սրանց քանդակող անհայտ արվեստագետի հոգում ինչպե՞ս կարելի յե բռնադատորեն դնել տնտեսական կարիքի վողորմելի հերոսին»:

Կառքը մտավ Հռիփսիմյաց վանքի ստվերը: Առավոտյան դովր վետվետում էր ստվերում, կառքի ձիերը, վորոնց սահուն մեջքերից և ջրվեժի նման հոսող բաշերից քրք-

տինքի գոլորշի յեր բարձրանում, վանքի
ստվերի գովում վրնջեցին արեւային վճիտու-
թյամբ:

Ամբողջ Արարատյան դաշտում արեգակը
շարժվում եր կոհակ առ կոհակ, բարձր, սեռ,
յերկնասլացիկ կաղամախիները ծփում էյին՝
արեգակի հորդ կոհակներում, և վանքերի
գմբեթները արեւի միջից սլանում էյին դեպի
յերկինք:

Պրոֆ. Մեյլիք-Անդրեասյանը հասավ
վանքի բակը և ուղղակի դիմեց գրադարանը,
վորտեղ ընդունեց նրան գրադարանի վարիչը,
ճաղատ գլխով, ժպտերես, հոգնած աչքերով
և հանդարտարարո մի մարդ, վորը նախքան
պրոֆեսորի ներս մտնելը, կռացել եր միջնա-
դարյան մի յերգչի ձեռագրի վրա և ճգնում
եր կարդալ:

Գրադարանի վարիչը զարմացավ, տես-
նելով պրոֆ. Մեյլիք-Անդրեասյանին իր գրա-
դարանում, վորովհետեւ հաստատ համոզված
եր վոր նրան, բացի Արեւմտյան Յեվրոպայի
պատմությունից, վոչինչ չեր շահագրգռում:
Պրոֆ. Մեյլիք-Անդրեասյանը ճանաչված եր,
վորպես չափազանց նեղ մասնագետ:

Սովորական վողջույնից հետո՝ պրոֆե-
սորը խնդրեց վարիչից գերմանացի ճանա-
պարհորդի մի գիրքը և, ստանալով այդ գիր-
քը, քաշվեց և սկսեց կարդալ:

Նրա ընթերցումը յերկար շտեկեց, լիերթատեց մի քանի գլուխ, կարգաց մի քանի եջ, իբր լին նոթեր վերցրեց և վերադարձեց գիրքը:

— Արդեն վերջացրի՞ք ձեր աշխատանքը.
— Հարցրեց գրադարանի վարիչը զարմացած:

— Այո, ինձ շատ բան հարկավոր չեմ, միայն մի քանի թվական տվյալներ, ուրիշ չուզինչ:

— Ի՞նչ կա չկա քաղաքում, — հարցրեց գրադարանի վարիչը:

— Վոչի՞նչ, միևնույնն է, ինչ վոր գիտեք:

— Ասում են հիդրոշենի կառուցումը վերջանում է, — հարցրեց գրադարանի վարիչը, վորի աչքերում վայլում եր ուրախության ցուրբը:

— Ո՛ր, այդ տեսակետից, այո՛, կառուցումները շատ լավ են, — պատասխանեց պրոֆեսորը բոլորովին զարմացած, վոր միջնադարյան յերդէի ձեռագրի վրա կռացած մարդը, գրքի այդ վորդը, հետաքրքրվում եր ժամանակակից կյանքով, այն ել ամենավերջին նորություններով — հիդրոշեն:

— Ձեզ մոտ հետաքրքրական բաներ չառկան, գեթ յեղեկ են:

Գրադարանի վարիչը գլխի չընկալ:

Պրոֆ. Մելիք-Անդրեասյանը շարունակեց.

— Ապրելով այստեղ, այս վորմերի սովերների տակ, ստանում եք հին կյանքի

բույրը, ահա մի քանի որ առաջ ձեզ մոտ տեղի ունեցավ շատ նշանակալից դեպք:

Գրադարանի վարիչը նոր գլխի ընկավ, վոր պրոֆեսորն ակնարկում եր մեռոնեիւքի տոնին:

— Այո՛, հավաքվեցին այստեղ հազարավոր մարդիկ, հեռավոր քաղաքներից և գյուղերից, լցվեցին, թափվեցին իրար վրա, կեդտոտեցին ամեն տեղ, տեսնո՞ւմ եք, այժմ լուսամուտն անգամ չի կարելի բաց անել, դարչելի հոտը խուժում ե ներս և շնչել չի կարելի, ահա ձեզ հին բույրը, — ասաց գրադարանի վարիչը թթվեցնելով յերեսը:

Այն ժամանակ միայն պրոֆեսորն զգաց, վոր իսկապես, գյուղի փողոցներից անցնելիս, մանավանդ վաճի բակը մտնելիս՝ այդ դարչելի հոտը փչում եր կատաղի կերպով:

— Նո՛ւ, վոչի՛նչ, կանցնի, — վախկոտ հարեց պրոֆեսորը, կարծելով, վոր գրադարանի վարիչի անդորր բնավորությունը կարող ե պայթել:

— Այո՛, կանցնի, իհարկե կանցնի, ամեն կեղտոտություն վերջ ի վերջո կըտարալուծվի, կհոսի, կգնա, բայց ահա քանի որ ե, մաքրում են՝ վերջ չկա, — ասաց գրադարանի վարիչը:

Պրոֆ. Մելիք-Անդրեասյանը չուզեց խոսակցությունը շարունակել, վորովհետև զգաց, վոր Նշմիածնի գրադարանում, հին և սրբազան գրքերի և սրբազանագույն ձեռագրե-

րի մթնոլորտում ապրում ե մի մարդ, վոր հոգու մինչև հատակը զգվել ե այդ շրջապատից ե, յեթե հնարավոր լինի, կկտրի, կպոկի այդ գրադարանը հողից, կթուցնի մի տեղ ե նորից կկռանա գրքերի վրա՝ հաճույք զգալով տքնաջան, քրտնաթոր ե մաշեցնող աշխատանքից:

Պրոֆ. Մելիք-Անդրեասյանը, դուրս դալով գրադարանից, մի պտույտ գործեց մայր յեկեղեցու շուրջը, աչքի պոչով նայելով կաթողիկոսանիստ շենքին ամեն անգամ, յերբ գալիս հասնում եր յեկեղեցու գլխավոր դռանը: Նրան դիտողը յերբեք չեր կարող կարծել, վոր նա եջմիածին եր յեկել հատկապես մրտնելու կաթողիկոսի մոտ: Պրոֆեսորը գննողաբար նայեց չորս կողմը, անձկությամբ սպասեց, վոր վանքի բակը մի՛չ մոք չմտնի, մորպեսզի սողոսկի դեպի վեհարանը, բայց կային ցանցառ անցուղարձեր ե դարմանալիորեն դանդաղ: Հուսահատվելով, վոր յերթեկությունը կը դադարի, նա մտավ, պարզապես սողոսկեց դեպի այսպես կոչված վեհարանը:

Ը

Կաթողիկոսը պրոֆ. Մելիք-Անդրեասյանին չեր սպասում, վորովհետև մինչև անգամ չեկան այն մարդիկ, վորոնց սպասում եր. ե ուր կմնար Մելիք-Անդրեասյանը, վորոն ամենաչուս բեկվողներից մեկի համբավն եր վայելում:

— Ձերդ սրբության ներողությունն եմ
խնդրում, — ասաց պրոֆեսորը կաթողիկոսի
ձեռքը համբուրելուց հետո, — վոր մեծ տոնի
որը չկարողացա ներկայանալ:

— Քրիստոսի հոտի մեջ բաղում են մո-
լորյալք, պրոֆեսոր, — պատասխանեց կաթո-
ղիկոսը դավադին շեշտով:

— Ձերդ սրբությանը, իհարկե, մտնում
է մեր գրությանը մեջ, — շարունակեց պրոֆե-
սորը, մի ակնթիվ վրա տեղավորվելով:

— Իսկ դուք մտնո՞ւմ եք ի՞մ դրության
մեջ, — հարցրեց կաթողիկոսը:

Հարցը շատ շեշտակի յեր, պրոֆեսորը
հարմար համարեց լռել:

Լուսթյանից ուղտվելով՝ կաթողիկոսը
դանդաղ ավելաց:

Մառան անմիջապես ներս մտավ և ըն-
տանի կերպով մտնեցավ կաթողիկոսին: Վեր-
ջինս դրպանից հանեց փոքրիկ բանալիների
մի փունջ և, բռնեցով նրանցից մեկը, ասաց.

— Պրոֆեսորին թեյ կը բերեք լիմոնով:

Մառան բանալին վերցրեց և դուրս գնաց:

Պրոֆեսորը լսել էր, վոր զառամյալ կա-
թողիկոսն իր տան անձնական տնտեսությանը
խտախփ հետևող մի մարդ էր, բայց յերբեք
չեր կարծում, վոր պահարանի բանալին պա-
հում էր հայրապետական պատմութեանի գրք-
պահում:

— Այժմ լիմոն դժվար ե՞ ճարվում, պրո-
ֆեսո՛ր, — ասաց կաթողիկոսը:

— Քաղաքում բռնություն չկա, Ձերդ սրբութիւն, — արձագանքեց պրոֆ. Մելիք-Անդրեասյանը մեքենայորեն:

— Այո՛, լսել եմ: Ասացե՛ք, խնդրեմ, լիմոնին ի՞նչ պատահեց, — հարցրեց կաթողիկոսն այնպիսի լուրջ և ցավազին տոնով, կարծես, հարցնելու լիներ, թե՛ ի՞նչ պատահեց հայկական հարցին:

Մի պահ նորից լռութիւն տիրեց: Պրոֆեսորն անձկությամբ սպասում եր լսելու կաթողիկոսի կարծիքը մեր որերի մասին, ուստի, մի կողմ դնելով ծառայի մատուցած թեյը, յերկյուղածությամբ և դողդոջուն ձայնով հարցրեց:

— Ի՞նչ ե մտածում Ձերդ սրբութիւնը:

— Ինչի՞ մասին:

— Նո՛ւ, առհասարակ:

— Գիտե՞ք, պրոֆեսոր, մենք մի վարդապետ ունենք, Պոլսից ե, նախ քան վարդապետ ձեռնադրվելը՝ յեղել ե դեղադործ, այդ մարդըն ինձ համար ուղղակի փրկութիւն հանդիսացավ:

— Ի՞նչ տեսակետից, Ձերդ սրբութիւն, — խորապես հետաքրքրվեց պրոֆեսորը:

— Դեղորայք, կոմպրես, բանկաներ, կլիզմա, և այլն:

— Հրաշալի յե՛...

Պրոֆեսորը յերկարեց թեյին, մտադրվեց այլևս հարց չտալ, բայց մի ներքին ուժ մղեց նրան:

— Ձերդ սրբություն, յես կը ցանկանայի իմանալ ձեր կարծիքը մեր եպոստայի մասին:

— Եպոստայի... վողջ աշխարհը գծվելու յես, դավակա, այս դադափարը... ի՞նչ են ասում դրան, հըմ. այս...

— Սոցիալիզմը:

— Այո՛, սոցիալիզմը, դա վոր դուրս յեկավ, վողջ աշխարհը տակն ու վրա յե անելու:

— Իսկ ի՞նչ է, Ձերդ սրբության կարծիքն այդ մասին, — հարցրեց պրոֆեսորը:

— Քրիստոնեական յեկեղեցու պետին այդ հարցը, յես կարծում եմ, ավելորդ է, արդդ է, բացի քրիստոնեական հավատքից չի կարող ուրիշ վո՛չ մի հավատք դոյություն ունենալ մեզ համար:

Պրոֆ. Մելիք-Անդրեասյանը պատրաստվեց մի հարց ես տալ, բայց քրիստոնեական յեկեղեցու պետը նորից դանդ տվեց: Ծառան մտալ ներս:

— Բարնաբա՛ս, — սկսեց կաթողիկոսը, — բանալիները չբերիր:

— Այս բոպեյիս, վեհափառ, — ասաց Բանաբասը և փութկոտ վազեց դուրս:

— Մի քիչ անուշադրություն և պըրծա՛վ... վոչինչ չի մնա պահարանում, — ջղային ավելացրեց քրիստոնեական դարավոր յեկեղեցու պետը:

Պրոֆ. Մելիք-Անդրեասյանը վորոշեց այլ ևս վո՛չ մի հարց չտալ։ Յերբ Բարնաբասը վերադարձրեց բանալիները, կաթողիկոսը դրեց զրպանը և գոհունակությամբ շնչաց։

— Այսպե՛ս։

Պրոֆեսոր Մելիք-Անդրեասյանը, ողորկելով Բարնաբասի ներս մտնելուց, թեյը թողեց կիսատ, վրտի կանգնեց և մոտենալով կաթողիկոսին.

— Ձերդ սրբություն, — ասաց նա, — թույլ տվե՞ք հեռանալ։

Կաթողիկոսը յերկարեց ձեռքը պատրաստանելով համբուրելու, բայց պրոֆեսորը սեղմեց այն և հեռացավ։

Վանքի բակում, մի ծառի թանձր և հաճելի ստվերի տակ կանգնած, պրոֆեսորը Մելիք-Անդրեասյանն ամաչեց ինքն իրենից։ «Ահա հնի սիմվոլը, ահա այն անձնավորությունը, վորի մեջ պետք ե բարձրացած լինելին հին հավատքի մարմարյա սյուները, բայց լիմոն, պահարան, բանալիներ և կլիզմա...», — շնչաց։

Նա հեռացավ ծառի ստվերից, մի քիչ առաջացավ և կանգնեց լուսավորչի յեկեղեցու ստվերի տակ։ Արդեն սկսվել եր միջոցեյի խեղդիչ տապը։

Աղեխարչ, վողբադին մի լուություն եր չորել ամբողջ վայրում, չըջապատր նման եր վիթխարի մի դամբարանի, վորի մեջը նայում ե արևը՝ նախ քան հողը թափվելը։

Տապ: Ամառային միջորե: Արևը, հնոցի նման, կրակ եր մաղում:

Պրոֆեսորի սիրտն սկսեց տուչորվել արաբատյան լայնարաց և հակինթյա հրդեհում:

Մի շուն, մաղերը տեղ-տեղ թափած, պառկել էր մի ծառի շվաքի տակ, լեզուն դուրս ծված: Հավերը կախ էյին գցել թևերը: Բալկում կային մարդիկ, բայց չէյին խոսում: Նստաբառնների վրա նստած մարդիկ մինչև անդամ իրար յերես չէյին նայում, լուռ էյին: Լուռ էյին նրանք մեռելների նման:

Պրոֆ. Մեյլիք-Անդրեասյանը մտավ յեկեղեցի:

Հինավուրց դանձարանը բաց եր: Պրոֆեսորն առաջացավ դեպի դանձարանը: Մարդկային հոգու փրկության նվիրված այս յեկեղեցուն կից կառուցված դանձարանը լեցուն էր դույնողուն, Նվառվուռն մետաքսներով, արծաթով, վոսկով և ադամանդներով:

Ահա մի վոսկյա թև, բթամատն ու մատնեմատն իրար կպցրած: Լուսավորչի աջն է, պարուրված վոսկով: Մի պառավ կին կռացած, մաշած և դեղնած՝ մոտենում է, համբուրում վոսկին և խաչակնքում: Պրոֆեսորի աչքին խփում է լուսավորչի աջի կողքին դրված մոմապատ, կեղտոտ դանձանակը: Պառավը հեռանում է առանց փողի մի փոքրիկ բեկորով հրճվեցներու դանձանակի փորը:

— Լուսավորչի աջն է, — ասում է պրո-

Ֆեոդորին մի վարդապետ, վոր հսկում է հա-
վատացյալներին՝ գողություն չանեն:

Վարդապետը խոսքն ուղղում է հատկա-
պես պրոֆեսորին, վորովհետև նրա դեմքի
վրա նշմարում է թեթև հեգնական ժպիտ:

— Դիտեմ, — պատասխանում է պրոֆե-
սորը:

Նրա պատասխանի տոնը զգացնել է տա-
լիս վարդապետին, վոր ինքն ավելի լավ դիտե-
այդ, քան նա: Պրոֆեսորն ուշի ուշով նա-
յում է վարդապետին, վորը, թվում է պրոֆ.
Մելիք-Անդրեասյանին, աղավաղված մի նա-
խադասություն է, վորից չի կարելի վորևե
իմաստ դուրս բերել, ամենաչափը մի ծամա-
ծռված անճոռնի բովանդակություն:

Բայց հայր սուրբը սիրալիր է: Մոտենում
է նա վոսկեհուռ և ադամանդակուռ մի տու-
փի, խաչ հանում, բաց անում և ասում.

— Սա այն գեղարդն է, վորով ծակեցին
Քրիստոսի կողը:

Պրոֆ. Մելիք-Անդրեասյանը լուռ է, ան-
շարժ, նրա կողքին կեցող մի ծերունի հավա-
տացյալ դողում է վարդապետի հայտարարու-
թյունից, նրա հոգին սարսուռ է զգում, իսկ
պրոֆեսորը մտածում է. «վո՞ր սաղիմացի
վաճառականն արդյոք բերել է յերկաթի այդ
կտորը և մեծ գնով ծախել հայոց մայր Աթո-
ռին, բայց այդ վաճառականը մի անգամ է

խարել, իսկ Եղմիածնի վանականները դարեր
խափել են միամիտ ժողովրդին:

Պրոֆ. Մելիք-Անդրեասյանը դուրս յեկավ
զանձարանից և մտավ յեկեղեցու ներսը:
Մի ուրիշ վարդապետ մկրտություն ե անում:
Ավագանի ջուրը կեղտոտ ե, բայց չի կարելի
փոխել—սուրբ ե: Չանազան հիվանդություն-
ներ ունեցող մանուկներին կոխում են միև-
նույն ջրի մեջ, վարակում են իրար: Մկրտող
վարդապետը, ծուլությունից հոգնած, մի
յերգ ե թափում միրուքից վար, սրբում ե յե-
րեսաներին սկզբնական մեղքից, այն առա-
ջին մեղքից, վոր այրում ե կենդանական և
բուսական վողջ որդանական աշխարհը:

Պրոֆեսորն ուշի ուշով դիտում ե հին ար-
վեստագետների գործերը—խորանի առաջա-
մասի մարմարների վրա նկարված առաքյալ-
ներն ու սուրբերը, վորոնք ամեն տարի ոճա-
ռով լվացվում են, բայց նկարներն ավելի և ար-
վելի յեն պայծառանում: Հիանում ե պրոֆեսո-
րը ներկերի այդ տեխնիկայով, հիանում ե այն
արվեստագետներով, վորոնք իրենց հանձա-
րը մաշեցին միջնադարյան հոգու խորշակա-
լից անտապատում:

Պրոֆեսորը դուրս յեկավ յեկեղեցուց:

Մի ծերուկ գյուղացի, արցունքն աչքե-
րին, խաչտկնքում ե ինչ վոր հայրապետի
գերեզմանի առաջ: Դողդոջուն ձեռքեր ունի
այդ գյուղացին, արևից այրած և ակոսված

դաժան ճակատ, յերեսի խորշոմները, խորը կնճիռները պատմում են արարատյան հողի խուժդուժ պատմությունը, տապը նրա տու-
հորել ե, կծկել, չորացրել և խանձել:

Պրոֆեսորը մոտենում է նրան:

— Իեզ հող տվե՞լ են— հարցնում է նա:

— Տվել են:

— Ի՞նչ ես անում այստեղ, ինչո՞ւ յես վանք յեկել:

— Յեկել եմ աղոթելու, վոր հողս բերք տա:

Պրոֆեսորը նրան համոզում է, վոր աղո-
թելով հողը բերք չի տա, պիտի լսել միայն
գյուղատնտեսական հրահանգչին:

— Ե՛հ, փուճ ե:

— Ի՞նչը:

— Բոլորը:

Գյուղացին ձեռքը թափ ե տալիս ու անց-
նում:

Պրոֆ. Մելիք-Անդրեասյանը մտնում է
Հազարապատ:

Կլոր դարավոր ծառի տակ նստած է մի
կին—լուռ: Պատի տակին մի հավ—թեւերը
ձգած մինչև գետին:

Անսահման վողբ և լուրթյուն:

Անկյունի սանդուխներից վար ե իջնում
մի յեպիսկոպոս, ձեռին մի հարթուկ: Նա-
յում ե յեպիսկոպոսը պրոֆեսորին—կարծես,
ուրիշ աշխարհից ե դիտում նա:

— Լճում ջուր կա՞, — հարցնում ե պրոֆեսորը ծառի տակի կնոջը:

— Շոգ ե, — պատասխանում ե կննը և յերեսը շուռ տալիս:

Այո՛, չափաի խոսել: Վիթխարի հնոցը վառված ե, հրդեհված ե Արարատյան դաշտը: Այդ բովանդակ մթնոլորտում մենակ լուսավոր կետը Արարատի դադաթի ճյուղն ե, վր հեռվից հեռու դովության պատրանք ե տալիս:

Պրոֆեսորը նայում ե շուրջը, վո՛չ մի կետ այդ վանքում այնքան համապարփակ վողբերդական չե, վորքան Ղազարապատը: Կարծես, դարեր չի ավլվել, չի մաքրվել այդ վայրը, ինչ վոր քամին ե բերել և ինչ վոր քամին ե տարել՝ այդպես ել մնացել ե, անխնամ, անծաղիկ, ինչպես վանականի հոգին: Այդ վայրը մինչև անդամ գուրկ ե քրիստոնեական միտախցիկից: Հոգե պատերը քայքայվում են, հեարդհետե հավասարվում են գետնին, վոչ մի մեկուղիա, վոչ մի հրեշտակի անտեսանելի թև:

Պրոֆեսորը քայլերն ուղղում ե դեպի լիճը:

Ջուր չկա, հատակում մի քանի վռտնաչափ տիղմ ե նստած, մեջը՝ հազար ու մի կեղտոտություններ—ձմերուկի կեղեվ, շորի գույնը գուռն կտորներ, փտած խնձորներ և մի փոքրիկ նավակ, խրված տիղմում:

Պրոֆեսորը վաղուց ե չի յեղել այդ վայրում, ինչ վոր չի համապատասխանում այդ վայրը նախկին իր տպավորություններին:

Ի՞նչ ե պատահել:

Այո՛, հիշում ե հիմա:

Առաջ մի մթին անտառ եր տարածվում շաշտում, լճի ձորակից սկսած, անտառից վոչ մի հետք չի մնացել, վո՛չ մի ծառի վոչ մի արմատ չի յերևում, հիմնահատակ կործանվել և ամեն ինչ, մի աներեկութ, հզոր և դաժան ձեռք արմատախիլ ե արել ամեն մի շնչող ծառ կամ մի անադորույն հրդեհ լավիլիզել ե բովանդակ անտառը:

Յերեկոյան զողանջում ե դարավոր յեկեղեցու զանգը: Այդ զանգը, մի ժամանակ, հավատացյալների բուռն բազմություն եր հավաքում յեկեղեցում: Այժմ զողանջին պատասխանում ե մեկ հատիկ պառավ կին, աչքերը, ճրպուռտած, ականջները ծանր, դողդղում: Պառավը հպարտ ե, վոր յերեկոյան ժամերգությունն սկսվում ե իր համար և իր համար ել վերջանում ե: Ուրեմն աստծու ականջը բոլորովին ազատ ե լսելու միայն իր ձայնը, և պառավը, կատաղած յեռանդով, կանչում ե աստծո փրկել իր մեկ հատիկ անհավատ վորդուն, վոր լուչեիկ ե և կովում ե յեկեղեցու դեմ:

Գիշերը լուսին կա, լիալուսին, վոր սպտակ և կլոր հացի նման բացվել ե, կա-

սրույտ յերկնքում: Յեկեղեցիներն և մատուռներն սիլուետները վորոշապես դժագրւում են լուսնի շողերի տակ: Գիշերվա մեջ արարատյան հին վոճն ավելի ուելլեֆ ե, ավելի ցայտուն, քան ցերեկը:

«Յեւ կան մեզանում մարդիկ,— մտածում ե սրոֆ. Մելիք-Անդրեասյանը,— հենց յես ինքս նրանցից եմ, վոր փարված են հիւսյդ վոճին, չգլթալված մոմապատ մատուռների մթնաշաղում: Պետք ե հանգիստ թողնել այդ վորմերը, խաչքարերը, բարձր, նեղ դիմահար պատուհանները, մեզ հարկավոր են կառուցքւմներ, վորոնց մեջ արեգակը հեղեղի, ծեփի բոլոր պատերը վոսկով ու արծաթով: Մեզ հարկավոր չեն աղամանդակուտ վարադուլրները, մեզ հարկավոր չեն սրմահյուս շուրջառներ, վոսկեպատ խաչվառներ և ոսկնեղեններով հաղեցած հայրապետական գաւաղաններ, մեզ հարկավոր են պարզ, կարմիր դրոշներ, թող տան մեզ լուսածոր վոճ, առանց մթին խորշերի, խորհրդավոր անկյունների, առանց ներքնագավիթների և դամբարանային սրահների, մեր քանդակները թող լինեն առանց մանվածապատ դժերի, առանց իրար մեջ անցած խրթին կորուսյունների, թող լինի այնքան պարզ և այնքան շողշողուն, ինչպես արարատյան խաղողը»:

Գիշերն իջնում ե խաղաղությամբ, կարծես, մեռելները վեր են բարձրանում և հսկում

դիշերը, վոչ մի շարժում, վոչ մի վոտնա-
ձայն, լուել եւ և բնության ձայնը: Յեվ հեռա-
վոր դաշտերում հասունանում եւ ժողովրդա-
կան հացը, լուսնի շողերի տակ ծփում եւ ցո-
րենը:

Լուսնի շողերից ձգվել են մատուռների
յերկար ստվերները սև քղամիտների նման:
Այդ ստվերների միջից հանկարծ դուրս ե դա-
լիս մի վանական, լուսնի շողերի տակ նա
նման ե թաթերը վեր բարձրացրած՝ սև արջի,
վոր անճոռնի քայլերով առաջանում ե:

Ահավոր մի դամբարան ե այդ վայրը:



Վանքի բակում, սև քարերից կառուցված
յերկհարկանի վարդապետական խուցերում
այժմ ապրում են աշխարհականներ: Պրոֆ.
Մելիք-Անդրեասյանը թխթխկացնում ե մի
լուսամուտ, վոր ներկված ե կերոսինի՝ լամպի
դեղին լույսով:

Բացվում ե դուռը:

— Համեցե՛ք, — սիրալիր ձայնում ե մի
բարձրահասակ, յերկար մազերով, քառա-
սունը նոր թեվակոխած մի կին:

— Ճարտարապետը տա՞նն ե:

— Այո՛, այո՛, տանն ե, համեցե՛ք:

Պրոֆեսորը ներս ե մտնում: Սենյակի
դռան վրա արդեն ճարտարապետը դիմափո-
րում ե նրան: Միջանցքում կիսամուկ ե:

Ճարտարապետը չի հանաչում ներս մտնողին, բայց պատրաստակամ ասում է.

— Համեցե՛ք, համեցե՛ք:

Ճարտարապետի ձայնը ժամանակակից չէ, կարծես, ինչ վոր մի հին, լքված և մութ մատուռներում մի ծանր իր է ընկնում, և պատերն արձագանքում են, կարծես, ծանր մուրճով կարծր բաղալան են հղկում, և քարի փրշրանքներն աղմկելով թափվում են վար: Մտնում են սենյակը: Ճաշի մեծ սեղանի վրա ճարտարապետը դժադրում է ինչ վոր հին մի յեկեղեցի: Բարձրահասակ կինը խնամքով և գուրգուռանքով հավաքում է գծադրական պիտույքները: Ճարտարապետն աթոռ է տալիս Մելիք-Անդրեասյանին:

— Ի՞նչ լավ արիք, վոր յեկաք:

— Բայց դիշերն այստեղ եմ մնալու:

— Հենց դրա համար ել ասում եմ:

Ճարտարապետը արևից այրած դեմք ունի: Թխացած և աննուրբ նրա դեմքի ամեն մի անկյունը պատմում է արևի հետ ունեցած նրա կատաղի պայքարի պատմությունը: Խիտ, սև և կամարաձև հոնքերը կարնիզի նման կախվում են նրա սև և հին պատմության խորությունից նայող աչքերի վրա՝ ինչպես ուռենու ճյուղքը մութ, բայց ջինջ անլազանի վրա: Լաշնաթիկունք է նա, վոսկրոտ, դիմացկուն, ինչպես վիթխարի շենքի տակ հպարտությամբ կանգնած սյունը, և առաջին

հայացքից ներշնչում ե նա ֆիզիկական, սև աշխատանքի հերոսը, յեթե իմացականությամբ շողշողուն աչքերը չճառագայթեն նրա վողջ կերպարանքի վրա:

Յերկար չի տևում, և ահա խոսակցությունը դառնում ե Նջմիածնի նյութական կուլտուրայի մնացորդների մասին:

— Դեռևս ուսումնասիրված չեն,—ասում ե ճարտարապետը՝ հակառակ իր սեփական թանկագին ուսումնասիրությունների գոյության:

— Այդ բոլորի վոճը մեզ այժմ կարող ե աջակցել ստեղծելու...

Ճարտարապետը չի թողնում, վոր պրոֆ. Մելիք-Անդրեասյանը շարունակի:

— Այդ վոճը մեզ վո՛չ մի աջակցություն չի կարող ընձեռել, այդ վոճը թաղվել ե նրան ստեղծող հասարակության հետ, մինչև անգամ մենք այժմ չենք կարող այդ վոճով յեկեղեցի կառուցել, յեկեղեցական վոճն անգամ ամեն մի դարաշրջանում փոխվել ե:

— Ելի փոփոխման որենքը,—ասաց պրոֆեսորը իր մտքում և շարունակեց յսել ճարտարապետին, վորի ձայնը, կարծես, ճարձատում եր գիշերվա ծոցում:

— Բայց չե՞ վոր դուք մեծ վոգլեւորությամբ ուսումնասիրում եք,—ասաց պրոֆեսորը:

— Այո՛, ուսումնասիրում եմ ինչպե՛ս պատմություն:

— Իսկ նրանց ուսումնասիրությունը վոչնչո՞վ պիտանի չե մեզ, ժամանակակից-ներկա համար:

— Դա ուրիշ հարց ե, այո՛, շատ պիտանի յե տեխնիկայի տեսակետից, յեթե այժմյան կառուցող ճարտարապետն իմանա, թե ինչպե՞ս դմբեթները կանգնած են, թե ինչ շաղախով են դիմանում պատերը յերկար դարեր, յեթե իմանա, թե նյութերի ինչ հարակցություն գոյություն ունի, նրա արվեստն ավելի կազնվանա, բայց վո՞ճ, վոճն անդարձ թաղված ե, պրոֆեսո՞ր:

— Ձե՞ք ցավում, ճարտարապետ:

— Ի՞նչ բանի համար:

— Անդարձ թաղված լինելու համար:

— Վո՞չ,— յերկարացրեց ճարտարապետը քմծիծաղով, մահը և ծնունդը հավիտենական սրենքներ են, պիտի մեռնեն և պիտի ծնվեն:

Յերբ լուսթյուն տիրեց՝ ճարտարապետը շարունակեց:

— Իմ ուսումնասիրություններն ունեն մի այլ նպատակ ևս—ճշտել մեր կուլտուրայի վերելքի և անկման շրջանները, մեր պատմագիրները, ավելի շուտ տոհմագիրները՝ սխալ պատկերացում են տալիս այդ մասին, մեր նյութական կուլտուրան այլ քան ե տեսում մեզ, քարը չի ստում, ինչպե՞ս իշխաններից, նախարարներից և մեծ յեկեղեցականներից տոհմագրությունն արձանագրելու պատվեր ստացող պատմագիրները:

— Նյութական կուլտուրայի վերելքն
ավելի վաղ և կատարված, քան դրահիւն
կուլտուրայինը, — հակաճառեց պրոֆեսորը:

— Ներեցե՛ք, պրոֆեսոր, մենք ճարտա-
րապետություն ունեյինք, նախքան դրերի
գյուտը:

— Այդպես չե Արեմտյան Յեվրոպայում:

— Նայած յերկրի պայմաններին:

— Ի՞նչ պայմաններ:

— Առաջին հերթին տնտեսական պայ-
մանները:

— Դուք մարքսիստ եք, ճարտարապետ,
— հանկարծ հարց տվեց պրոֆ. Մելիք-Ան-
դրեասյանը:

— Վո՛չ, չեմ ուսումնասիրել դժբախտա-
բար, հայոց հին կուլտուրան ինձ ամբողջովին
էլանել և:

— Բայց դուք... կարծես...

— Ասում են, վոր ամեն մի բարեխիղճ
գիտնական հասնում և մարքսիզմին, — ընդ-
միջեց ճարտարապետը:

— Ax, tak! — յերկարաձգեց Մելիք-Ան-
դրեասյանը:

Բարձրահասակ կինը սեղան բերեց սպի-
տակ լավաշ, պանիր, կարադ և սամանլարը:

— Ի՞նչ նեղություն, տիկին, — ասաց պրո-
ֆեսորը:

— Տանը կով ունենք, պրոֆեսոր՛ը, — պա-
տասխանեց ճարտարապետը:

Մինչ նրանք ընթրում եյին և խոսում,
բարձրահասակ կինը պրոֆեսորի համար ան-
կողին սարքեց՝ հաստ բրդի դոշակով, սպի-
տակ սալանով, մեծ բարձով և բրդե վերմա-
կով:

Յերբ բարձրահասակ կինը սեղանը համա-
քեց և հեռացավ, պրոֆեսորը և ճարտարա-
պետը հանկեցին քնելու: Ճարտարապետը,
առանց բրդե դուլպան հանելու, սլառկեց և
բրդե վերմակը քաշեց վրան:

— Տոթ ե, ճարտարապետ, ի՞նչպէս կա-
րողանում եք այդպէս քնել:

— Տարիներեց ի վեր վարժվել եմ, — պա-
տասխանեց ճարտարապետը խուլ ձայնով,
վորովհետեւ գլուխը դրեթե կորած եր վերմա-
կի տակ:

Պրոֆեսորը, խնամքով ծալեց վերմակը,
դրեց մի կողմ և սալանը քաշելով վրան, քը-
նեց:

.

Լուսաստղն եր կախվել ջինջ յերկնքում,
յերբ պրոֆեսորը չողից և քաղաք գնալու մը-
տահոգությունից, զարթնեց և այլևս չկարո-
ղացավ քնել:

Լուսաստղի մարդարայա փայլը, ջինջ
յերկինքը, ոգի թարմությունը և լուսամուտ-
ների վրա կախված ծառի տերեւների շնչոցը

գրավական եյին հորդառատ, վարար արևի,
վոր քաղցրացնելու յեր արարատյան խաղողը՝
Յերբ ճարտարապետը զարթնեց, պրո-
ֆեսորն հազնված եր և կարդում եր ճարտա-
րապետի գրքույկներից մեկը: Պրոֆեսորը վեր
կացավ գնալու, ճարտարապետը բռնեց նրան.

— Մինչև նախաճաշ չանեք, չեմ թողնի:

Պրոֆեսորը թախանձագին խնդրեց թույլ
տալ, վորովհետև ցանկանում եր բռնել առա-
ջին ավտոբուսը:

ժ

Աճապարեց նա վանքի բակից դուրս, ինչ-
պես ծանր և ցավազար մղձավանջից խուսա-
փող մարդը, դեպի ավտոբուսների կայանը:
Նա շտապում եր դեպի տուն, դեպի իր աչ-
խատանոցի առանձնությունը, մարդկանց աչ-
քերից հեռու: Սպասելով ավտոբուսին՝
նրա թիին կպավ մեռոնեփեքի հյուրերի թո-
ղած կեղտոտության սուր հոտը, ամբողջ
մթնոլորտը փոխվեց նրա աչքերի առաջ, ծա-
ռերի արանքներից յերևացող մայր յեկեղեցու
գմբեթը մռայլվեց, վանքի բակից դուրս յե-
կող վարդապետի սիլուետը որորվելով ան-
ցավ իբրև մի կոշմար, բայց վանքի բակի
պատերի դրսի կողմում ընկած բազարի
մի կրպակում չողջողում եյին խաղողի վող-
կույղները: Պրոֆեսորը մոտեցավ այդ կր-
պակին, վերցրեց մի վողկույղ իր ձեռքով,
դրեց կշեռքի մեջ և՝

— Կշռիր, — ասաց :

Վերցրեց վողկույզը : Պրոֆեսորին թվաց, վոր աստղերի մի փոքրիկ փունջ ե բռնել ձեռքում, այնպես քթթում եյին հատիկները :

Պրոֆեսորը, ակամա, անզգալիորեն, ասաց մտքում .

— Հողն ե սա, հողի լույսը, վոչ մի մը տածում չի կարող ստեղծել այս վողկույզը, յեթե վոչ հողը, մատերիան :

Փրցրեց նա մի հատիկ և նետեց բերանը : Հատիկը դեղին եր, բայց դեռ չափազանց թթու, պոկված եր դա իր թփից աշունից առաջ, ողբի իբրև ձև և գույն : Այդ թթվությունից անգամ պրոֆեսորն ստացավ հողի ուրախ սարսուռը :

Ավտորուսը սլացավ բխբխական դաշտի կրծքով : Ճանապարհի յերկու կողմերում հեռուն փռվում՝ եյին վոսկյա արտերը, վորոնց վրա կանգնած եր հրավառ դեղին արևը :

Քաղաք մտնելիս՝ Պրոֆ. Մելիք-Անդրեասյանը լսեց պիոներների զիլ ճիչը, վոսկյա ճիչ, վոր դուրս եր բղխում կարմիր վզկապներով պարուրված կոկորդիներից : Պրոֆեսորն ուրախ զգաց՝ հեռուն թողնելով տխուր միջնադարը, Արաբատի ստորոտում կուչ յեկած և հավիտենապես ծնկաչոք մատուռների տըրտում աղերսանքը :

Յերբ տուն հասավ նա՝ արանց սպասելու վորևէ հարցումի Յելենա Բեգլարովնայի կող-

մից, կարծես, վո՛չ թե արտասանեց, այլ տըն-
քաց ինչ վոր:

— Փլվում ե ամեն ինչ, կործանվում ե ա-
ռանց ձայնի, լռության մեջ:

Յեկենա Բեգլարովնան վռչինչ չհասկա-
ցավ և հարցրեց.

— Ի՞նչ կար, լա՞վ եր:

— Այո՛, լավ եր—լիմոն, պահարան, բա-
նալիներ, կլիզմա...

Յեկենա Բեգլարովնան ասլչեց և յեկավ
այն յեղրահացության, վոր Եջմիածնում
պրոֆեսորի ստամոքսը, վոր յերբեմն խան-
գարվում եր, նորից և խանգարվել, և հարկ ե
յեղել լիմոնով թեյ խմել և կլիզմա անել:

— Ի՞նչ կերար, վոր ստամոքսդ փչացավ,
— հարցրեց Յեկենա Բեգլարովնան միամտո-
րեն, բայց մտահոգ:

— Շատ բան կերա, ամեն ինչ խառնեցի
իրար, դանադան անմարսելի բաներ:

— Ախր դու շատ զգուշ եյիր, ի՞նչ պա-
տահեց թեզ այս անգամ:

— Ե՞հ, յերբեմն լինում ե, վոր մարդ
անարխիստ ե դառնում, յերբեմն մինչև ան-
գամ հարկավոր ե այդ:

— Վեհափառին տեսա՞ր:

— Տեսա:

— Ի՞նչ եր անում:

— Կլիզմա՞...

Յեկենա Բեգլարովնան սրտնեղեց:

— Լուրջ բան եմ հարցնում:

— Լուրջ եմ պատասխանում, Լեւոնդիւս:

Յեյկենա Բեդլարովնան դուրս գնաց՝ հաստատ համոզված լինելով, վոր պրոֆեսորը ջղայնացել եր ստամոքսի փշանալուց, ավելի լայլ եր մյուս որը հարցեր տար, միւսն ու յննէ, նա պիտի շարունակեր այդ հեղնական պատասխանները:

Պրոֆ. Մելիք-Անդրեասյանը, ազատվելով կնոջ հարցապնդումից, քաջվեց իր աչիւստանոցը և, առաջը դնելով պատմության մեծահատոր մի գիրք, սկսեց կարդալ և վերլուծության յենթարկել Մետերնիխի քաղաքական դործունեյությունը:

Այդ նիւեր նա յերկար կռացավ գրքերի վրա: Յեյկենա Բեդլարովնան չիմացավ թե՛ պրոֆեսորը յե՛րբ յեկավ ննջարան և քնեց, բայց յերբ առավոտյան դարթնեց՝ նա տեսավ մի յերկտող, քեղանի վրա դրված բաժակի բերանին, վորպեսզի անպայման աչքի զարնի: Յեյկենա Բեդլարովնան կարդաց յերկտողը. «Առավոտյան դատասխոսությունն չունեմ, մի դարթեցնի, ուշ եմ քնել»:

Յեյկենա Բեդլարովնան դուրս յեկավ տնից և գնաց բաղար:

ԺԱ

— Իսկապէս չգիտեմ, թե ինչպէս փոխվեց մեր կենցաղը, առաջ միշտ հանդիսւում է յինք իրար, խոսում, զրուցում, իսկ հիմա՞—ժողովներ, նոր խնդիրներ, հների վերագնահա-

տում և այլն...—ասաց պրոֆ. Մելիք-Անդրեասյանն ամսոսանքի շնորհիվ, հանդիպելով հին ընկերներից մեկին, վոր դասախոսում էր միևնույն Բարձրագույն Ուսումնական Հիմնարկում, իբրև հայ հնագույն գրականության պրոֆեսոր:

Յերկու պրոֆեսորները, անցյալում լինելով մոտիկ մարդիկ, յերկար ժամանակ էր, ինչ չեյին տեսակցել, վո՛չ մի յերեկո չեյին հանդիպել իրար ընտանեկան հարկի տակ, թեև շատ անգամ եյին պատահել իրար փողոցում, բայց միշտ յերկուսն ել ածապարանքի մեջ: Յուրաքանչյուրը գիտեր մյուսի մասին, թե ինչ փոփոխությունների էր յենթարկվել, ինչպես էր ընդունել նոր կարգերը:

— Բայց այդ բոլորը դուք լավ եք տեսում, վոչի՞նչ, — հեղնաբար նետեց Պրոֆ. Տեր-Մինասյանը:

Պրոֆ. Մելիք-Անդրեասյանն անմիջապես զգաց հեղնանքի սուր խայթոցը, բայց կարողացավ պահել իր սառնասրտությունը:

— Իզուր եք կարծում, պրոֆեսո՛ր, — պատասխանեց Մելիք-Անդրեասյանը ցամաքին շնորհիվ:

— Ներեցե՛ք, — ելի հեղնեց Տեր-Մինասյանը:

— Ծառի վրա իջած կացնի հարվածից ծառը ճիչ չի արձակում, լուռ արտասվում և, պրոֆեսո՛ր, — ասաց Մելիք-Անդրեասյանը:

Պրոֆ. Տեր-Մինասյանը նոր զգաստացալ .
վոր Մելիք-Անդրեասյանի հոգում կոտորւմ
եր ինչ վոր մորմոք, ուստի անմիջապես փո-
խեց իր հեղնական տոնը:

— Ծառի անալոգիան սխալ է, պրոֆե-
սոր, մենք մարդիկ ենք:

— Մենք մարդիկ ե՛նք... — մրմնջաց Մե-
լիք-Անդրեասյանը և լռեց:

Նրանք բարձրացան դեպի բլուրը: Աչնա-
նալերջին յերեկոններից մեկն եր, բլուրի վրա
տարածված պարտեզների ծառերի մեջ արդեն
դեղնած և կարմրած տերեւներ կային, կային
և տերեւներ, վորոնք քամին քշել, բերել եր և
ձգել ճանապարհի վրա, մարդերը փայլում
եյին իրիկնային վարդադույն շողերի տակ,
ծառների նվազը բարձրանում եր և փշրվում
քաղաքի վրա վերեւից թափվող արեւի ճաճանչ-
ների նման:

— Վո՛չ մի փոփոխություն առանց ցավի
չի կատարվում, — վերսկսեց խոսակցությունը
Մելիք-Անդրեասյանը, բայց փոփոխություն
հարկավոր է:

Վերջին նախադասությունը նա արտա-
սանեց ընդդժմած տոնով:

— Նայած ի՛նչ չափի, — ավելացրեց Տեր-
Մինասյանը:

— Շուրերը հնանում են, կեղտոտվում,
հարկավոր է փոխել, նորերը հագնել, — առաջ
Մելիք-Անդրեասյանը:

— Նորից, յես կարծում եմ, դուք սխալ անալոգիա յեք անում, շորերը տարբեր են, մտածողությունը՝ տարբեր:

— Մատերիան ինքը փոխվում և, հազար ու մի արտահայտություններ ստանում առանց ձեր կամքը հարցնելու, մաշվում և շորը, վերածվում և այլ ձևի, դա մատերիան և:

— Շորը մատերիա յե, այո՛, իսկ մի՞տքը, մտածողությունը, պրոֆեսո՛ր:

— Ուղեղը ուզում էք ասել, պրոֆեսո՛ր, — հարց տվեց Մելիք-Անդրեասյանը:

— Այո՛, ուղեղը:

— Ձե՞ վոր ուղեղն ել մատերիա յե, նյութերի վորոշ քանակությունների բախտավոր միացումը, և մտածողությունն այդ նյութերի վորոշ սլայմաններում և վորոշ ձևերում միացման արտահայտությունն և:

— Հասկացա, ձեր ասածը տպնձն և, պրոֆեսո՛ր, դա վուլղար մատերիալիզմն և, մենք ևս կարդում ենք, պրոֆեսո՛ր, — պատասխանեց Տեր-Մինասյանը վերստանալով իր սուր հեղնանքի շեշտը:

Մելիք-Անդրեասյանը զայրացավ:

— Առհասարակ փոփոխությունն ընդունո՞ւմ եք, թե վո՞չ, — հարցրեց նա:

— Այո՛, իսկ յես արդեն ասացի — դոյություն ունի չափ:

Մելիք-Անդրեասյանն ուղեց խոսել, բայց Տեր-Մինասյանը չարունակեց:

— Բացատրեմ միտքս: Յես ձեզ չեմ մեղադրում, վոր դուք յենթարկված եք մեծ, յես կասեյի, հսկայական փոփոխությունների, ձեր մասնագիտությունը, Արևմտյան Յեւրոպայի պատմությունը, այնքան եւ մեծ ցավեր ձեզ թերեւս չի պատճառի, և չի պատճառել, չափազանց հեռու յե այդ առարկան ձեր հոգուց: Ներեցե՛ք,— ամէլադրեց ծեր-Մինասյանը, յերբ տեսավ, վոր Մելիք-Անդրասյանն ուղում ե խոսել,— յես այն կարծիքը չունեմ, վոր դիտական մտքի համար կան ոտար առարկաներ, բայց այնուամենայնիւ՝ Արևմտյան Յեւրոպայի պատմությունը նման չե Հայոց *Հնագույն Գրականության պատմության, այստեղ ինդիքն այլ ե—այստեղ ամեն մի բառ կապված ե մարդու, հայ մարդու, ուղում եմ ասել, արյան գնդիկների հետ և ամեն մի փոփոխություն բուռն ուսկիցիայե առաջացնում. այլ ե, արո՞թեսո՛ր, վստահացնում եմ ձեզ, բոլորովին այլ ե Անգլիայի՝ Հնդկաստանը գրավելու պատճառների վորոնումը, տնտեսական շարժիչ ուժերի մատնանըչումն այդ գրավման մեջ, այլ ե Պորենացու, Բյուզանդի թողած ժառանգության, սրբազան ժառանգության ինչ վոր մատերի-ալիստական վերլուծությունը: Նախ և առաջ այս բոլորը թաղված են պատմության ամենահեռավոր խորության մեջ և չի կարելի բռնադրոսիկ կերպով փորոնել և գտնել ինչ վոր տնտեսական պատճառներ:

Պրոֆ. Տեր-Մինասյանի ձայնը դողում էր, յերկուղածությամբ և խորագույն հարգանքով արտասանելով հին պատմության անունները:

Պրոֆ. Մելիք-Անդրեասյանը, չնայած Տեր-Մինասյանի խոսքերի նրա վրա արած մորոշ ազդեցության, չնայած նրա զգացած ջերմացնող և հոգին խաղաղեցնող թախծին՝ բուռն կերպով բողոքեց, վոր Արևմտյան Յեփրոպայի պատմությունը մասնագետի համար այնքան նվիրական չէ, վորքան հայոց հին գրականության պատմությունը: Նա հիշեց և անկեղծորեն և տխրությամբ վերապրեց այն մորմոքը, վոր կրեց նա Նապոլեոն Բոնապարտի մասին իր կազմած տարիների հաստատ տեսակետը փոխելու կապակցությամբ:

Պրոֆ. Տեր-Մինասյանը համալստաց ներան:

— Այս բոլորի մեջ կա դիրքը չկորցնելու մտահոգություն, պրոֆեսոր, արի բոլորս ել խոստովանենք, — ասաց Տեր-Մինասյանը և առձիջապես ավելացրեց, — յես վո՛չ վոքին չեմ մեղադրում այնուամենայնիվ:

— Իսկ դուք ինչո՞ւ չկորցրիք ձեր դիրքը: — Հարցրեց Մելիք-Անդրեասյանը, ինքն ել իր կարդին դիմելով հեղնանքի:

— Սպասեցե՛ք և կտեսնեք, մի՛ շտապեք:

— Ահա անցել է այսքան տարի:

— Արևմտյան Յեփրոպայի պատմությունն ավելի զգայուն կետ է, քան թե հայոց

Հնադույն դրահանութեան պատմութիւնը,
բայց կը հասնեն և դրան, մի՛ շտապեք:

— Ուրեմն, յետև հասնեն դրան, դուք ևս
կհալատաք փոփոխման անփոփոխ որենքին,
պրոֆեսոր, արդյոք դուք կը մեղադրե՞ք ձեզ
այն ժամանակ:

— Ձգիտեմ, ինչ կանեմ, բայց առայժմ
չարունակում եմ յերկրպագել հին աստված-
ներին, — պատասխանեց Տեր-Մինասյանը,
խոր հոգոց հանելով և բլուրից դիտելով ան-
հուն դաշար և դաշտը յեղերող արդեն մըռայ-
ած լեռնաշղթան և միևնույն դաշտում ծովա-
ցած կապույտ մշուշը, վորին սրաթև ճեղքում
էին յեկեկտրական լամպերը: Բլուրի վրա
սուր կերպով զգալի յեր փշենու և աշնան բան-
ջարեղենի թարմ բուրումը:

Նրանք յետ դարձան բլուրից: Յերբ մի
քիչ առիթ յեղալ Մելիք-Անդրեսայանի հա-
մար ինքն իր մեջ ամփոփվելու՝ յեկավ այն
յեզրակացութեան, վոր պրոֆ. Տեր-Մինաս-
յանի կարճ ակնարկութեան մեջ կար շատ
ճշմարտութիւն՝ դիւրքը չկորցնելու վերաբեր-
մամբ: Նա ջանաց ճգնել աղատվել այդ յեզ-
րակացութեանից, չկարողացավ, վորովհե-
տե յերբ մարդ մենակ ե՛ անխուսափելիորեն
և դաժանորեն անկեղծ ե:

— Ինչպե՞ս ե Յելենա Բեզարայնան, —
հարցրեց հանկարծ պրոֆ. Տեր-Մինասյանը,
յերբ բլուրը բարձրացող մի քանի անցորդնե-
րի բարձր խոսակցութիւնը խանդարեց նրան

լսել թռչունների իրիկնային յերգը, վոր կախ-
ված էր ծառների յուրաքանչյուր տերեւից:

— Լավ ե, շնորհակալ եմ, — պատասխա-
նեց Մելիք-Անդրեասյանը և ավելացրեց: —
Կանայք հեշտությամբ են հաշտվում նորի
հետ:

Տեր-Մինասյանը ծիծաղեց:

— Թե քրիստոնեությունը և թե մահմե-
դականությունը առաջին անգամ կանայք ըն-
դունեցին, — ավելացրեց նա:

— Ինչպե՞ս ե Սոֆիա Սերգեյեւնան, —
հարցրեց Մելիք-Անդրեասյանը:

— Լավ ե, այստեղ չե, գնացել ե Թիֆ-
լիս:

— Արձակուրդո՞ւմ:

— Վո՛չ գնացել ե, այնպե՞ս, իսկ յեւ
մնացել եմ այստեղ արձակուրդով:

Նրանք սիրալիր բաժանվեցին:

— Այսոր ուշացար, — առաց Յելենա Բեդ-
լարովնան:

— Պրոֆ. Տեր-Մինասյանի հետ մի պը-
տույտ արինք:

— Ի՞նչ եր ասում.

— Խոսում եր, այնպե՞ս, դեսիդ գենից,
Սոֆիա Սերգեյեւնան գնացել ե Թիֆլիս:

— Լա՛վ ե. անցյալ տարի յեւ գնաց, —
ամեն տարի գնում ե:

— Նախանձեցի՞ր:

— Բան առաջի՞ր...

Յելենա Բեդլարովնան չկարողացավ ասե-

միքըն ասել, ներս մտալ Վահրամ Անանյանը:
Յեկենա Բեգլարովնան, տեսնելով նրան,
բացականչեց:

— Վաղրամ Տիգրանիչ, միշտ լալ ժա-
մանակին եք գալիս, միշտ մի բան փրկում
եք:

Վահրամ Անանյանը սիրալիր ժպտաց և
ուղղվեց Պրոֆեսորի դրքերի պահարանը:

Վահրամ Անանյանը Պրոֆ. Մելիք-Ան-
դրեասյանի ամենաուշիմ աշակերտներից մե-
կըն ևր և մասնավոր ընդունակություն ևր
հայտնաբերում դեպի պատմությունը: Պրո-
ֆեսորը մերջերս նրան ընդունում ևր իր տանը
դրեթե ամեն ոք, բաց անում պատմական
դրքերի հարուստ գրադարանը նրա առաջ և
թույլ տալիս նրան, վոր ուլովի այդ գրադա-
րանից յայնորեն: Անանյանը ժամերով մնում
ևր պրոֆեսորի տանը, կարդում, դրում, նո-
թեր վերցնում, թեյում այնտեղ և այլևս հա-
մարում ևր այդ տան անդամներից մեկը: Թե
պրոֆեսորը և թե Յեկենա Բեգլարովնան այն-
քան եյին վարժվել նրան, վոր պատահեր, չը-
ղար՝ զոում եյին նրա բացակայությունը:

— Վաղրամ Տիգրանիչ, յերեկ վո՞րտեղ
եյիք, — հարցնում ևր Յեկենա Բեգլարովնան:

— Ներեցե՛ք, Յեկենա Բեգլարովնա, հոգ-
նած եյի, ուղեցի պարզապես թրև գալ, —
պատասխանում ևր Անանյանը:

Անանյանի համար ել Մելիք-Անդրեասյան

նի տունը անխուսափելի մի յերևույթ եր,
այնտեղ չեղած ուրը ինչ վոր մի դատարկու-
թյուն եր զգում:

ԺԲ

Բարձրագույն Ուսումնական Հիմնարկու-
թյան վարչությունը վորոչեց պրոֆեսորներին
մեկին գործուղել արտասահման, վեց ամսով,
հատկապես Պարիզ, և վարչության նիստում
գրեթե վո՛չ մի առարկություն չեղավ, յերբ
հիմնարկության դիրեկտորն առաջարկեց
պրոֆ. Մելիք-Անդրեասյանի թեկնածությու-
նը: Ամբողջ հիմնարկության մեջ պրոֆ. Մե-
լիք-Անդրեասյանն այն անձնավորություն-
ներից մեկն եր, վոր յերկրի խորհրդայնաց-
ման գրեթե առաջին իսկ որերից, անվերա-
պահ կերպով կանգնած եր խորհրդային
սոցալիզմի վրա և վարչության վո՛չ մի ան-
դամը չեր կարող վորեւե լուրջ առարկություն
հարուցել նրա թեկնածության դեմ:

Բայց պրոֆ. Մելիք-Անդրեասյանի հա-
մար այս վորոշումը գրեթե անակնկալ եր,
վորովհետև արտասահմանյան գործուղման
մասին վո՛չ մի խոսակցություն չեր յեղել նա-
խապես:

Հիմնարկության դիրեկտորը յերբ պրո-
ֆեսոր Մելիք-Անդրեասյանին հաղորդեց այդ
վորոշումը, վերջինիս գլխում ծագեց անմի-
ջական կերպով մի լուսավոր միտք—դնալ ար-
տասահման և չվերադառնալ, վերջ տալ այն

դաժան մաշեցնող յերկվության, վոր գոյություն ուներ իր ներաշխարհում, մանավանդ, վոր վերջերս սլաշարն ավելի յեր անողոք դառնում իր մեջ, վորովհետեւ նորն իր մեջ բաղականին տնել եր, վճռական ճակատամարտ սկսելու հնի դեմ: Նորը նրա մեջ լսնում եր դանդաղ, բայց հաստատուն արմատներով, տնում եր ինքն իրեն, իսկ հնին ողնում եր ինքր, վոր տեղի չտա: Ինչքան հինը տեղի յեր տալիս՝ այնքան թախիժ և մորմոք եր կուտակվում նրա մեջ, ուղինալով հաղթահարել արտաքին մոայլության՝ պրոֆեսորը բաղմապատիկ ուժ եր սպառում, մի ուժ, վոր յիժէ գործադրեր նորի արապ մորդեգրման համար՝ կը հասներ հաղթական վախճանների: Յեվ հանկարծ, յերբ նրա տռաջ բացվեց արտատահմանի ճանապարհը, նա գտավ, վոր դա ճակատադրական, եր և յեկել եր փրկելու իրեն, փրկելու իր հողու թշվառությունը:

— Անշուշտ Յեյենա Բեգլարովնայի հետ կարող եմ մեկնել, — ասաց նա Հիմնարկու թյան դիրեկտորին:

— Գործուղումը միայն մի անձնավորության համար ե, պրոֆեսոր, այնուամենայնիվ կարելի չե գիմել, սկզբունքորեն յես դեմ չեմ Յեյենա Բեգլարովնայի հետ գնալու գաղափարին, — ասաց դիրեկտորը:

— Ո՞ւմից ե կախված այդ. — հարցրեց պրոֆեսորը:

— Կառավարությունից:

Սոսակցությունը յերկար չտևեց: Մեկիք-
Անդրեսայանը դուրս յեկավ դիրեկտորի կա-
մինետից և ճգնեց ամփոփել մտքերը:

«Յեթե Յելենա Բեզլարովնայի հետ
գնամ, — մտածեց նա, — չեմ վերադառնա, իսկ
յեթե մենա՞կ մեկնեմ»:

Պրոֆեսորը չկարողացավ պատասխանել:
Ինչպես կլիներ կնոջ դրությունը, յեթե ինքը
գլավաճաններ խորհուրդների իշխանության
դեմ: Ինչպես կնայեյին մարդիկ իր վրա կը-
նոջը լքելու համար, արդյոք կկարողանա՞ր
հաղթահարել խղճի խայթը, Յելենա Բեզլա-
րովնան չե՞ր թքի իր վրա, չե՞ր խայտառակ-
վի ինքը վողջ պատմության մեջ:

Չկարողանալով վո՛չ մի յեզրակացության
հասնել՝ ուղիղ տուն չգնաց, քայլեց մի փողո-
ցով դեպի քաղաքի կենտրոնը: Մտավ կոոպե-
րատիվ մի խանութ պապիրոս վերցնելու: Չը-
կար:

— Ինչո՞ւ չկա, — սրտենդած հարցրեց
նա:

— Յես ի՞մ, չկա, ինտելիգենտ մարդ ես,
հասկացի՛ր, — կոպիտ պատասխանեց կոոպե-
րատիվի ծառայողը:

Պրոֆեսորը դուրս յեկավ սոստիկ ջղա-
նացած: Մտավ մի մասնավոր խանութ: Պա-
պիրոս կար, բայց յերեք անգամ թանկացը-
րած, վերջրեց և մտքում հայհոյեց:

— Սա ի՞նչ բան է, գոնե արտասահմա-

նում ուղածդ կլինի: Դասախոսիր չորս ժամ,
հոգնիր, չարչարվիր, տարիների սովորածդ
վերադնահատիր, փոխիր, գոռով հավատա և
սկսվիրոս ել չկա ծխելու, ջղերը հանգստաց-
նելու, — ասաց նա մտքում և կրկնեց միև-
նույն բառերը մի քանի անգամ:

Մինչև տուն վերադարձը պրոֆեսորն ար-
տասահմանից չվերադառնալու գրեթե վճռա-
կան վորոշում տվեց, բայց վախենում եր
պարզ կերպով ասել այդ մտքում: Յերբ նա
հայտնեց կնոջը հիմնարկության վորոշումը,
կինը բացական չեց.

— Միասի՛ն:

— Ախորժակդ մի՛ սրի, միայն ինձ են ու-
ղարկում, բայց յես խնդրեցի քեզ ևս թույլ
տան:

— Յեթե միասին դնանք, ել չենք վերա-
դառնա, — պարզապես հայտարարեց Յելենա
Բեգլարովնան:

— Յես զղջացի, վոր քեզ հաղորդեցի այս
վորոշումը, — ասաց պրոֆեսորը:

— Ինչո՞ւ:

— Այդ միտքը կարող ևս դուրսն ելհայտ-
նել և ահա վոչ միայն քո գործը կը փչանա,
այլև իմը:

— Գի՞թեմ, վոր դուրսն ել ասեմ, վոչ-
վոք չկա այստեղ, յերկուսս ենք:

— Վահրամի՛ն ել վո՛չ մի խոսք այդ մա-
սին, խելոք և յավ տղա յե, բայց խորամանկ ե:

Յեկենա Բեգլարովնան չղաղարեց իրոտե-
լուց:

— Ուղղակի բախտ ես, անակնկալ
բախտ: Դու կարծում ես, չե՞նք կարող լավ
ապրել արտասահմանում, փառավոր կապ-
րենք, յես ել կաշխատեմ, յերկու հոգի յենք:

— Մտածում եմ Արուսյակի և Բաբկենի
մասին:

— Արտասահմանից կողնենք, — պատաս-
խանեց Յեկենա Բեգլարովնան մի տեսակ դժ-
գոհ, վոր արտասահման դնալու ուրախու-
թյունը պրոֆեսորի եմիգրանտ դարձած յեզ-
րոր կիներ և վորդին սղտորում էյին:

— Չե՛: Արտասահմանից չենք կարող ուղ-
նել նրանց, տեսնո՞ւմ ես Հարությունը չի կա-
րող, մի մոտենա, վոր յեթե չվերադառնանք,
մենք ևս կը դառնանք եմիգրանտ, և վատ տե-
ռակի եմիգրանտ, Հարությունն իբրև թշնամի
փախավ, մենք մեկնում ենք իբրև բարեկամ-
ներ և ահա դավաճաններ:

— Կատարյալ Արևմտյան Յեյրոպայի
պատմություն դարձրիր: Կզնանք, ուրիշ վո-
չինչ, Բաբկենը կոմսոմոլիստ ե, ինքն ել
կապրի, մորն ել կապրեցնի, ճիշտն ասած՝
դու շատ ես յերես տալիս նրանց:

Պրոֆեսորը խեթ նայեց կնոջը, բայց կինը
չազդվեց, արտասահման դնալու շատ մոտիկ
պատկերը նրան հասցրել եր բուռն խայ-
տանքի:

— Համանական չե, վոր միասին մեկ-
նենք, —ասաց պրոֆեսորը, տեսնելով Յեյենա
Բեգլարովնայի գլխապտույտն ուրախություն-
եից:

— Իսկ դու մենակդ կը գնաս, — հարց-
րեց կինը լրջացած և հրճականքը կորցրած:

— Վեց ամսով, ինչո՞ւ չգնամ:

— Բայց...

— Վերջապես հրաժարվելն ել կարող ե
վարկարեկիչ լինել:

— Յես չեմ ուզում, վոր հրաժարվես,
բայց մեր ամուսնության առաջին որից մինչև
հիմա մենք յերրեք իրարից չենք բաժանվել, —
չնչաց Յեյենա Բեգլարովնան, և պրոֆեսորը
տեսավ նրա աչքերում արցունքի կաթիլներ:

— Վոչին՛չ, կպատահի, — ասաց պրոֆե-
սորը և դրկեց նրան:

Յեյենա Բեգլարովնան ամուսնու միջուկն
իր փափուկ յերեսներին դիպչելուց անսահման
հեշտանք գդաց: Նրա համանական մեկնումը
և իր համանական մնալը թախիծով և քնքշու-
թյամբ լցրեց քառասունը. նոր թեակոխած
կնոջը:

Յեյենա Բեգլարովնան յերրեք չեր կա-
կածում, վոր, յեթե պրոֆեսորը մենակ գնար՝
չեր վերադառնա, բայց նրա մտքից ուրիշ չար
բաներ ելին անցնում — մահ, պատերազմ, հան-
կարծ իրարից կտրվել ակամա: Նա տեսել եր
պատերազմը և գիտեր հարյուրավոր դեպքեր,

վոր իրար չափազանց սիրող ամուսիններ բա-
 ժանվել եյին իրարից, յերկար ժամանակի
 բացակայությունը աճեցրել եր յուրաքան-
 չյուրի մեջ տարբեր զգացումներ, սկզբնական
 շրջանում ոտարոտի, բայց հետզհետե դարձել
 եյին ընտանի և անխուսափելի: Այս մտքերով
 տարված և սեղմված ամուսնու գորովայից
 թևերի մեջ, Յելենա Բեզլարովնան հետա-
 դարձ մի հայացք դեցեց իր յերիտասարդական
 կյանքի վրա և հիշեց մանրամասն այն ժամե-
 րը, վորոնք անց եր կացրել առանց հաճույքի,
 հաճույքից խուսափելու անիմաստ քմահաճույ-
 քով, տեսավ կյանքի դատարկ տարածու-
 թյունները, վորոնք նա կարող եր ժամանակին
 լցրած լինել բույրով և ծաղիկներով, կարող
 եր լցրած լինել իր մարմնի հեշտագրդիւռ ալիք-
 ներով և, ավա՛ղ, չեր լցրել, տարածություն-
 ները հեռացել եյին ժամանակի արաւաթուիչ
 թևերի վրա և բոցավառ վո՛չ մի սեր, բարձ-
 րատոն՝ վո՛չ մի կանչ չեր կարող յետ բերել
 նրանց՝ ինչպես արմատից չորացած մի տունկ,
 վորին չի կարող դարթեցնել վոչ մի գարուն:

Նա կրքոտ սեղմվեց ամուսնու կրծքին,
 փարվեց նրա շրթունքներին:

Պրոֆեսորն զգաց, վոր քառասունը նոր
 թևակոխած կինը, վորի գլխի վրա յուսնի
 ջրերի մեջ թաթախված մի քանի սպիտակ
 թելեր եյին սողոսկել, ավելի քաղցր և, քան
 քսան տարեկան աղջիկը, վոր չիմանալով

կյանքի ցուրտը՝ չի խմանում նաեւ, թե ինչ եւ
կյանքի հրաբորբոք ջերմությունը, վոր կու-
տակված ե նույն կյանքի վո՛չ թե մակերեսի
վրա, այլ խորության մեջ: Իր ամուսնու
թեւերի մեջ՝ Յելենա Բեզլարովնայի մարմի-
նը բոցավառվեց, կարծես, այրվում եյին նրա
ամենափոքրիկ, միայն լույսի դեմ տեսանելի
աղվամաղերը, արյունը մետվետում եր նրա
մարմնի սպիտակության մեջ՝ ինչպես կար-
միր վարդը ճյան մեջ: Նա հանկարծակի դար-
ձավ այնպես կրքոտ ե հրավառ, ինչպես ու-
շացած սերը, ինչպես դարնան մեջ ապրող,
բայց նրա գոյության անտեղյակ մեկը, վոր
թռչում ե դարնան յետեից միայն այն ժամա-
նակ, յերբ տեսնում ե, վոր փախչում ե նա ա-
րագ ե անխրադարձ:

Յելենա Բեզլարովնան ամբողջ գիշերը չը-
բաժանվեց իր պմուսնուց, նա դրել եր գլուխը
նրա կրծքի վրա, վոր ջղային բարախում եր,
ե չիմացով, թե ինչպես աչքերը փակվեցին եւ
կրկին բացվեցին մի կապույտ ե թռչող յի-
րադում:

.
.
.

Սաղաղ եր ծովը, կապույտ, բայց նա-
րընջագույն արևով վողողված: Պրոֆ. Մե-
լիք-Անդրեասյանը, կանգնած նավի առաջա-
մասում, գլխիկոր և մտախոհ, դիտում եր
մարմարի նման անշարժ և անդորր ջրի տա-
բածությունը, ամսոսալով, վոր նավը խան-
գարում եր նրա կապույտ քունը: Դեղիններ
եյին մրցում նավի հետ, զարնվում քթին, կրր-
քոտ և համառ մի արչավ, վոր յերկար ժամա-
նակ ղրաղեցրեց նրան, Մելիք-Անդրեասյա-
նին: Հանկարծ հիշեց նա Յելենա Բեզլարով-
նային: Նրա վերջին համբույրը դեռ այրվում
եր իր շրթունքների վրա, հիշեց նրա արցուն-
քը, վոր դանդաղորեն բարձրացավ նրա աչ-
քերի մեջ, կախվեց, ծանրացավ, և գլղորվեց
այտերից վար, ինչպես անձրևի կաթիլը լու-
սամուտի ապակու վրայից, աչքերի առաջ
պատկերացավ յերկիրը, վորտեղ ծնվել, մե-
ծացել եր և վորտեղ տիրում եր այժմ պրոյե-
տարիատը, պրոյեկտարիատի յերկաթյա դիկ-
տատուրան: Լուսավոր, արևահորդ այդ յեր-
կիրը հանկարծ մոռացվեց և հետզհետե բոլո-
րովին մթնեց նրա աչքերի առաջ: Մութ յեր-
կրնքում միայն մի աստղ եր քթթում—դա իր
կիճն եր:

Պրոֆ. Մելիք-Անդրեասյանը գնում եր
դեպի բուրժուազիան, ուրեմն դեպի հոգու և
գիտության բացարձակ ազատության ծոցը:

Ազատութեան մասին մտածելով՝ մոռացալ
 նախամեն ինչ, հանդէպ յետե թողած մութ
 յերկնակամարի միակ աստղն ել՝ Յելենա-Բեզ-
 արովնան, և նրա հողին սկսեց հրճվել մի նոր
 խրախճանքով, մոր յերևում եր հեռուն, ծո-
 վի վերջացած կետում, բուժուական կուլտու-
 րայի խրախճանքը հորդառատ լույսերով,
 դեմոկրատիայի ծաղկափթիթ պսակով, տելե-
 նիկայի անհասկի բարձունքներում: Հրճվեց
 պրոֆեսորի հողին՝ հակառակ ծովի հանկար-
 ծակի մոռայումին: Յերկնքի կապույտը կա-
 պարացաւ և գոլորչացաւ, ծովը հուզվեց, սկը-
 սեց տարուբերվել մեծ և սրորուն ալիքնե-
 րով, մորոնք հեռդհետե բարձրացան, սրվե-
 ցին, ինչպես ուղտերի մեջքերը, սպիտակ
 փրփուրներ բղխեցին ծովի կրծքից, ծովու-
 րունները ճչացին և կտրեցին վեր բարձրացող
 ալիքները, սպիտակ արծիւը հանկարծ կախեց
 թևերը փոթորկում, սալառնեց ծովի հեռա-
 մոր բացերում, անսղոք պայքարի մոմնելով
 փոթորկի հետ, խելահեղ և հրճվողին ճախ-
 րելով մոռայ յերկնքի և մոռայ ծովի միջև,
 նավը վառեց իր լույսերը՝ արևային սպի-
 տակութեամբ, մեծ լուսարձակը ճեղքեց թան-
 ճրը մոռայութեանը վիթխարի դանակի նման:
 Նախի դռները փակվեցին ներքևի լուսամուտ-
 ներից հետո՝ ամրացվեցին նաև վերևի լու-
 սամուտները, մթութեան հեռավոր խորշերից
 մի մոնչյուն բարձրացաւ, աճեց ու պայթեց,

կարծես, հենց նավի վրա, վո՛չ մի աստղ, վո՛չ մի փառոս, նավը մարտնչում եր կույր տարերքի դեմ հաղթական և լուսաժպիտ:

Բոլորը քաշվեցին նավի ներքնակողմը, փախչելով տարերքի բարկությունից և անակընկալից, ժպտադեմ և փոթորկասեր նավաստիների հետ մնաց նավի տախտակամածի վրա միայն պրոֆ. Մելիք-Անդրեասյանը, աչքերը մխրճած մռայլ ծովին: Ինչ վոր թեթևություն կար նրա հոգում, դոյություն եր ունեցեղ մի ծանրություն, վոր ահա անեացել եր, ինչպես հղի կինը յերկունքից հետո: Վո՞րքն եր այդ ծանրությունը: Պրոֆեսորն առաջին հերթին չկարողացավ գտնել, բայց հետըզհետե ամեն ինչ պարզ յեղավ—ազատվել եր ահավոր յերկվությունից: Այժմ, դեպի Յեվրոպա սուրացող նավի վրա, Մելիք-Անդրեասյանը վո՛չ մի յերկվությամբ չեր տառապում, վոչ մի հնի և նորի պայքար նրա մեջ, հաղթական հինն ահա նորից բարձրագլուխ և հանդիսավոր, հինն այլևս չի վորոնում հոգու թագուն մի խորչ, վորտեղ պահվրտի դարանակալ, մտքի և հոգու վո՛չ մի րնդհատակյա կյանք, ամեն ինչ պարզ ե, պայծառ բուրժուազիան և իր դարավոր չափաւած և ձևած կուլտուրան և վերջապես դեմոկրատիան, ո՛հ, դեմոկրատիան, կապույտ թևերով թռչունը, վոր թռչկոտում ե անվախ և մեծ կոհակների բարձունքների վրա:

Վո՛չ վոք չիւր կարող գուշակել, թե ինչո՛ւ
այս մարդը՝ թրջված ծովի աղի ջրից, կանգ-
նած մութ ծովի դիմաց, ժպտում ե մանկա-
կան թեթևությամբ:

Նա նորից մի անգամ հիշեց Յելենա Բեդ-
լարովնային և վո՛չ մի տալաչավ:

— Թող ապրի նա այնտեղ, կողարկեմ
նրան արտասահմանյան վալյուտա...

Նա յերկար չմտածեց այդ մասին և կես
դիշերի մոտ իջավ նավի ներքնակողմը և ան-
միջապես ուղղվեց դեպի սալոնը:

Սալոնում գեռեւս յերաժշտությունը նրվ-
ւում եր և Պոտները կայթում եյին: Պրոֆ.
Մեյիք-Անդրեասյանը մտավ ներս, նստեց մի
անկյուն, դարեջուր պահանջեց և սկսեց դի-
տել պարը: Պարողները մի քանի զույգեր ե-
յին, վորոնք նավ եյին մտել հենց այդ ուրը,
յերը նավը մի քանի ժամ կանգ եր արել մեծ
նավահանգստի առաջ: Յերը դարեջրի մեծ
լաժակը, փրփրահեղձ, լաքեյր դրեց պրոֆե-
սորի առաջը, չափազանց զարմացավ նա, տես-
նելով լաքեյի ավելորդ հաճոյակատարու-
թյունները:

«Դարեջուրը բերեց և ամեն ինչ վերջա-
ցավ»՝ մտածեց պրոֆեսորը, — «եւ ինչո՛ւ յե
կոտրատվում»:

Լաքեյը՝ մեխանիկորեն ժպտալով՝ յեր-
կու զգուշ մատներով վերցրեց պրոֆեսորի
ուսի վրայից ինչ վոր փոքրիկ սպիտակ թել:

— Շնորհակալ եմ, —ասաց պրոֆեսորը,
—սպասելով, վոր հեռանա և թողնի, վոր ին-
քը հանգիստ գարեջուրը խմի և դիտի պարող
ղույգերը:

Հաքեյը չհեռացավ, նորից ժպտալով դար-
ձավ նրա շուրջը և ելի խոնարհարար կանգ-
նեց առաջը:

— Ի՞նչ եք ուզում, —հարցրեց պրոֆեսո-
րը մի քիչ սրտնեղած:

— Իսկ դուք վոչինչ չե՞ք կամենում:

— Վո՛չ:

Հաքեյը հեռացավ:

Պարող զույգերն իրենց շարժումներն
ավելի արագացրին, յերբ նվագողներն արա-
դացրին նվազի ութմը: Նրանք տարորինակ
մի պար եյին դառնում: Պրոֆ. Մելիք-Անդրե-
ասյանն այդպիսի պար յերբեք չէր տեսել:
Տղամարդիկ իրանց աջ սրունքները կոխել ե-
յին կանանց յերկու սրունքների միջև, մի քիչ
կռացած, բայց ուժգնորեն սեղմած կանանց
մեջքերը, նրանք գրեթե թուցնում եյին կա-
նանց իրենց աջ սրունքների վրա: Ինչքան
նվազն արագանում եր՝ տղամարդկանց սրղմ-
վումը կանանց դառնում եր ավելի և ավելի
կատաղի, կարծես, նրանք ճգնում եյին կորս-
վել կանանց մարմնի մեջ:

Պրոֆ. Մելիք-Անդրեսասյանի համար տա-
րորինակ եր այս պարը, բայց խորը հաճույք
ղգաց այդ սարորինակությունից:

Լաքեյը նորից կանգնեց նրա առաջ, մե-
կանիկորեն ժպտաց և հարցրեց.

— Ուրիշ յոշինն չեյի՞ք կամենում:

— Վո՛չ, — կարճ կտրեց Պրոֆեսորը:

Լաքեյը պարզապես ջլախնացնում էր
նրան:

Հանկարծ նալն ուժեղ կերպով բարձրա-
ցավ և ընկավ: Ծովի մոռյլ կոհակները նալը
խաղացնում եյին տաշեղի բեկորի նման, մի
վիթխարի կոհակ, վոր ծնունդ էր առնում ծո-
վի խորքերից, բարձրացնում էր նալը վեր,
որորում մի վալրկյան իր սուր մեջքի վրա և
քմահաճորեն խուսափելով տակից՝ թողնում
էր նալը գլխապտույտ անկման մեջ:

Յերկու պարոզ գույգ, չգիմանալով նա-
վի որորին, գուրս յեկան պարից և գրեթե
ուշադնաց ընկան՝ կահավորակի վրա: Սեղան-
ների վրա գրված ծաղկամանները վայր ըն-
կան և կոտորովեցին, մի բարձր, հպարտ շու-
շան ընկավ պարողների վրտների տակ և
տրորվեց:

Ծովը մոնչում էր գուրսը, գիշերն ինքը
վռնում էր ահարեկված, կորցրած իր շող-
շողուն աչքերը, կոհակները որորում եյին
նալը, կուտակվում իրար վրա՝ բաղխվում
իրար և քշվում, կործանվում ահարկու գո-
ռոցով:

Պարը դուգրեց, վորովհետև անկարելի
յէր պարել ջրի մակերեսի նման չարժվող հա-

տակի վրա: Փոքրիկ որկեստը ղաղընցրեց
 պարի մոտիվը և սկսեց նվագել մի տխուր մե-
 լոդիա, վոր, պրոֆ. Մելիք-Անդրեասյանին
 այնպես թվաց, չատ նման եր հայկական յե-
 կեղեցական յերաժշտության: Կահաժորակ-
 ների վրա ընկնող գուլգերից մեկի սրունքը
 յերևում եր գուլպաներից վեր, մի փոքրիկ
 ձևով. չափ, սպիտակ եր, վրտների տակ
 տրորված ջրաշուշանի նման: Պրոֆեսորն աչ-
 քերը հասեց մարմնի այդ բացատին, ականջ-
 ները տխուր մելոդիային, զգաց իրեն յերա-
 զային յերջանկության մեջ, հիշեց պրոլե-
 տարիատի իշխանության յերկիրը, հիշեց այն
 խելահեղ և խուլական ձգտումը դեպի պայ-
 քարը թշվառության դեմ, բոլոր յերկրների
 թշվառության դեմ և, թեև նրա հոգին սարս-
 ոաց այդ պայքարի գեղեցկությամբ, բայց
 չուզեց արձագանք տալ, նորից պարեջուր պա-
 հանջեց, խմեց և բոլորանվեր հալչտակու-
 թյամբ ունկնդրեց տխուր մելոդիային՝ ջախ-
 ջախելու համար այն ուրվականը, վոր մթին
 թևերով, կանաչ և փայլուն աչքերով, լպլըր-
 ծուն մարմնով, յերկար մատներով և յերկար
 յեղունգներով, գալիս եր հեովից, կամ բարձ-
 րանում եր իր խակ խորքից:

Այդ ուրվականը նրա յերկվությունն եր:
 «Ահա թողեց ամեն ինչ, թողեց մինչև
 անդամ իր սիրելի կնոջը, թողեց դիրքը, իր
 սիրած և փայփայած պատմության ամբիոնը,

գնում և Յեմբրուպա, ո՛վ և իմանում, թերևս
ապաստում և իրեն անշուք մի կյանք, թերևս
անշուքից ել վատը, որվա հացի կարոտ, բայց
ինչո՞ւ յե խռովում իրեն այդ մթին յերկրի
գեղեցկությունը»:

Մելիդիայի տրտում հեծեծանքն այլևս
չհասավ իր ականջին, սրունքի բացատը փոք-
րացավ, դարձավ մի կետ և ապա կորավեց:

Պրոֆեսորը վեր կացավ, որորվելով գնաց
իր կարինը և քնեց մի տանջալի յերազում:

Առավոտյան ուշ դարթնեց: Նախաճաշի
ժամանակն արդեն անցել էր, արագ հագվեց և
բարձրացավ վեր: .

Անհուն մի ծով փովեց իր առաջը, կա-
պույտ և անդորր, փողողված նորից նարնջա-
դույն լալյաով: Կուրծքը լցվեց ծովի թարմա-
շունչ ողով, աչքերը փայլեցին և թռչեցին
հեռո՞ւ:

Ծովն այնքան խաղաղ էր, վոր ծովի վրա
թռչող մեծ թռչունների թևերի շվաքը ընկ-
նում էր ծովի փիրուզյա կրծքի վրա և թեթե-
փորեն բեկբեկվում:

Պրոֆ. Մելիք-Անդրեասյանը նայեց, աչ-
քերով անհագորեն դրկեց ամբողջ շրջապատը,
հեղնարար ժպտաց և մրմնջեց, — պրոֆեսոր-
իստի գիկտատուրա՞...

Պրոֆեսորուհան գիկտատուրայի վերհի-
շումը նրան բնականորեն հիշեցրեց նաև բուր-
ժուական դեմոկրատիան, վորին նա գնում էր
նավի սուրտցոյ թևերով:

Պրոֆ. Մելիք-Անդրեասյանը յերեք շեր-
 յեղել Յեվրոպայում, առաջին անգամն եր-
 վոր ահա ճանապարհորդում եր ծովի վրա և
 այն ել պատերազմի, քաղաքացիական կոիվ-
 ների և պրոլետարական դիկտատուրայի պայ-
 մաններից հետո, և այդ դեմոկրատիան, վոր-
 քան վոր այդ բոլորից առաջ ել թվում եր
 նրան արտակարգ գույներով մի դրուժյուն,
 բայց այժմ արդեն ամբողջովին պարուրված
 եր յերազային բաղձապիսի թեթև քողերով,
 նա կարծում եր, վոր դեմոկրատական Յեվ-
 րոպայում նա կնստի մի նոր ծաղկած պար-
 տեզում և պարտեզի ստվերներն իրեն կոքորեն
 անվերջ ու անվերջ, և խնդուժյամբ նայում եր
 նարնջադույն արևով վողողված ծովին:

Ժն

Փրանսական նավահանգստի պաշտոնյա-
 ներն առաջին իսկ առթիվ կասկածանքով նա-
 յեցին պրոֆ. Մելիք-Անդրեասյանին, յերբ
 նրա անցադրից իմացան, վոր նա գալիս եր
 խորհուրդների յերկրից: Նրանց առաջին գոր-
 ծը յեղավ անմիջապես առանձնացնել նրան իր
 իրեղեններով, վոր բաղկացած եր յերկու խո-
 չոր, ծանր և մի ձեռքի փոքր պայուսակնե-
 րից:

Յերբ պայուսակները վերցրին, պրոֆե-
 սորն սպասում եր, վոր իրեն քաղաքավարու-
 թյամբ կհայտնեն հետևել իրենց, բայց
 պաշտոնյաներից մեկը կոպիտ ձայնով գոռաց

»Allons»: Պրոֆեսորը մեքենայորեն հետևեց, բայց նրա դեմքի դույնն անմիջապես փոխվեց, տաք արյունը խուժեց մինչև ականջներին ծայրերը:

Յերբ նրանք մտան գրասենյակը՝ պաշտոնյաներից մեկը, առանց վորեւե խոսք փոխանակելու նրա հետ, սկսեց խուզարկել նրա գրպանները, մինչև մյուս պաշտոնյաները բաց արին պաշտասանները և սկսեցին քրքրել բովանդակությունը: Յերբ հերթը հասավ իր ծոցի գրպանները նայելուն պրոֆեսորն ասաց.

— Թույլ տվեք յես ինքս դուրս հանեմ ինչ վոր կա:

— Այո՛, մենք գիտենք, թե դուք ինչպես կհանեք, — պատասխանեց պաշտոնյան և ձեռքերը կռիւեց պրոֆեսորի ծոցի գրպանները:

Պրոֆ. Մելիք—Անդրեասյանը մտքում ասում էր.

«Ահա պաշտասանից դուրս կը բերեն մի քանի գրքեր ֆրանսական պատմության վերաբերյալ, և վերաբերմունքները կփոխեն»:

Յեւ շատ չուշացավ՝ պաշտասանները խուզարկողները դուրս բերին այդ գրքերը և գններով մեջը, մի գուցե այդ շապիկներով տրիշ գրքեր լինեն և համոզվելով, վոր միևնույն գրքերն են, նետեցին մի կողմ, առանց

վորեւ ուշադրութիւն դարձնելու և վերաբերմունքները փոխելու:

Գրոֆ. Մելիք-Անդրեասյանի լեզվի ծայրը մի քանի անգամ յեկավ դեմոկրատիա բառը, բայց չարտասանեց:

— Անգիտակից պաշտոնյաներ են, վորոնք չկարողացան թափանցել իմ հոգու խորքը և դժվար է, իհարկէ, միանգամից, — ասաց նա իր մտքում և սպասեց վախճանին:

Յերկար և համբերութեամբ սպասել նա չկարողացավ, վորովհետեւ պաշտասակները խուզարկողները տակն ու վրա արին նրա ապիտակեղենները, մինչև անգամ մի քանիսը անհոգորեն նետեցին դետին և տրորեցին կեղտոտ վոտներով:

— Բավական է, սպասեցե՛ք, — մի քիչ բարձր տոնով ասաց Մելիք-Անդրեասյանը, — մի քիչ քաղաքավարի, չե՞՞ վոր յեւ մտել եմ Յեվրոպայի ամենադեմոկրատիկ յերկրի սահմանները:

Պաշտոնյաները, լսելով դեմոկրատիկ բառը՝ սկսեցին բարձր հռնուալ:

Տաք արյունը նորից խուժեց պրոֆեսորի ականջները: Խուզարկողները շարունակեցին պաշտասակները քրքրել անտարբերութեամբ և սառնութեամբ: Չգտնելով վորեւ բան՝ նրանք հանկարծ քաշեցին և բոց արին պաշտասակների կողքերի և հատակների աստառնե-

բը, վորից պրոֆ. Մեկիք-Անդրեասյանը պար-
զապես կատաղեց:

— Պատճառ մի՛ լինեք, վոր յես զղջամ
այս յերկիրը դալուս համար,—ասաց պրոֆե-
սորը և, յեթե նա հայհոյեց բոլոր պաշտոն-
յաներին, նրա համար եր, վոր վարժված չէր
հայհոյանքի և ապա ֆրանսերեն վո՛չ մի հայ-
հոյանք չէր իմանում. նա ֆրանսերեն սովորել
էր համալսարանում և ապա տիրապետել էր
լեզվին անընդհատ կարգալով:

Նորից բարձրացավ անսիրտ հրհռոցը:

Ապա պալուսակներից դուրս բերված ի-
րերը յետ լցրին խառն ի խուռն, անցագրի
վրա ինչ վոր արձանագրություն արին և, պա-
լուսակները աւալով ձեռքը՝ նշան արին, վոր
վերցնի և գնա:

Մեծ դժվարությամբ վերցրեց պրոֆ.
Մեկիք-Անդրեասյանը ծանր պալուսակները և
դուրս յեկավ գրասենյակից:

Նա դարձավ առաջին խաչածեղ փողոցը,
պալուսակները դրեց մայթի վրա, սրբեց ճա-
կատի քրտինքը և սկսեց նայել տարտամ և
անորոշ:

Վերջապես չկարողացավ դիմադրել ներ-
քին հզոր մղումին ու արտասանեց—դեմոկրա-
տիա: Առանց ուղենալու բառն արտասանվեց
հեղնությամբ, և նա զգաց, վոր հեղնությունն
առաջին անգամն էր չաղախվում այդ բառին:
Հողեկան մի խոռվություն, խառնված ջղայ-

նությունից առաջացած սառը քրտինքին,
պատեց նրա վողջ եյությունը...

Յերբ տեղավորվեց գնացքում, և նիկոտինը
ներծծվեց մարմնի ամենահեռավոր խոր-
շերը, պրոֆեսոր Մելիք-Անդրեասյանը,
կարծես, վերադարձավ իր հոգեկան նախկին
հանգստությանը: Նա յերկար ժամանակ խո-
րունկ հափշտակութամբ լսեց Ֆրանսերենը,
վոր խոսում եյին Ֆրանսիացիներն իր շուրջը
— թռչկոտող և թռչող, յերբեմն վոստոստող
մի լեզու, կարծես, ինչ վոր փչրվում եր, պայ-
թում և հնչում:

Պրոֆ. Մելիք-Անդրեասյանը մոռացավ
ամեն անախորժություն, վորին հանդիպել եր
նա առավոտյան՝ կոպիտ պաշտոնյաների
կողմից, սկսվեց նրա համար դարձյալ յերա-
զային կապույտը, թեթև և որորուն...

ԺԶ

ԺԵ

Առաջին առավոտը, յերբ զարթեց պրոֆ.
Մելիք-Անդրեասյանը, պանդոկի իր փոքրիկ
սենյակը վողողված եր արևով: Վեր կա-

ցամ, դիտեց Պարիզը բարձր լուսամուտից։
Նոտր Դամի վրա, զօրճես, աբելը թափօլում եր
կաթիլ առ կաթիլ, միջնադարյան խոփոռ քի-
մերաները լողանում եյին ժամանակակից ա-
բելի վարար ջրվեժի տակ։ Տաք, դուրեկան մի
դզացում պատեց նրան, մի պահ չկարողացավ
համատալ թե Պարիզումն ե, միթե՞ քիչ հետո
չպիտի դասախոսի իր ամբիոնից, միթե՞ պատ-
մության բոլոր իր հին հասկացողությունները
նորից վերականգնվեցին արդեն, միթե՞ այլևս
վո՛չ մի կեղծիք, վո՛չ մի հայհոյանք իր պաշ-
տած պատմական հերոսների հանդեպ։ Ո՛հ,
այլևս վո՛չ Պի Ժողով մեթոդի, մոտեցման,
աշխարհայեցողության և աշխարհազգացումի
հարցերի շուրջը, վո՛չ մի սրտամաշուք վեճ,
Պարի՛զ... համաշխարհային դեմոկրատիայի
լուսապայծառ կենտրոնը, բոլոր յերկրների,
բոլոր ազգությունների դժգոհ տարրերը հա-
վաքվել են այստեղ և դտել են իրենց ազատ
փողու հանգրվանը, Պարի՛զ, Պարի՛զ...

Մեյիք-Անդրեասյանը դիտեց Պարիզի հին
շենքերը, վորոնց գազաթները յերևում եյին
իր լուսամուտից արևի վարդագույն փրփուրի
մեջ որորուն, շենքեր, վորոնց մանրամասն
պատմությունը գիտեր ինքը՝ Արեմտյան Յեվ-
րոպայի պատմության մասնագետ պրոֆեսո-
րը, դիտեց և նոր շենքերը, վորոնց մասին ևս
տեղեկություններ ուներ և ասաց մտքում.—

«Ֆեոդալները, բուրժուազիան և բոլոր

դասակարգներն ել կառուցել են, կառուցել են վոգեւորությամբ, ճաշակով և գեղեցկագիտական խորագուն զգացումներով, ինչո՞ւ պրոլետարիատը, մեր յերկրի պրոլետարիատն այդքան հոխորտում ե իր կառուցումների համար»:

Պրոֆեսորի հոգու դռանը թխկացրեց մի հարց՝ թեթեւագուն մատների քնքուշ բաղխումով.—«Բայց պրոլետարիատն ինչո՞ւ և ինչպե՞ս ե կառուցում»: Ընդոստ վեր ցատկեց նա սրտնեղած: Այդ թխկոցը, այդ թեթեւագուն մատների քնքուշ բաղխումը հետզհետե պիտի դառնար, պրոֆեսորը շատ լավ եր իմանում այդ, մի հարց, վոր վորոտի նման պիտի պայթեր: Արագ կերպով, կարծես, հրդեհից փախչող մի մարդ լինե՞ր, հագնվեց և իջավ փողոց:

Փողոցի առաջին անկյունում պրոֆեսորը գնեց մի «Պտի Պարիզիեն» և յերբ բաց արավ, ժպտաց թեթեւ:

— «Մանկալ» եյի գնում, այժմ «Պտի Պարիզիեն»—մտածեց նա և առաջ անցավ:

Մի փոքրիկ խանութից նրան գրկեց բոցագուն հացի բուրումը, կանգ առավ հափը տակությամբ, գլուխը կոխեց խանութի դռնից ներս:

— Բոն ժո՛ւռ, մոսիեո,— բացականչեց արմունկները բաց, կլոր և սպիտակ մի կին ժպտուն, Պարիզի արևի նման:

Պրոֆեսորը ներս մտավ և վերցրեց ձողի նման մի փոքրիկ հաց՝ վրան պարուրած և մի գծով: Յերբ փողը վճարեց պրոֆեսորը՝ կինը, ուրախ և ժպտուն, նորից բացահանչեց.

— Մերսի, մոսիե՛ս...

Քայլեց նա մայթով, նորից կանգ առավ, դիտեց փեղկերը, հանկարծ, առանց մտածելու, փոխեց մայթը, անցավ դիմացը և շարունակեց քայլել առանց հոգնություն զգալու՝ ազահորեն դիտելով շուրջը՝ յերբեմն որբերով փոքրիկ կաթիլներով գոյացած բլրախները ճակատի վրա: Հանկարծ նա իրեն դատով ուզեց ի տեսլ: Մոտեցավ, փոքր գրեց մարմարյա սանդխամատի վրա և հիշեց, փոր այդ վսեմ կոթողը կառուցված էր 60-ական թվականներին, հիշեց մինչև անգամ կառուցող ճարտարապետին—Շարլը Գաունիեյին: Հետզհետե նրա քայլերն առաջ դնացին: Ահա վանդոմի հրապարակումն է: Նա տեսավ Նապոլեոնի արձանն այնտեղ, Մեծ Բանակի բարձր սյունի վրա, փորը ձուլված էր 1805 թվի թշնամուց դրավված 1200 թնդանոթներով: Պրոֆեսորը վո՛չ թե քայլեց դեպի Նապոլեոնի արձանը, այլ յերկյուղածությամբ և հափշտակությամբ զալարվեց դեպի նա, ինչպես հափառացյալը մոտենում է իր հավատքի տաճարին: Նա մի անգամ ևս, ավելի խորը և ավելի սարսուռով, քան յերբեկեց, զգաց Նապոլեոնի ուժը, նրա պատմական վսեմու-

Թյունը: Մի քանի անգամ նա դարձավ բարձր սյունի բոլորտիքը, ձեռքը քսեց պատվանդանի սառը պղնձին, բայց դուրեկան ջերմություն զգաց այդ սառնությունից: Հանկարծ նրա աչքերը լցվեցին արցունքով: Յեթե մարդիկ չլինեյին չորս կողմը, Մելիք-Անդրեասյանը կը փաթաթվեր պղնձին, կհեկեկար մանկան նման՝ քավելու համար իր դավաճանությունը նապոլեոնի հանդեպ:

Աչքերն արցունքով լցված նա մտավ Ռյու դը Լա Պե, անցավ Ռյու դը Պտի Շան և իրեն գտավ Մատրլենի առաջ: Փակ եր յեկեղեցին, բայց նրա տարածուն շվաքը զով եր և հանգստացուցիչ: Մատրլենի սյուններից կախված էյին, այնպես թվաց պրոֆ. Մելիք-Անդրեասյանին, Ավե Մարիայի յերգի թևերը, հոգու անսահման խաղաղությամբ ունկնդրեց նա այդ յերգը, վոր յերգում էյին յեկեղեցու լուռ ներքնակողմում պարիզեցի հրեշտակները:

.

ԺԸ

Յերեկոյան պրոֆ. Մելիք-Անդրեասյանն իր ավագ պարտականությունը համարեց այցելել իր բարերարին, նախկին նախկին հոգատեր Միրզա-Նուրարյանին, վորի հասցեն նա

արթությամբ պահել եր իր մօտ տարիների
ընթացքում :

Դեռևս ճանապարհին նրան անախորժ ըզ-
դացումներ պաշարեցին : Նախնական կրթու-
թյունից հետո՝ յերբ տնտեսական կարիքը
Մելիք-Անդրեասյանին քշում եր դեպի գալա-
ռական հետ ընկած միջավայր՝ ուսուցչու-
թյամբ դրադվելու՝ մեծահարուստ և գոռոզ
Միրզա-Նուրարյանն իրեն բռնել եր ուժեղ
ձեռքերով, բարձրացրել վեր և ուղարկել մայ-
րաքաղաք բարձրագույն կրթություն ուսանա-
լու : Այժմյան իր պրոֆեսորական դիրքը, հենց
պրոֆեսորական իշխանության կողմից Պա-
րիզ գործուղումը պարտական եր Միրզա-Նու-
րարյանի բարերարության, յեթե վոչ Նոյեմ-
բերյան հեղափոխությունն իրեն կը գտներ
մի հասարակ ուսուցիչ, և ամբողջ մի կյանք
եր հարկավոր, վորպեսզի կարողանար բարձ-
րանալ այժմյան դիրքին :

Յե՛վ ահա ինքը բարեկամ և այն իշխա-
նության և դաստիարակին, վոր իր բարերարին
քչեց յերկրից դուրս և հափշտակեց նրա հա-
րստությունը :

«Կլինեմ անկեղծ, կպարզեմ այն դա-
ժան կացությունը, վորի մեջ վո՛չ միայն յեռ,
այլև անմբողջ ինտելիգենցիան եր գտնվում» —
վորոչեց նա մտքում և բարձրացավ ապարտը-
մանի վեցերորդ հարկի և հնչեցրեց զանդը :

Դուռը բաց արավ Աննա Զումշուգովնան

և, ճանաչելով Մելիք-Անդրեասյանին, սա-
տիկ վատ զգաց:

Մելիք-Անդրեասյանը սովոր եր, վոր
Բագվում, Աննա Զումշուղովնայի և Միրզա-
Նուբարյանի մոտ գնալիս՝ տեսակցել նախ և
առաջ տան գլխավոր ծառայի հետ, խնդրել
տեսակցություն և ապա ընդունվել ներս,
բայց ներկա պայմաններում Աննա Զումշու-
ղովնան ինքն եր դուռը բաց անում:

— Աննա Զումշուղովնա, — բացականչեց
Մելիք-Անդրեասյանը և համբուրեց նրա ձեռ-
քը:

Աննա Զումշուղովնայի աչքերը հեշտու-
թյամբ խոնավացան և վռչինչ չալատասխանեց,
բայց բաց չթողեց Մելիք-Անդրեասյանի ձեռ-
քը և, քաշելով նրան, տարավ ներս: Միրզա-
Նուբարյանն զբաղված եր լրագիր կարդալով
և գլուխը վեր չբարձրացրեց, կարծելով, վոր
Աննան ե միայն ներս մտնողը:

— Ալեքսանդր Իվանի'չ... բացականչեց
Մելիք-Անդրեասյանը և մոտեցավ նրան:

Ալեքսանդր Իվանի'չը ևս անմիջապես ճա-
նաչեց իր նախկին սանին և, վրտի կանգնե-
լով, համբուրեց նրան:

Յերբ Մելիք-Անդրեասյանը նստավ ա-
թոռին՝ Միրզա-Նուբարյանի դեմ դիմաց և
վրտը վրտի վրա նետելով, Միրզա-Նուբար-
յանը հեգնությամբ նայեց նրան: Մելիք-Ան-
դրեասյանը հասկացավ այդ հեգնանքը, վի-
րավորվեց նրա ինքնասիրությունը:

— Յեա չեյի ուղենա, —ասաց Միրզա-Նուրարյանը դռնողությամբ, —վոր դուք մեզ, ինձ և Աննա Ջումշուդովնային տեսնեյիք այս վիճակում:

— Վոչինչ, Ալեքսանդր Իվանիչ, տեսնում եմ ձեզ նորից ատողջ և հանգիստ, ճիշտ ե մի քիչ... բմ... վոչ նախկին շքեղության մեջ, բայց կարեւորը կյանքի ատողջությունն և իմ կարծիքով:

Միրզա-Նուրարյանը նորից նրան նայեց հեզնությամբ, և Մելիք-Անդրեասյանը տեսաւ, վոր այր և կին նայվածքներ փոխանակեցին իրար հետ:

Այդ հեզնությունը բղխում եր այն վերաբերմունքից, վոր ցույց տվեց Մելիք-Անդրեասյանն ատաջին իսկ բուպեյից: Թե Միրզա-Նուրարյանը և թե Աննա Ջումշուդովնան սովոր եյին, վոր Մելիք-Անդրեասյանն իրենց մոտ դար յերկյուղածությամբ և չափազանց խորին հարգանքով, մոտենար իրենց մեջքը կռացրած նախ Աննա Ջումշուդովնային, համբուրեր նրա ձեռքը, ապա ավելի կռացած մոտենար Միրզա-Նուրարյանին և պատկառանքի ու յերախտագիտության խորը զգացումներով սեղմեր նրա ձեռքը: Բայց Մելիք-Անդրեասյանը տվյալ դեպքում մոտեցաւ նրանց դեթ իրրև համասարների: Ճիշտն ասած՝ նա այդ մասին յերբեք ել չեր մտածել, ճիշտ ե՝ ճանապարհին նա մտածեց, թե ինչ

պետք ե ասի, ի՞նչ պետք ե պատմի, ո՞ւմ բարեները պիտի հաղորդի, բայց թե ի՞նչ ձևերով պիտի ներկայանար նրանց, — այդ մասին նա յերբեք չմտածեց:

— Հիշում եմ առաջին անգամ, վոր գուհնձ մոտ յեկար, — ասաց Միրզա-Նուբարյանը, փոխելով «դուքը» «դուի»:

Մելիք-Անդրեասյանը ցնցվեց, նրա ամբողջ մարմինը պատեց սառը քրտինք, վորովհետև ինքը ևս հիշեց այդ առաջին անգամը — յերիտասարդ եր, ուսման ծարավով տոչորված, հափշտակված մայրաքաղաք գնալու և բարձրագույն ուսում ստանալու հեռանկարով, հիշեց, թե ին՞չպես մտավ մեծահարուստ նավթահորատեր Միրզա-Նուբարովի տան դահլիճը... Պրոֆ. Մելիք-Անդրեասյանի աչքերը մթնեցին, այլևս վոչինչ չհիշեց, հին աշխարհում թողված այդ ամոթը, ստրկամտության այդ հզոր փաստը նրա՝ աչքերի առաջ քաշեցին մի մթին քող և այլևս չտեսավ Միրզա-Նուբարյանին, վոր նստած եր դեմը և Սննա Զումշուղովնային, վոր կուչ եր յեկել նրա կողքին և հեգնությամբ նայում եր իրեն:

Հի՛ն աշխարհը... այն աշխարհը, վորի բոլոր տրադիցաները, այսպես կարծված բոլոր սրբությունները կոխատեցին իր հետև թողած յերկրի բանվորները, ազատագրելով բոլոր տեսակի ստրուկներին, այն աշխարհը,

վորի տերն եր ահա այս Միրզա-Նուրաբյան-
նր...

Հիշելով նոր աշխարհը՝ պրոֆ. Մելիք-
Անդրեասյանի աչքերը նորից պայծառացան,
փարատվեց նրա հոգու մռայլը, պատռվեց
խավարը և լույսի վոսկյա շիթեր կախվեցին
այդ պատռված քներից: Լույսի վոսկյա այդ
շիթերը կախվել էին իր հետև թողած յերկրի
յերկնակամարից:

— Հը, ինչպե՞ս են քո վայրենիները. —
հանկարծ հարցրեց Միրզա-Նուրաբյանը:

— Վայրենիներ, վո՞ր՞ոնց մասին ե խոս-
քը, — հարցրեց Մելիք-Անդրեասյանը, անկեղ-
ծսրեն գլխի՞ չընկնելով, թե իսկապես վո՞րոնց
եր տկնարկում Միրզա-Նուրաբյանը:

— Վայրենիներ, նո՛ւ, աշխարհում վայ-
րենի դադանները ով՞քեր են:

— Ձեզ չեմ հասկանում, Ալեքսանդր Իվա-
նիչ:

— Աննա՛, դո՛ւ առա:

— Բուլչիկները, — ծիծաղելով արտասանեց
Աննա Ջումշուդովնան:

— Դուք բոլորովին սխալ կարծիք ունեք
բուլչիկների մասին, Ալեքսանդր Իվանիչ, —
զսպած զայրույթով պատասխանեց Մելիք-
Անդրեասյանը, — յես կարծում եմ...

— Վո՛չ մի կարծե՛լ, — ընդմիջեց Ալեք-
սանդր Իվանիչը գոռոզ, ամբարտապան և դա-
դապած տոնով: — Միևնույնն ե, յես չեմ հա-
մոզվելու, ինչ վոր ասեք, յերևի դու ել այն

տիպերից ես, վոր թեքվում ես քեզ կերակրող-
ների կողմը, իմ մասին ել տարբեր կարծիք
ունեյիր, յերբ յես եյի կերակրում քեզ:

Պրոֆ. Մելիք-Անդրեասյանը վիրավոր-
վեց մինչև հոգու խորքը, մանավանդ չկարո-
ղացավ տանել Աննա Զումշուղովնայի փողո-
ցային կնոջ վայել կողմնակի ծիծաղը, վոր
թափում եր նա իր արդեն չորացած շրթունք-
ներից և այտերից:

— Դուք ինձ յերբեք չեք կերակրել, Ալեք-
սանդր Իվանիչ, չեն կերակրում ինձ և բոլ-
շեվիկները, մենք կոչում ենք այդ աշխատան-
քի արդար վարձատրություն:

— Մենք, վոր ասում ես—այդ «մենք»-ը
ո՞վ ե, — հարցրեց Միրզա-Նուրարյանը չափա-
զանց սարկաստիկ շեշտով:

Լավեց նորից Աննա Զումշուղովնայի ծի-
ծաղը:

— Մենք, պրոլետարական յերկրի քաղա-
քացիներս, — հպարտությամբ արտասանեց
պրոֆ. Մելիք-Անդրեասյանը:

Թե՛ Աննա Զումշուղովնան և թե՛ Ալեքսան-
դրը Իվանիչն այս անգամ ծիծաղեցին բարձր
և շնական փոճով:

Պրոֆ. Մելիք-Անդրեասյանը լռեց:

Լռության ընթացքում նա յեկավ այն
յեզրակացության, վոր սխալ եր իր ընկճվա-
ծությունը, պետք եր անցնել հարձակողա-
կանի:

— Նո՛ւ, Ալեքսանդր Իվանիչ, մոռանանք այս բոլորը, յերեւի իրար չենք համոզի, ինչ՞պէս եք ապրում այժմ:

Նախկին նալթա հորատերը շտկվեց: Այդ հարցը նրան, ըստ յերևույթին, շատ դուր յեկավ:

— Այժմ, ինչպե՞ս ասեմ, վատ ենք ապրում:

Նա խեթ նայեց Աննա Զումշուգովնային: Վերջինս դեմքը բոլորովին փոխվեց, պարզ յեղավ, վոր այլևս նա չէր կարող ծիծաղել, յեթե մինչև անգամ ուժեղ առիթ ել ներկայանար:

— Յես՞հետս մի փոքրիկ գումար կարողացել եյի բերել, մի փոքրիկ գումար ել կար արտասահմանյան բանկում, բայց բոլորը գնաց, այս իմ սիրելի կինը, վորի հայրն արդեն անանկացած մարդ էր, յերբ կին վերցրի ինձ համար, միացած իր փուճ վորդու և յերկու լկտի աղջիկների հետ, մսխեցին և կերան ինչ վոր կար...

— Մի՛ հուզվեք, Ալեքսանդր Իվանիչ, — ասաց Մելիք-Անդրեասյանը:

Իհարկե, խոսքը վերաբերում էր ամելի շուտ Աննա Զումշուգովնային և վոչ թե Ալեքսանդր Իվանիչին:

— Չեմ կարող չհուզվել, սա և սրա փուճ վորդին և լկտի աղջիկները չկարողացան հարդել ուրլին, ուրլին, Միքայէլ, աշխարհի հիմքն է...

— Հի՛ն աշխարհի, Ալեքսանդր Իվանիչ:

— Հի՛ն մին չեմ իմանում, յես գիտեմ մի աշխարհ, այդ աշխարհի հիմքը ուռբլին ե, ուռբլին ինքը աստված ե, կամ աստծու պատկերը, իսկ սրա՞նք... սրա՞նք...

— Բավական ե, նորից սկսեցիր, — ճշաց Աննա Զումշուդովնան, — ուռբլի՛, ուռբլի՛, հասկացա՛նք վերջապես:

— Զհասկացար, ելի չհասկացար: Վերջապես, Միքայել, ինձ թողեցին աստծո պատկերին կարոտ:

— Մի անգամ հնարավոր լիներ, պարոն Մելիք—Անդրեասյան, խուզարկեյիք նրա գրպանը և տեսնեյիք թե ինչեր կան, — ասաց Աննա Զումշուդովնան:

Մելիք—Անդրեասյանը կարծեց թե Միրզա—Նուբարյանի գրպանում կը լինեյին ուռբլիներ:

— Այո՛, կան, խուզարկելու կարգը չկա, — բղավեց նախկին նավթահորատորը և գրպանից դուրս բերելով բանալիների մի փունջ, սկսեց շնզնգացնել ոդում:

— Կողպում ե մինչև անգամ հացը, — ասաց Աննա Զումշուդովնան և սկսեց հեկեկալ:

— Բավական ե, բավական, կեղծավոր լաց մի՛ տա... սրտնեղեց Միրզա—Նուբարյանը:

Պրոֆ. Մելիք—Անդրեասյանը քարացած մնաց նստած տեղում:

— Վո՛չ միայն բուշեիկները կողոպտեցին ինձ, կողոպտեցին ինձ նաև իմ զավակները և կինս, իսկական կողոպուտը սա յե: Նու՛՛, հիմա գրեթե առանց ուռբլու նստած եմ, ի՞նչ արժեք ունեմ, մարդ ինչքան ուռբլե տնենա, այնքան արժեք ունի:

— Այդ ճիշտ չե, —ասաց Մելիք-Անդրեասյանը, — որինակ՝ մենք, խորհրդային քաղաքացիներս ուռբլի չենք դիզում, բայց յուրաքանչյուրը զնահաւորվում ե ըստ իր արժանիքների, անձնական ընդունակությունների, և այլն:

Միրզա-Նուրաբյանը ամենացինիկ կերպով սկսեց Ջոհուալ:

— Խորհրդային քաղաքացի՛... յես խոսում եմ կարգին մարդկանց մասին:

— Կարծես, նրանք մարդ չեն, չե՞, — հանկարծ, գլուխը վեր բարձրացնելով, բղավեց Աննա Զումչուգովնան:

Ամուսնուն հակառակ խոսելու համար՝ Աննա Զումչուգովնան այս անգամ հանդես գեկավ խորհրդային քաղաքացիների պաշտպան:

— Դու ձայնդ կտրի, անամոթ, — զայրացած բղավեց Ալեքսանդր Իվանիչը:

Սկսեց ածականների մի մրցում ամուսինների միջև:

Պրոֆ. Մելիք-Անդրեասյանն այդ փողոցային տեսարանի առջև մտածում եր, թե ի՛նչ-

պես այդ պատկառելի նախկին մարդը և այդ
տվելի պատկառելի նախկին կինը, վորոնց
հիշատակը պահել եր նա յերկար տարիներ յե-
րախտագիտական սրբազույն զգացումներով,
առանց ուրբլու չնչին մարդիկ եյին, ահա
ներանք վերադարձել եյին իրենց բնական սո-
ցիալական կատեգորիային, ինչ վոր յերևա-
ցել եր բարոյական, վեհ, պատկառելի, յեղել
եր ուրբլու փայլը, ուրբլու զիւ հնչյունը և
տարիչ վրչինչ:

— Ալեքսանդր Իվանիչ, ուրբլին աստված
ե, յես հավատում եմ ձեր ասածին:

Տիրեց խորը լռություն: Միրզա-Նուբար-
յանը և Աննա Զումշուդովնան զգացին, վոր
Միքայելը, իրենց նախկին սանը, պարզապես
հեղնում ե իրենց:

— Միքայել, դու...

— Ալեքսանդր Իվանիչ, — ասաց Մելիք-
Անդրեասյանը վրտի կանգնելով, — յես մի մեծ
սխալ գործեցի...

Նա կանգ առավ: Նախկին նավթահորա-
տերն ուշադրությամբ դիտեց նրան և սպասեց
ներա խոսքի վերջին:

— Յես մեծ սխալ արի, վոր յեկա ձեզ
տեսներու...

Աննա Զումշուդովնան նորից սկսեց դառ-
նազին հեկեկալ:

— Ինչո՞ւ, — հազիվ կարողացավ հարցնել
նախկին նավթահորատերը գրեթե չնջալով:

Պրոֆ. Մելիք-Անդրեասյանը չափազանց և դուրս յեկավ տնից:

Աննա Ջումշուդովնան յերկար շարունակեց հեկեկանքը, իսկ Միրզա-Նուբարյանը նորից վերցրեց լրագիրը և սկսեց կարդալ անտարբեր և անողտ:

ԺԾ

Յեւեհնա Բեդլարովնան պրոֆեսորից ըստացավ առաջին նամակը, վորին ջերմագին կարոտով սպասում եր նա:

Նամակը գրված եր Պարիզից, այնտեղ հասնելուց մօր քանի որ հետո և բացի անհրաժեշտ անձնական տեղեկություններից—Ֆիզիկական առողջության, տեղավորվելու, յեղանակի և այլնի մասին—ուրիշ վոչինչ չկար այդ նամակում, գուրդուրանքի, կարոտի վո՛չ մի խոսք, կարծես, այդ նամակը գրված եր մի կնոջ, վոր յերեւք մտերիմ կապեր չեր ունեցել նամակագրի հետ:

Յեւեհնա Բեդլարովնան կրկին և կրկին կարդաց նամակը՝ ճգնելով գտնել թագնված մի ջերմագին շեշտ, բայց չկարողանալով իրեն նետեց թախտի վրա և սկսեց դառնորեն հեկեկսոյ:

Յերբ դեռևս վո՛չ մի նամակ չեր ստացել, նա սպրում եր սպասումի անձկությամբ, և այդ սպասումի անձկությունը նրան որորում եր յերազային լուռ և խորը մի մելոդիայով,

այժմ այդ անձկությունն ել չկար, չկար վո-
չինչ, վորին սպասեր. պրոֆեսորը յեսասեր-
որեն մենակ մեկնեց Յեվրոպա, կարող եր
մերժել գործողութիւնը, յերբ չհաջողվեց իրեն
ևս տանել հետը: «Յեթե ուզենար՝ կը հաջո-
ղացներ» — մտածեց Յելենա Բեգլարովնան, —
«հոգու խորքում նա չեր ցանկանում իմ ընկե-
րակցությունը, ուզում եր լինել ազատ»:

Վորքան մտածեց, այնքան լցվեց թախ-
ծով և արցունքով:

«Այլևս ի՞նչ կա, վորին յես ձգտեմ», —
չչնչաց Յելենա Բեգլարովնան և սարսափեց
հոգու դատարկությունից: Այժմ նա խորա-
պես գիտակցեց կյանքի իր սխալները: Սոչո-
րագույն սխալն այն եր, վոր նա մի բան չսո-
վորեց, բազար գնալը, տնային կարգ ու սար-
քով զբաղվելը չեր լցնի մարդու ներքին դա-
տարկությունը: Յելենա Բեգլարովնան, ար-
դարությամբ մտածելով, հիշեց, վոր պրո-
ֆեսորն առաջինն եր, վոր իրեն քաջալերել
եր այդ ուղղությամբ, բայց ինքը կարեւորու-
թյուն չեր ընծայել:

Յերբ Վահրամ Անանյանը սովորական,
ամենորոյա իր այցելությունն անելու համար՝
ներս մտավ, Յելենա Բեգլարովնան փոքրիկ
բաց կապույտ մի թաշկինակով աչքերն եր
սրբում:

Անանյանը զարմացավ:

— Ի՞նչ ե պատահել, տիկին, — հարցրեց

նա:

— Վոչի՛նչ:

Նրա ճայնի մեջ անսահման թախիժ կար, դեմքը դռնատ եր և մազերը մի քիչ անխնամ:

— Յեւենա Բեգլարովնա, պրոֆեսորը, գնալուց առաջ, ձեր ներկայությամբ, ասաց, վոր վորեւէ մի նեղության ժամանակ՝ ինձ գիմեք, այժմ յես պատրաստ եմ ձեզ մխիթարելու, աջակցելու:

— Վազրամ Տիգրանիչ, — մեղմադին ճայնով ասաց Յեւենա Բեգլարովնան, — յե՛կ, այստե՛ղ նստիր:

Անանյանը տեղ գրավեց թախտի վրա, Յեւենա Բեգլարովնայի կողքին, մոտավորապես ծոնկը հպեցնելով նրա ծնկներին: Կնոջ կուրծքը յեւեկեջում եր:

— Ի՞նչ ե պատահել, ասացեք, Յեւենա Բեգլարովնա:

— Պրոֆեսորից նամակ ստացա:

— Հիվա՞նդ ե, — անհանգստությամբ հարցրեց Անանյանը և բռնեց Յեւենա Բեգլարովնայի ձեռքը:

Կնոջ շնչառությունն ավելի դժվարացավ, բայց նրա աչքերում պլպլաց ժպտի մի լույս:

— Կարդացե՛ք, — ասաց Յեւենա Բեգլարովնան և տվեց ստացած նամակը Վահրամ Անանյանին:

— Այստեղ վոչինչ չկա, վոր արցունքներ կորդի ձեր աչքերից, տիկին, — ասաց Անանյանը նամակը կարդալուց հետո:

— Դուք յերբեիցե սիրե՞լ եք, — հանկարծ հարցրեց Յելենա Բեգլարովնան ազատորեն ձեռքերը դնելով Վահրամի ձեռքի վրա:

— ?

— Կամ գիտե՞ք ի՞նչ ե սիրելը:

— Վո՛չ, յերևի չգիտեմ, — միամտորեն, պարզունակով թյամբ պատասխանեց Վահրամը:

— Ուրեմն դուք չեք հասկանա, թե ինչու այդ նամակը պարունակում ե իր մեջ թախիժ և աբցունք:

Լուսթյան մեջ լսվում եր միայն յերկուսի չնչառությունը, արտասովոր, իրենց իսկ համար տարորինակ:

— Վազրամ Տիգրանիչ, յես սիրել եմ Միքայելին, յես սիրել եմ նրան դեռ այն ժամանակ, յերբ նա թոշակառու ուսանող եր, իմ ծնողները հակառակ եյին այդ ամուսնության, ճիշտ ե, յես վայելել եմ փոխադարձ սեր ու ահա, ըստ յերևույթին, ամեն ինչ կործանվում ե:

Անանյանը վոչինչ չկարողացավ հասկանալ, ապահար նայեց Յելենա Բեգլարովնային: Վերջինս գերագույն ճիգով զսպեց արցունքների մի նոր ուղիս, վոր բարձրացավ սրտից և խուժեց աչքերը: Անկարելի յեղավ զսպումը շարունակել, պղտորվեց նրա աչքերի պայծառությունը, կոպերից կախվեցին կաթիլներ և ընկան Վահրամի ձեռքերի վրա:

— Նա չի վերադառնալու, յես ձեզ վրստահացնում եմ, նա այլևս չի վերադառնա այս յերկիրը, — շնչաց Յելենա Բեզլարովնան և, ընկնելով Վահրամի կրծքի վրա՝ սկսեց հեկեկալ, ավելի դառնորեն, քան մենակ յեղած ժամանակ:

Վահրամը ցնցվեց ամբողջ մարմնով նրան պատեց մի աշխարհի զգացում, վորին մինչ այդ բոլորովին անծանոթ եր յեղել: Քսան և վեց տարեկան յերիտասարդը հանկարծ գրկեց Յելենա Բեզլարովնային, թեթևորեն բարձրացրեց, նստեցրեց իր ծնկների վրա և նրանց շրթունքները փարվեցին իրար:

.

Վահրամ Անանյանը յեկել եր իր առորջա պատմական ընթերցումն անելու պրոֆ. Միլիք-Անդրեասյանի գրադարանում և ահա նրա առաջ բացվեց կյանքի գիրքը, վորի թերթերը չբջիլիս՝ նրան թվաց, վոր քայլում ե կեռասենու պարտեզից յուանի շողերի տակ, գիչերային նվազի թեվերի վրա որորուն: Կյանքի գիրքը բուրում եր աշխատ, ինչպես նոր քաղված և թոչնած խոտը, վորից անդրադառնում եր թաքմություն և զովություն: Յերիտասարդ գիտնականը նայեց գրադարանին և գրքերը, պրոֆ. Մեյլիք-Անդրեասյանի գրքերը թվացին նրան մռայլած և տրտում:

Յեւենա Բեգլարովնան անկողնից վեր կացավ առավոտյան խնդուխտամբ գինով, իրիկվա դառնադի արցունքներին փոխարինեցին լուսաբացի ցողերի թարմ կաթիլները, նրա հոգում կաթեց, չիթ առ չիթ, նոր մի գարնան լույսը, տալ իրերը յերգեցին, մեծ հայելին անդրադարձրեց Յեւենա Բեգլարովնային թարմացած, շրթունքները և այտերը ներկված վարդի թեթև կարմիրով, նա լսեց պարտեզի տերևների հծծյունը, լուսամտի թաղարի մեջ բացված ալպյան մանիչակը շնչաց ինչ վոր բան, ջրով լիքը բաժակը ժպտաց, իսկ պրոֆ. Մելիք-Անդրեասյանի պատմության գրքերը նորից տխուր նայեցին նրան:

Յերբ Յեւենա Բեգլարովնայի նայվածքը հանդիպեց ամուսնու գրքերին, նա ցնցվեց, թեթև մի սառսուռ փշաքաղեց նրա մարմինը, բայց յերբ աչքերը հեռացրեց գրքերից, նա խորը ուրախությամբ ապրեց դավաճանության հրճվանքը: Յեւենա Բեգլարովնան զգում էր, վոր հանցավոր է, բայց ազահությամբ և բոցավառությամբ ձգտեց դեպի այդ հանցանքը:

Թուով անկողնից, սառը ջրով վողողեց նա յերեսը, վիզը և կուրծքը, բայց այտերն այրվում էին:

Ղնանյանը խոստացել էր առավոտյան գալ:

Ինչո՞ւ ուշացավ:

Նայեց ժամացույցը:

Անանյանը չէր ուշացել: Յեկենա Բեգլարովնային միայն թվաց, վոր նա ուշացել է:

Մտավ խոհանոց, թեյ գրեց: Նրա յերակներում արյունը վեղկապում էր: Կյանքը վեղադարձել էր ծաղկումներով: Սխալ է, վոր ասում են, թե դարնունները, վոր գնում են, ալիս չեն վերադառնա: Գնացած դարունները նորից են վերադառնում՝ ամբիջի հարուստ, ամբիջի շողշողուն և ամբիջի կանաչահեղձ, վերադառնում են և դարունների հետ հոսող առունները, դգչում են, հծծում, յերգում և նորից հոսում, անվերջ և կյանքի ուրախությունը, միայն պետք է գիտենալ, թե վո՞րտեղ է թաղնված այդ ուրախությունը:

Յեկենա Բեգլարովնայի համար այդ ուրախությունը, թաղնված էր յերիտասարդ գիտնականի գանդուր մաղերում, նրա շրթունքների խոնավության և ջերմության մեջ, նրա հզոր թևերում:

— Բարի լո՛ւյս, Յեկենա՛...

Կարծես, արևը ճչաց Անանյանի ձայնի մեջ:

— Վազրա՛մ...

Յեկենա Բեգլարովնան իջեցրեց լուսամուտի վարագույրները, քիչ անց մթնշաղում լրացավ թեթև մի շրշյուն, կոճակները դարնվեցին

աթոռին և Վահրամին մոտեցավ մի լուսավոր հասակ...

Յերիտասարդ գիտնականի առաջ նորից բացվեց կյանքի գիրքն իր անսահման դադանիքներով և նորանոր, անթիվ եջերով:

— Յե՛կ, անպայման յե՛կ, յերեկոյան, Վազրա՛մ, սիրելի՛ս...

Վահրամ Անանյանը սահեց դուրս:

Ի՛նչ լուսապայծառ ե ողբ:

Փողոցում մի ձի վրնջեց խոլական կրքով:

Արևի նարինջը ներկել եր բոլոր պատերը, հողը, կտուրները և ծառները, բոլորը, բոլորը լողում եյին արբեցությամբ արևի վարար ալիքներում, առունները հոսում եյին յերգելով:

Յելենա Բեգլարովնան, Վահրամի գնալուց հետո, բաց արավ լուսամուտի վարագույրները, լույսը վողողեց սենյակը, կրկին նայեց իրեն մեծ հայելու մեջ, այնչափ դուր յեկավ իրեն իր մարմինը:

Հագնվեց Յելենա Բեգլարովնան, վերցրեց սեղանի վրա յերեկվանից մնացած պրոֆ. Մելիք-Անդրեասյանի նամակը, նորից կարդաց և գոհ մնաց իր դավաճանությունից:

— Կյանքն ամփոփված է միայն քո մեջ, քո գրքերում. — չչնջաց նա և ծիծաղեց:

Ակամա դարձավ նա պրոֆ. Մելիք-Անդրեասյանի գրքերին, նրանք ևս ժպտում ե-

յին, այլեւս տխուր չեյին ինչպէս իրիկունը և առավոտյան:

Յեկենա Բեգլարովնան մտածեց դուրս գնալ, մինչև անգամ անհրաժեշտ եր դուրս գնալ տան կարիքները հոգալու համար, բայց չուզեց բաժանուիլ տան մթնոլորտից, իր ննջատենյակից, վորտեղ տարածուիլ էր բուրումնավետ մի ակիք: Իրերից արտացոլված բուրումը խորապէս հարբեցնող եր, իրերի ներքին աշխարհն ել պար եր դալիս Յեկենա Բեգլարովնայի ուրախության հետ, հրճվում եյին բոլորը, բոլորը:

ԻԱ

Մի յերեկո պրոֆ. Մելիք-Անդրեասյանը Մետրոյի կառ դը Լ'Եստ կայարանից դուրս գալուն՝ գնեց մի «Պարի-Սուար», առավոտյան դնած «Պտի Պարիզիեն»-ը ևս չեր կարդացել: Մտածեց նա գնալ պանդոկ և կարդալ թերթերը: Ականջին խփեց մի ուրիշ թերթի անուն «Լ'Յումանիտե», կանգնեց, ուզեց մի համար ել նրանից վերցնել, բայց անցավ, ձեռքը թափ տալով և մտքում ասելով—«Կոմունիստական մամուլը զահլա տարեյ ե, բաւական ե»:

Պանդոկում նա չկարողացավ դիմագրել լուսամուտից նորից դիտելու քաղաքը: Անվերջ ե Պարիզի թովչանքը, կախարդական քաղաք, վորտեղ ամեն մի իր ունի իր առանձ-

նահատուկ հրապույրը: Յեթե մի վորևե ա-
ռաքկա ուրիշ քաղաքներում աննշան և անի-
մաստ ե, Պարիզում կարող ե ստանալ առան-
ձին գրավչություն և խորագույն իմաստ, կան
անտեսանելի ձեռքեր, վորոնք գեղեցկացնում են
ամեն ինչ:

Յերեկոյան Պարիզն ավելի գեղեցիկ եր:
Ամբողջ քաղաքը վողողված եր վերջալույսի
վարդագույն լույսով, անսահման դաշտն
որորվում եր, քաղաքում տիրում եր մի լուռ
խնդություն, վոր գալիս եր ամեն մի վերջա-
լույսին, իբրև մի հանգիստ պահ աղմկալից,
լուսավոր և ցնծուն գիշերից առաջ: Գիշերը
Պարիզը վոչ թե քնում ե, այլ նոր ե զարթ-
նում, նա սիրում ե ուրախանալ յերկնքի և
յերկրի աստղերի տակ: Պարիզը գիշերը պա-
րում ե, իրիկնային փոքրիկ հնչյունները մե-
ծանում են գիշերը և դառնում բարձրաձայն
նվագ, պատռվում ե քաղաքի սիրտը ե հոսում
ե վարդագույն ու արևագույն գինին:

Պրոֆ. Մելիք-Անդրեասյանը քաշվեց լու-
սամուտից, յերկարեց բազկաթոռի վրա և
բաց առավ լրագրերից մեկը: Մի քիչ կարդա-
լուդ հետո՝ մեքենայորեն նա փնտռեց արտա-
սահմանյան բաժինը և ահա Ա.Տ.Տ.Ր.: Այդ բա-
ժինը ընդհանորեն նրա համար նորություններ
չեւ պարունակելու, բայց, զարմանալի յեր,
նորություններ չառ կային, կարծես, ինքր
չեւ յեղել Խյդ յերկրի քաղաքացին, հասա-

բակական հազար ու մի թելերով կապված չեր
յեղել այդ յերկրի ամեն մի յերևույթի հետ,
Փրանսական թերթի տեղեկությունները, կար-
ծես, չեյին այն յերկրի մասին, վորտեղից
ինքը դեռևս նոր եր յեկել:

Պրոֆեսորը կարդաց—

— Վերսկսվել են հրեական կոտորած-
ները...

— Հեռավոր Սիրիոյում պայթել է մեծ
սպառնալիցութիւն...

— Փոքրիկ հանրապետութիւնների կոն-
ֆերանսը վորոչեւ է անջատվել խորհրդային
միութիւնից, բայց ռուսական կարմիր բա-
նակի յերեւումը Անդրկովկասում և Միջին
Ասիայում քայքայել է հանրապետութիւն-
ների ցանկութիւնը...

— Գնդակահարումը չարունակվում է
ժողովրդական, այն տարրերի դեմ, վորոնք
վո՛չ թէ մասնակցում են դժգոհության ալի-
քին, այլ պարզապես չեղոք են մնում...

— Խորհրդային միութիւնը տենդագին
պատրաստութիւն է տեսնում արտաքին պա-
տերազմի համար...

Պրոֆ. Մելիք-Անդրեասյանը դեն չպրտեց
թերթերը և սկսեց մտածել. «Միթե՞ ինքը, լի-
նելով այդ յերկրի մասնիկը, լինելով մտա-
վորական, կուլտուրան Փրոնտի բարձր տի-
պի աշխատավոր, բոլորովին տեղյակ չի յե-
ղել յերկրում տեղի ունեցած պրոցեսներին,

միթե՞ ինքը քնած ե յեղել ուղտի ականջում,
միթե՞ նա չի կարողացել տեսնել քթից գոնե
մի քիչ հեռու»:

Մի պահ, կարծես, համոզվեց պրոֆ. Մե-
լիք-Անդրեասյանը իր սեփական հիմարու-
թյան և մտքում ասաց. «Յերբ մի մարդ այն-
քան տարված լինի պատմության չոր փաստե-
րով, մզլած դոկումենտներով, ահա այս կը-
լինի հետևանքը»:

Ուրեմն այն մի քանի հոգիները, վորոնք
յերկրում իրեն ասում եյին զանազան բաներ,
վորոնց չեր հավատում, ճշմարիտ եյին: Մի
անգամ, — հիշեց պրոֆեսորը, — լուր տարած-
վեց Յերևանում, վոր գիշերը կոմունիստա-
կան մի ջոկատ, հարձակվելով Եջմիածնի
վրա, գերի յեր վերցրել կաթողիկոսին և մի
քանի յեպիսկոպոսների, աքսորել Սեփան,
խստորեն մեկուսացրել նրանց կղզում, ճշմա-
րիտ ե, և այն ժամանակ նա չեր հավատացել,
չե՞ վոր մի քանի որ հետո մարդիկ անձամբ
տեսել եյին հայոց հայրապետին իր վեհարա-
նում հանգիստ և անձեռնմխելի, ուրեմն այդ
անձամբ տեսնողները «ստել են ականատեսի
նման»:

Բայց պրոֆեսորը քիչ հետո սթափվեց,
կարծես. մի ծանր յերազից: Նա լսել եր, դեռ
մինչև Պարիզ, ճանապարհին, վոր գաղութա-
հայ թերթերը գրում են մասսայական գաղթի
մասին Հայաստանից դեպի Ռուսաստան, թե

Հայաստանի մայրաքաղաքը որեց որ դադարկ-
վում է, մարդիկ փախչում են մինչև անգամ
Միության ավելի անբարեբեր շրջանները,
աղատվելու համար քաղաքական անասելի
հալածանքից, իբր թե Հայաստանից դուրս
բոլշևիզմն ավելի մեղմ է, քան Հայաստա-
նում:

Պրոֆեսորը հանկարծ գոչեց. «Սո'ւտ է,
ամեն ինչ սո'ւտ է, մեր կառավարությունը
մինչև անգամ չի կարող դիմանալ ներգաղթի
ուժգին հոսանքին, կառուցելով ամբողջ թա-
ղամասեր, դեռ բնակարանային սուր ճգնա-
ժամը չաբլուրակվում է, այնինչ, արտաքին
յուրերի համաձայն դադարկվում է մայրա-
քաղաքը: Սո'ւտ է, սո'ւտ է, սո'ւտ է: Մար-
դիկ անխղճորեն ստում են»:

Առաջին անգամն էր, վոր Պրոֆ. Մելիք-
Անդրեասյանն զգաց խղճահարություն դեպի
խորհուրդների յերկիրը, առաջին անգամն էր,
վոր նրա մեջ զարթնեց խորհուրդների յերկ-
րի քաղաքացու արժանապատվությունը և
արդարության զգացումը: Նրան, այդ կույր
մարդուն, վոր տարիներ ապրել էր հանուն
սոցիալիզմի կառուցման մղվող պայքարի, ա-
նասելի, հերոսական և մինչև անգամ հեքիա-
թային պայմաններում և գրեթե վռչինչ չեր
տեսել, կամ մարտնչել էր չտեսնելու, սուտը,
բացարձակ սուտը զարթեցրեց: Հանկարծ նա
զգաց, վոր վռչ միայն ինքը, իբրև հարադատ

քաղաքացի, չէր կարողացել վոգեւորվել յերկրի վերելքով, չէր կարողացել տեսնել ժամանակամիտ անհաջողությունների մեջ իսկ ապագա մեծագույն և բացարձակ հաղթանակի բոլոր տվյալները, այլ մինչև անգամ չէր կարողացել լինել որչեկտիվ:

Այս մտածումների հոսանքում արիություն չունեցավ նա յերկար տարուբերվելու, վորպեսզի կարողանար գտնել ճշմարիտ հանգրվանը, ինչպես փոթորկից հետո անխուսափելի խաղաղությունը, իրեն նետեց պանդուկից դուրս ազատվելու համար իրեն ճնշող մտքերից:

Լույսի և ստվերի այն հաջորդականությունը, վորից տանջվում էր նա, հրեց նրան դեպի ցնծացող, լուսաղվարթ և յերգող քաղաքը:

ԻՔ

Առաջին անկյունում նա տեսավ մի զույգ, վոր պինդ փաթաթված, համբուրվում էին, տարված այնպիսի գերազրգուծյամբ, կարծես, չորս պատերի մեջ մենակ լինեյին:

Նա մտավ բուլվարներից մեկը:

Խնդությունը հոսում էր ծառների տակով, մաքուր և ուրախ մայթերով կարկաչում էր զիչերվա յերգը, ծառների ճյուղերի միջից յերևացող լույսերը չէր կարելի վորոշել՝ աստղեր⁶ եյին, թե ելեքտրական լամպեր, հա-

բյուրաւոր մեծ լուսամտօրներ, կլոր և սպի-
տակ լիալուսնի նման, որորվում էյին բուլ-
վարի մեջտեղում:

Նա կանգ առաւ մի քանի խանութների
փեղկերի առաջ, դէտեց, հափշտակվեց մի
կամ յերկու իրով և շարունակեց ճանապարհը:
Նրա մաքայն անդամ չեր անցնում, վոր այդ
բարձրորեն ցնծացող քաղաքում, վորտեղ փո-
ղոցի յուրաքանչյուր քարն անգամ հյուրասեր
եր, գոյութուն ուներ մարդկային տանջան-
քը, վորի ճիչը խեղդվում եր բարձրադադակ
ուրախության տակ: Հանկարծ նա տեսաւ
յերիտասարդների մի խումբ, վորոնց մեջ կա-
յին գեռ, բոլորովին պատանիներ, վերին
չրթունքների վրա մազերի թեթև ստվերնե-
րով և նրանց յետևում մի քանի վոստիկան-
ներ: Խումբը, քրտնած և ահաբեկված, կողմ-
նակի փոփոցից մտաւ բուլվարը, ճեղքեց ու-
րախ ամբոխը և մտաւ դիմացի կողմնակի
փողոցը, բայց այնտեղ հանդիպեց վոստի-
կանական ուրիշ խմբի և կանգ առաւ: Յերկու
կողմից վոստիկանները պաշարեցին յերի-
տասարդներին ու պատանիներին և քչեցին
առաջ: Չերակալածներն սկսեցին յերգել մի
յերգ, վորը պրոֆեսոր Մելիք-Անդրեասյանը
յերբեք լսած չեր, բայց այդ յերգի յուրա-
քանչյուր հնչյունը ցնցեց նրա ամբողջ մար-
մինը, նրանց ձայնը հիշեցրեց նրան խոր-
հուրդների յերկրի յերիտասարդ սերնդի

ձայնը, առողջ, զիւ, թարմ և վճիտ, ինչպես լուսաբացի համանվազը: Հիշողության մեջ պատկերացրեց նա և մի ուրիշ պատկեր—ցարական դարաշրջանի վոստիկանությունը և նրան ճնշող հին այդ կոշմարը, մռայլ և ցավատանջ կոշմարը, վորի վերադարձի հեռապատկերը փշաքաղեց նրա մարմինը և մլտաքում, պարզ և վորոշակի, ինչպես բարձրաձայն մեկի հետ խոսեր՝ նա ասաց:

— Յեւ յես ցանկանում եմ, վոր վերադառնա այդ բոլոր հինը:

Մարդիկ տեսան, վոր մեկը, ըստ արտաքին յերևույթին և քայլվածքի վոճին, մի ոտարական, քայլում և բուլվարի ցնծացող ծառների և լիալուսնի նման կախված լամպերի լույսերի տակով, ահաբեկված աչքերով, նյարդացած և հոգեկան ակնբաղխ խռովքով:

Աշխատելով փախչել հետզհետե աճող ցնծությունից և լույսից, պրոֆ. Մելիք-Անդրեասյանը մտավ կողմնակի փողոցներ, բայց իրեն դտավ ավելի կոշմարային մթնոլորտում:

Մի կանացի յերգեցիկ ձայն նրան բարեկց սիրալիր և՝

— Մենակ չե՞ք ձանձրանա, — հարցրեց նրան:

Պրոֆեսորը չպատասխանեց: Գնալով լույսին ավելի մոտիկ, նա նայեց կնոջը: Վերջինս ժպտաց: Այդ ժպտում չկար ուրա-

խուժյան վո՛չ մի ցուք, ընդհակառակը՝
թախծի մի քող նրան դարձնում եր զարմանա-
լիորեն դրավիչ:

— Յես սիրում եմ մենակությունը, —
ասաց պրոֆեսորը:

— Յերեւի դուք պրոբլեմով եք զբաղ-
ված, — ասաց կինը:

— Այո:

Կինը ծիծաղեց, կարծես, միտան մեջ հան-
կարծ ըզխեց մի ջուր, կարկաչեց և հոսեց:

— Դուք յերբ և իցե չե՞ք ուղում լինել
մենակ, — հարցրեց Պրոֆեսորը: Կինը լըջա-
ցավ:

— Յես միշտ ուղում եմ մենակ լինել,
բայց մարդիկ ձանձրանում են մենակ լինե-
լուց, ոտխալված եմ փողոց դուրս գալ և փա-
րատել նրանց տխրությունը, — ասաց նա:

— Բայց չե՞ք վոր դուք...

— Ո՛հ, բռնական ե, — զայրացավ կինը և
հեռացավ:

Փողոցային՝ կինը չի սիրում, յերբ մար-
դիկ դադարաբար չունեն, թե ժամանակն անց-
նում ե արագ, հանկարծ գիշերը կհասնի իր
վախճանին և նա կարող ե զիմամբրեյ լռաա-
րացը մի քանի անավարտ սակարկություն-
ներով:

Պրոֆեսորը նայեց նրա յետեից, մինչև
կորսվեց նա միտում, ապա առաջ քայլեց:

— Բարե՛, պարո՛ն, — հնչեց ուրախ և ան-
շուսպ մի կանացի ձայն:

— Ներեցե՛ք, յես պրոբլեմով եմ զբաղ-
ված,—ասաց պրոֆեսորը:

— Ուրախ եմ, վոր ժամանակս չխե-
ցիք,— նորից հնչեց այն ուրախ և անզուսպ
կանացի ձայնը, և պրոֆ. Մելիք-Անդրեասյա-
նը մնաց մենակ:

.

Առավոտյան պրոֆ. Մելիք-Անդրեասյանը
զարթնեց անորոշ և տարտամ զգացումներով:

ԻԳ

Պրոֆ. Մելիք-Անդրեասյանն ինքը Պարի-
զից մեկնեց զվիցերական փոքրիկ մի քաղաք՝
տեսակցելու եմիգրանտ յեղբոր հետ, փորով-
հետեմ յեղբայրը գրել էր, վոր վո՛չ մի հնա-
րավորություն չուներ Պարիզ դալու:

Նա ճանապարհին մտածեց, թե ք՞նչ հար-
ցեր կարող էր տալ իրեն յեղբայրը և ինքն ի՞նչ-
պես պիտի պատասխաներ: Այդ պատասխան-
ները զոհացուցիչ եյին թվում սկզբում, բայց
հետզհետե սկսեցին հոգեկան տանջանք պատ-
ճառել, նորից մի դիմալին ինչ վոր բան բարձ-
րացամ իր հոգում—դա յերկվությունն էր,
յերկվությունը դեղին և կանաչ աչքերով,
վոր վոչ թե դրսից սողոսկեց իր ներքին աշ-
խարհը, այլ հարություն առավ, ընդհակա-
ռակը, իր ներքին աշխարհից:

Պրոֆեսորը յեղբորը նախապես չեր գրել, թե յերբ և դարձ, ուստի կայարանում վո՛չ-վո՛ք չգիմալորեց նրան։ Կայարանից մինչև յեղբոր բնակարանը նա մտածում էր, թե ի՞նչ պատասխանի յեղբորն առաջին հարցումին։ Այդ հարցումը բնականորեն, անխուսափելիորեն պիտի լիներ կնոջ և զավակի մասին։

Յերբ յերկու յեղբայրները գլիցերական փոքրիկ, լուսավոր և մաքուր սենյակում իրար փաթաթվեցին, համբուրվեցին և նստան դեմ գիմաց՝ յեղբայրը հարցրեց պրոֆեսորին.

— Ինչպե՞ս ազատվեցիր այդ դժոխքից։

— Ի՞նչ դժոխք, — հարցրեց պրոֆեսորը, հաստատ համոզված լինելով այժմ, վոր դրժոխք եմիդրանտի լեզվով նշանակում է խորհրդային յերկիր։

— Ինչո՞ւ ճես ասում, այստեղ լրտեսներ չկան, — հեղեկեց յեղբայրը։

— ...

— Վերջապես մենք ամեն բան գիտենք։

— Ի՞նչ գիտեք, — հանկարծ հարցրեց պրոֆեսորը դայրացած, բայց զուսպ։

— Մենք գիտենք, թե ի՞նչ չարչարանքներ են ավելի քեզ։

— Ի՞նչ չարչարանքներ։

— Բանտ, և այլն։

Պրոֆ. Մեյիք-Անդրեասյանն ասեց։

Բա՞նտ: Յ՞երբ: Հանկարծ նա սկսեց բարձրա-
ձայն հռհռալ:

— Ինչո՞ւ յես հռհռում:

— Բանտ և այլն... Իսկ ի՞նչ ե այդ և
այլնը:

— Հարցաքննություն գրեթե յերեք օրը
մի անգամ:

Մեկիք—Անդրեասյանի հռհռոցը դարձավ
գրոտեսկ:

Եմիգրանտն այդ հռհռոցից զգաց թունա-
վոր խոցեր իր մարմնի վրա: Վորքան խորը,
վորքան այրող կարոտով սպասել եր իր յեղ-
բորը, ինչքան նա ուրախացել եր նրա ազա-
տության առթիվ, լցվել եր մանկական խըն-
դությամբ, բայց ահա նա հռհռում ե, հռհռ-
ում ե ինչպես դեվը, հռհռում ե իր վրա, իր
զաղափարների, իր մարտիրոսության վրա:

Նա այդպես ել արտահայտվեց: •

— Դու ծաղրում ես իմ մարտիրոսագրու-
թյունը, Միքայել:

Հռհռոցն իսկապես դարձավ դիվային:

— Ի՞նչ մարտիրոսագրություն...

— Վե՛րջ տուր, բավական ե...

Պրոֆեսորը չեր կարողանում դադարեց-
նել ծիծաղը, բայց ի վերջո լրջացավ, լայն
մի տխրություն, ինչպես թանձրացյալ շաղա-
խը, պատեց նրան:

— Ինչպե՞ս ես ապրում դու այստեղ,—

Հարցրեց Միքայիլը վերջապես յեղբայրական
կարեկցությամբ:

— Վատ եմ տպւում, չա՛տ վատ:

— Ի՞նչ տեսակետից:

— Տեսեստիան:

— Ձե՞ն ուզում քեզ ընկերները, քո կու-
սակցությունը:

— Ե՛հ, ամէլի մեծ դադաններ կան, ինձ
լան չեն թողնում, — պատասխանեց եմիզ-
րանոր դրեթե լացակումած, նկատի չառնե-
լով այն հեղնությունը, վորով արտասանեց
պրոֆեսորը «ընկերներ» և «կուսակցություն»
բառերը: •

Տիրեց լռություն:

Եմիզրանոր բաճկոնի կոճակի հետ եր խա-
ղում, իսկ պրոֆեսորը նայում եր լուսամու-
տից դուրս և դիտում եր փողոցի յերթեկեր,
մտածելով ինչ վոր:

— Իսկ դու չե՞ս հետաքրքրւում քո ընտա-
նիքով, — հարցրեց պրոֆեսորը:

— Վո՛չ:

— Ինչո՞ւ:

— Քո՛ւ պատճառով:

Պրոֆեսորն ապչեց:

— Յես քեզ չեմ հասկանում:

— Իմ ընտանիքը, քաղաքական դժբախտ
պայմանների պատճառով, թողի քո խնամ-
քին, իսկ դու ի՞նչ արիր:

— Կերակրեցի նրան:

— Շնորհակա՛լ եմ, — հեղնեց եմիզրան-
տը, — այս մասին չե իմ խոսքը:

— ?:

— Տղաս կոմսոմոլիստ ե այժմ, ճի՞շտ ե:

— Այո՛, ճիշտ ե:

— Ապա դու չամաչեցի՞ր, վոր նրան թույլ
տվիր, նրան, իմ վորդուն, դառնալու կոմսո-
մոլիստ:

— Վո՛չ:

— ...

— Վո՛չ միայն թույլ եմ տվել, այլ քաջա-
լերել եմ:

— Քաջալե՞րել ես:

— Այո, քաջալերել եմ, վորպեսզի քեզա-
նից ավելի բարձր մարդ դառնա հասարակու-
թյան համար, դառնա ավելի պետքական,
ավելի բարոյական, ավելի պատվավոր:

— Ի՞նչ լավ կլինե՞ր, մենք իրար չտեսնե-
յինք:

— Վո՛չ, ավելի լավ չեր լինի, յես չեմ
սիրում պատրանքը, յեթե մենք իրար չտեսնե-
յինք, յես պիտի շարունակեյի կարծել, վոր
իմ յեղբայրը մի պատվավոր մարդ ե:

— Մի՞քայե՛լ:

— Վո՞րտեղից իմացար, վոր յես բան-
տարկված եմ, հարցաքննված ամեն յերեք ուրը
մի անգամ:

— Մենք ստույգ տեղեկություններ ունենք

այդ մասին: Քեզ բանտարկել են իմ կնոջ և վորդու համար:

— Ստում ես դու, այդպիսի տեղեկություն չի կարող լինել, դու ինքդ ես սարքել, վորպեսդի յերևաս մարտիրոս:

— Միքայել, դու ինձ անպատվում ես:

— Դու քեզ ես անպատվում, խեղճ մարդ:

Եմիգրանտը լսեց: Նրա հոգու դռանը բաղխվեց մի ուժգին ձայն— «Ճիշտ ե յեղբայրըդ, այդ սուտը դու յես հնարել»:

— Նու, մոռանանք այս բոլորը: Յես կարծում եմ, վոր այստեղ ապրելն ավելի լավ ե, քան Պարիզում, խորհուրդ կտայի այս տեղ ապրել,—սուսց եմիգրանտը:

— Վո՛չ:

— Պարիզում դժվար կլինի տնտեսապես:

— Տնտեսապես և ամեն բանով, մանավանդ բարոյապես, ավելի լավ կլինի ապրել Յերևանում:

— Պիտի վերադառնա՞ս,— ապշահար հարցրեց յեղբայրը:

— Այո՛:

— Նո՛ւ, ապենք իմ սխալը դու չես գործի, թողնել կնոջ...

— Վո՛չ մի կնոջ հարց չկա:

— Ապա՞:

— Յես քո սխալը չեմ գործի, քո քաղաքական սխալը:

— Ի՞նչ, բոլշևի՞կ դառնայի:

— Ուրախությամբ կընդունեյին քեզ կուսակցութեան մեջ, — հեգնեց պրոֆեսորը:

— Մեր ընկերներէց բոլշևիկ դարձողներ յեղան:

— Այո՛, յեղան, բայց բոլշևիզմը կարիերիստներին չատ չի սնուցանում:

— Միքայել, կրկնում եմ, լավ կլիներ մենք իրար չտեսնեյինք:

— Այո՛, լավ կլիներ, յերեւի եւ չենք տեսնի իրար:

— Ինչո՞ւ:

— Մեր ճանապարհներն այլ են:

— Այլ են...

— Յես պատկանում եմ մարդկութեան առողջ մասին:

— Վո՞րն ե առողջությունը:

— Մարդուն չչաճագործելը:

— Ծիծաղելի յե:

— Ի՞նչը:

— Ամեն բան:

— Ծիծաղելի յե, — կարծես, կրկնեց պրոֆեսորը:

— Ի՞նչը:

— Դո՛ւ:

— Միքայել, մեր ճանապարհներն այլ են:

— Այո՛, այո՛, այլ են:

Պրոֆ. Մելիք-Անդրեասյանը դուրս յեկավ եմիգրանտ յեղբոր սենյակից: Արտասահմանում լինելու ամբողջ ժամանակամի-

Ջոյում վո՛չ մի ժամանակ իրեն աշնքան ոտա-
րտի չե՛ր զգացած, վո՛րքան յեղբոր սենյա-
կում և դրանից դուրս, գլխերահիան փոքրիկ
քաղաքի խաղաղ փողոցներում:

Կանգնած փոքրիկ քաղաքի միակ հրա-
պարակում, կես գիշերային պայծառ աստղե-
րի տակ, նա տխրություն զգաց մինչև հոգու
խորքը: Ի՞նչն էր, վոր նրան այդպես տխրեց-
նում էր: Վերջնական բաժանո՞ւմը յեղբորից:
Վո՛չ: Նրան տխրեցնում էր խորհուրդների
յերկրի հիշողությունը: Ահա այդ յերկիրը
սրտակերացալ իր սուաջ ամբողջ մերկու-
թյամբ:

Քայլեց նա առաջ, մտալ մի փողոցից
մյուսը և, յերբ հանկարծ նրան թվաց, վոր
նալք ճեղքում է նորից կապույտ ծովը դեպի
խորհուրդների, յերկիրը՝ փարատվեց նրա
տխրությունը, աստղերը թափվեցին նրա
սրտի վրա և գլխերահիան անսահման խաղաղ
և կապույտ գիշերը յերգեց նրա հոգում:

ԻԴ

Առավոտյան նա մեկնեց Պարիզ:

ԻԵ

Անցալ մի ամիս:

Անցալ լուռ, տանջալից յերազներով և
մտորումներով:

.
.
.

Մի առավոտ նա վորոշեց այլևս չդնալ պրոֆ. Ֆրանսուա դը Մոնեյի մոտ: Նրանք վերջին անգամ բաժանվել էին իրարից ձե-
վական քաղաքավարությամբ, թերևս հար-
կավոր եր դեթ մի անգամ ևս այցելել նը-
րան և ասել, վոր այլևս չի գալու, բայց
պրոֆ. Մելիք-Անդրեասյանը վորոշեց չկրել
քաղաքավարության տանջանքը և վերջ տալ
իր այցելություններին: Նրան այլևս անհան-
դուրժելի յեր դառնում ֆրանսիացի պրոֆե-
սորի գոռոզությունը, վոր բղխում եր այն
խորը համոզմունքից, թե ֆրանսիացին ըն-
տրված ժողովուրդ ե: Պրոֆ. Մելիք-Անդրեաս-
յանի ինտերնացիոնալ զգացումներին՝ նա պա-
տասխանել եր հեզնանքով և լպիրշ թերահա-
վատությամբ, իսկ խորհուրդների յերկրի նոր
աշխարհ կառուցելու խնդրին, վորը պրոֆ.
Մելիք-Անդրեասյանը դրեյ եր պրոֆ. դը Մո-
նեյի առաջ, թունավոր ծաղրով եր վերաբեր-
վել:

Պրոֆ. Ֆրանսուա դը Մոնեն Արևմտյան
Յեվրոպայի պատմության հայտնի մասնա-
գետ եր: Պրոֆ. Մելիք-Անդրեասյանը նրա
հետ կապված եր 19-րդ դարու պատմական
մի շարք անցքերի դոկումենտալ պարզաբան-
ման համար:

— Դուք յերբևիցե չե՞ք մտածել աղքատ-

տության մասին, մարդկային ֆիզիկական
թշվառության մասին, վոր ծնունդ և առնում
կապիտալիստական սիստեմից, — հարցրել եր
նրան պրոֆ. Մելիք-Անդրեասյանը, վորին
պրոֆ. դը Մոնեն պատասխանել եր կտրուկ և
վերջնական՝ վոչ:

— Ինչո՞ւ:

— Կարելի՞սր չե:

— Չե՞ք կարծում, վոր պատմությունը
դատակարգային պայքարի պատմություն և:

— Վո՞չ, պատմությունն ազգերի ար-
ժանատկատվության պայքարի պատմություն
և:

Այն մարդը, պրոֆ. Մելիք-Անդրեաս-
յանը, վոր խորհուրդների յերկրում համառ,
ներքին և յուր պայքար եր մղել պատմու-
թյան մարքսիստական ըմբռնման դեմ, Յեվ-
րոպայում, չմիման մեջ մտնելով բուրժուազի-
այի իդեոլոգիաների հետ՝ իրեն գտավ մի նոր
մարդ, զգաց, վոր իր մեջ ներծծվել եր շատ
ավելին՝ քան ինքը կարծում եր: Յեվ հուսա-
խափած բուրժուական դեմոկրատիայից,
վորն իր լավագույն յերազն եր հանդի-
սացել յերկար տարիներ, ավելի և ավելի խո-
րացավ հասարակական այն հարաբերություն-
ների հասակը, վոր գոյություն ունեւ բուր-
ժուազիայի բացարձակ տիրապետության
չրջանում: Այն պահին, յերբ նա պրոֆ. դը

Մոնեյին հարց եր տալիս աղքատության պրոր-
լեմի մասին՝ ինքը ևս այդ մասին լայնորեն և
խորապես չեր մտածել։ Մարդկային աղքա-
տության, մարդկային ստեղծագործական
մեծ զանգվածների աղքատության մտածումը
չատանգամ եր խուժել նրա իմացականու-
թյան մեջ, բայց նա յետ եր մղել այն ան-
գութ, անողորմ պայքարով, բայց այժմ ինքը
ևս սկսեց մտածել այդ մասին, և նրա առաջ
պատկերացավ, հեռավորության մեջ, խոր-
հուրդների պրոլետարիատի հերոսական ճիգը՝
լուծելու վերջնականապես աղքատության
հարցը։

Ձգիմադրելով այդ մտածումներին՝ պր-
որֆ. Մելիք-Անդրեասյանն սկսեց տեսնել աչ-
խարհն իր բացարձակ մերկությամբ։

Նա տեսավ, վոր Յեվրոպան, վորի սիր-
տըն եր համարվում Պարիզը, բռնված է շա-
հագործման ահավոր տենդով, խաբում են
բոլորը, բոլորը, ամեն ինչ չափվում է շահա-
գործման աստիճաններով, վորքան շատ է շա-
հագործում մեկը, այնքան բարձր է նրա
պատիվը։

Հալչում եր մարդկային ստեղծագործող
տարրի կյանքը, հալչում եր, ինչպես մոմը
հնոցում։

Նա տեսավ գործադուրկների մասսան,
վոր սոված, ատելությամբ լցված, բայց ան-
զոր և թշվառական՝ թափառում եր մեծ քա-

դաքի փողոցներում, դեռի ափին, պարսպի տակ, նա հանդիպեց բացի ժողովրդական մեծ զանգվածներից, բանվորներից ու արհեստավորներից, նաև մտավորականների և արվեստագետների, վորոնք առանց հույսի վորեւ նշույլի, թափառում էին անհանգրվան՝ ապրելով մի մեծ և դարավոր կուլտուրայի մայրամուտի մորմոքը:

Վորքան նա տեսավ այս բոլորը, ամելի ու ամելի մանրամասնորեն սկսեց տեսնել խորհրդային յերկրի աշխատանքը, նա սկսեց հիշել ամեն մի փոքրիկ իրողություն և նրա խոշորագույն արժեքը: Առաջին որից, յերբ նա վորտը դրեց Յելրոպա, ինքնաբերաբար նա արտասանեց. «Պրոլետարիատը կառուցում է... չե՞ վոր բուրժուազիան ևս կառուցել և և շարունակում է կառուցել»: Պրոֆ. Մելիք-Անդրեասյանն այժմ սկսեց ըմբռնել այդ յերկու կառուցումների տարբերությունը, սկսեց ըմբռնել յերկու դասակարգերի ձգտումի խորագույն տարբերությունը:

Մի յերեկո, Պարիզի ցնծուն մի յերեկո, նա հանդիպեց բանվորական մի մասնայի, վոր փողոցում վորտի նման պայթեցնում էր «Ինտերնացիոնալը»: Վոչ մի յերդ նրան այնքան ընտանի և այնքան հարազատ չեր թվացել, վորքան այդ յերդը: Կանգնած մայթի վրա, աքացիայի մի ծառի տակ, յերբ բանվորական մասսան սնցավ նրա առաջից «Ինտեր-

նացիոնալի» հաղթական հնչյուններով՝ պրոֆ. Մելիք-Անդրեասյանի աչքերը լցվեցին արցունքով: Նա զգաց, վոր մի քանի կաթիլ տաք արցունքը, բղխած տխուր սրտի թագուն խորքերից, թեթևացնում եր իրեն ծանր մի կոշմարից:

Յերկար ժամանակ եր, ինչ նա իրեն հանցավոր եր զգում, իբրև խորհուրդների յերկրի քաղաքացի, մի մարդ, վորին հավատացել էյին խորհուրդները, վորին տրված եր բարձրագույն պատիվ, գործուղվել եր Յեվրոպա, վորի ազնվության մասին չեյին կասկածել վո՛չ մի բոպե, ահա ինքը դավաճանում եր այդ յերկրի դեմ, այդ յերկրի հեղափոխական, հեղոսական պրոլետարիատի դեմ:

.
.
.

Ի՛հ

— Հարկավ, հարկավ ամենահարգելի պրոֆեսոր, յես ձեր առաջ դնում եմ ամբողջ ճշմարտությունը:

— Բայց չե՞ վոր ճշմարտությունն ասելու համար...

— Այո, — ընդմիջում ե դիմացինը, — ճշմարտությունն ասելու համար հարկավոր ե արիություն, բայց դուք կարծո՞ւմ եք, վոր

յես արիություն չունեմ, ճիշտ է, այն ժամանակ յուզի, իմ յությունն ուրիշ նպատակ ուներ, վերջապես չի կարելի ամեն ինչ, ամեն մարդու ներկայությամբ ասել, ամեն բան հարկաւոր է նկատի ունենալ, հանգամանքները, նրություններ կան... վերջապես կա և անձնական շահի խնդիր, իհարկե, յես անձնական շահի համար չե, մոր աշակէս ասած, չասացի այն, ինչ հարկաւոր եր ասել, բայց վերջապես...

— Հասկանում եմ, հասկանում եմ ձեզ:

— Ուրախ եմ, վերջապես 'Հանգամանքները'...

Բուրժուական 'Հարաբերությունների բարդ, խճճւած այս 'Հանգույցներում' նրա հոգին սկսեց ձգտել դեպի 'Հարաբերությունների պարզությունը, դեպի խորհրդային կենդանի:

Ահա խոսում է մեկը, քաղաքամարի, հուլիսական բուրժուական ձեականություններով, հաճելի յե մինչև անգամ նրա լեզուն, զգաղնե, և տալիս նա, մոր խորապէս 'Հարգում է դիմագինե մարդկային արժանապատիւթյունը, բայց կեղծ է, սուտ է, չի կարելի հավատալ նրա խոսքի մո'չ մի յեշտին:

Յեմ արութ. Մեկը-Միգրեասյանը ծանրություն եր դրում իր ուղեղում, թաց, ամ-

պամած և մռայլ յերկնքի կապարն եր կախ-
վում նրա իմացականության վրա:

Կարոտը, կարոտը խորհրդային հայրենի-
քի, այրում եր նրա վողջ եյությունը, վորո-
նում եր նա ծանոթ դեմքերը, վորոնում եր ծա-
նոթ կենցաղը, ծանոթ միջավայրը, ցանկա-
նում եր լսել քարտաշի մուրճի հնչյունը, վոր
մի քանի տարի յեր, ինչ նրա ականջին յեր-
դում եր բոլոր փողոցներում, մինչև անգամ
իր դասարանի լուսամտի տակ:

— Յես պետք ե վերադառնամ, պետք ե
անպայման վերադառնամ, յես չեմ կարող
բաժանել ինձ մարդկության լավագույն մա-
սից, չեմ կարող բաժանվել այն կուլտուրա-
յից, վոր ամբողջովին հագեցված ե բարձր
գաղափարականությամբ:

Այս վորոշումը տալուց հետո՝ պրոֆ. Մե-
լիք-Անդրեասյանն ազատվեց ծանր մի կոշմա-
րից: Այդ կոշմարը յերկվությունն եր, յերկ-
վությունը դեղին աչքերով: Այլևս վո՛չ մի
տատանում չեր տանջում նրա հոգին: Այդ վո-
րոշումից հետո բարձրացավ նրա տրամա-
դրությունը, մինչև անգամ սկսեց հաճույք
զգալ Յեվրոպայի (ցնծուն քաղաքից, սկսեց
ստանալ այդ քաղաքի գիշերից խորը բավակա-
նություն: Պարիզի գիշերը զվարթ եր և լու-
սավոր: Այդ վորոշ. մից հետո՝ նա որորվում
եր մի դուրեկան հեռանկարով—ահա՛ ծովը,
ահա՛ նավը, վոր մոտենում ե հեռավոր հա-

լազատ ափերին, վորտեղ ծաղկում է լիմոնն
ու նարինջը և փայլում են վոսկյա անդորրու-
թյամբ:

ԻԸ

Յեղբորն այն յերկտողին, թե՛ մի անգամ
ևս արի ինձ մոտ, խոստանում եմ քաղաքա-
կան վո՛չ մի խնդրի մասին չխոսել, միայն
յեղբայրական տեսակցություն, պրոֆ. Մե-
լիք-Անդրեասյանը պատասխանեց հետև-
յալը—

Հարություն

Քեզանից բաժանվելուց հետո՝ յես յեն-
թարկվեցի ավելի և ավելի փոփոխություն-
ների: Այժմ ինձ բոլորովին չես ճանաչի: Յես
չուտով վերադառնում եմ իմ յերկիրը: Իմ
յերկիրը: Արյան կապն ինձ չի վողևորում,
մենք բարեկամներ չենք, վո՛չ միայն բարե-
կամներ չենք, այլ յերկու թշնամի բանակ-
ների զինվորներ: Յես վերադառնում եմ իմ
ռազմաճակատը: Յեթե մի ուր յերկու բա-
նակները զործնական ճակատամարտի մղվեն,
ինձ կգտնես քո դեմ զենքը ձեռիս: Փախչում
եմ Յեվրոպայից, փախչում եմ ստից, կեղ-
ծավորությունից, շահագործման պատերազ-
մից, փախչում եմ իմ տարիների յերազած
դեմոկրատիայից, փախչում եմ գորոզու-
թյունից, վոսկեզոծ կեղտից:

Իմ առաջին պարտականությունը պիտի լինի ավելի և ավելի քաջալերել Բաբկենին իր հասարակական կյանքում, մղել նրան նոր աշխարհի կառուցման աշխատանքին՝ առավել վոգեկորությամբ և առավել անկեղծությամբ:

Այս աշխարհը նրանն է:

Կվերադառնամ արդյոք Յեվրոպա: Այո՛, կը վերադառնամ Խորհրդային Յեվրոպա: Արդյոք չո՛ւտ կվերադառնամ: Այո՛: Յես ապրեցի Յեվրոպայի ահեղ մայրամուտը, յես լսեցի մարմարյա սյուների ճարճատյունը: Բուրժուազիան թողնում է փառահեղ ավերակներ...

Յես վերադառնում եմ, լուսաբացի թըմբուկն ինձ կանչում է:

Հոգիս ուրախ է, թեթևացած բոլոր ծանրություններից: Միայն մի կասկած յերբեմն ինձ տանջում է—արդյոք կլինե՞մ նոր աշխարհի արժանի և սկիտանի քաղաքացի:

Առաջին մեր տեսակցությունը տխուր յեղավ, յերկրորդ տեսակցությունը կարող է լինել յեղերական: Թույլ տուր այս մի քանի տողով վերջացնել մեր կապը:

Միֆայել

ԻՅ

Յերևանը բոլորում եր վոսկյա աշունը, խաղողի հատիկները շողում եյին իբրև հողի աստղերը, յերբ պրոֆ. Մելիք-Անդրեասյանը վերադարձավ:

Առաջին որն եր, վոր Յեւենա Բեգլարով-
նան վառել եր պատի վառարանը:

Պրոֆ. Մելիք-Անդրեասյանը բաց արավ
պահարանը, վերցրեց իր որագիրը և, գցելով
վառարանի մեջ, նստեց դիմացը և սկսեց դի-
տել իր հին կյանքի ամենանվիրական հիշա-
տակի բոցավառումը: Յեւենա Բեգլարովնան
նստած եր կողքին ապշահար և անորոշ
ղզացումներով: Հրկիզված թղթերի բոցը
նրանց դեմքերը ներկել եր կարմրադեղին
դույնով:

Պրոֆեսոր Միքայել Մելիք-Անդրեաս-
յանը, անձկությամբ դիտելով հրկիզված
թղթերի բոցը, շշնջում եր.

— Հնից վճռեմ հիշատակ չպետք և
մնա...

Յերբ թղթերը մոխրացան, պրոֆեսորը
դարձավ կնոջը և ասաց.

— Լենոչկա, յես փորձեցի քեզ մենակ
թողնել, ների՛ր ինձ:

Յեւենա Բեգլարովնան գլուխը հանգչեց-
րեց ամուսնու կրծքի վրա և սպիտակ թևե-
րով դրկեց նրան:



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0040563

ԳԻՆԸ 1-80 ԿԱԶՄԸ 70

A $\frac{\bar{I}}{5448}$

Սեկ օրինակ